*Նախաբանը՝ դոկտոր Օրալ Ռոբերտսի*

# ԻՆՉՊԵ՞Ս ԴՈՒՐՍ ԳԱԼ ՓՈՍԻՑ



*Բարբարա Պլիլար*

# ԻՆՉՊԵՍ
# ԴՈՒՐՍ ԳԱԼ ՓՈՍԻՑ

*Բարբարա Պլիլար*

ԻՆՉՊԵ՞Ս ԴՈՒՐՍ ԳԱԼ ՓՈՍԻՑ

Հրատարակված է «Ինսայթ» Հրատարակչական
ընկերության կողմից
8801 Ս. Յել, տուն 410
ք. Տալսա, Օկլահոմա նահանգ
(918) 493-1718

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս գրքի տեքստի ամբողջական կամ մասնակի
վերարտադրումը՝ առանց «Ցանք և հունձք» ծառայության
անմիջական գրավոր թույլտվության, համարվում է արգելված և
անօրինական՝ համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների
հեղինակային իրավունքների մասին օրենքի:

Հեղինակային իրավունքները՝ © 1999թ.
«Ցանք և հունձք» ծառայություն,
Փ/Ա 270635
Սան Դիեգո, Կալիֆոռնիա նահանգ, 92198-2635 ԱՄՆ
Թարգմանված է անգլերենից, 2017թ.

Եթե չկան այլ նշումներ, բոլոր աստվածաշնչյան մեջբերումները
Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.):

Կազմի ձևավորումը՝ «Վորկին-Պերկինս» և Շոն Սթարմ,
Ռոբերտս Լիարդոնի ծառայություն

# ԸՆԾԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Նախ և առաջ, իմ ամուսնուն՝ Ռասելին: Նրա մեծ տեսիլքը ոգեշնչել է ինձ՝ կյանքում հասնելու նորանոր բարձունքների: Նա միշտ իմ մեջ տեսել է ավելին, քան ես՝ նրա մեջ, և խրախուսել է օգտագործել իմ ներուժը: Շնորհակալություն, որ իմ կողքին ես եղել և սիրել ես ինձ կյանքիս ամենախավար պահերին, երբ իմ ապագան խոստումնալից չէր:

Իմ ծնողներին՝ Սի Փի և Դիքսի Բրաուններին, ովքեր սովորեցրել են ինձ լինել իմ խոսքի տերը և չհանձնվել կյանքում, այլ ջանասիրաբար աշխատել և լավագույնս կատարել իմ գործը:

Իմ հորը, ով ագարակատեր էր, և ով սովորեցրեց ինձ ցանքի և հունձքի սկզբունքը՝ ցանել լավագույն սերմը և սպասել հունձքին: Ես հետևում էի, թե ինչպես էր նա տարեց տարի ցանում իր լավագույն սերմը և միշտ ստանում լավագույն հունձքը, և տեսնում էի, որ այդ սկզբունքը կրկին և կրկին գործում էր:

Դոկտոր Օրալ Ռոբերտսին, ով իր գրքերի միջոցով սովորեցրեց ինձ հավատքի, ցանքի և զոհաբերության մասին:

Իմ դուստրեր Շերիլին, Միշելին և Քրիսթիին. դուք հրաշալի և գեղեցիկ կանայք եք: Ես անչափ սիրում եմ ձեզ, և հուսով եմ, որ իմ կյանքն օրինակ է եղել ձեզ համար, որ հետևեք ձեր համոզմունքներին՝ անկախ հանգամանքներից:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Շերիլին՝ հիվանդությանս ընթացքում իմ փոխարեն «խրամատում կանգնելու» և այդքան երիտասարդ հասակում ընտանիքի հոգսն ամբողջությամբ իր վրա վերցնելու համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Միշելին՝ ուժեղ և գեղեցիկ կին լինելու համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Քրիսթիին՝ ամեն օր իմ կողքին լինելու, ինձ հետ աշխատելու, ինձ աջակցելու և իմ կյանքի հրաշալի մասնիկը կազմելու համար:

Իմ աշխատակազմին, ովքեր հրաշալի պարգևներ ունեցող մարդիկ են, և ովքեր արեցին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր՝ այս գրքի աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

Իմ օգնական հովիվներ Լեյն և Էլիզաբեթ Կորկամպներին և Սանդրա Բիբբին, ովքեր այս նախաձեռնության ընթացքում եղել են իմ կողքին իրենց աղոթքներով, խորհուրդներով, սիրով և խրախուսանքով: Նրանց անվերջ սերը, համբերությունը և հավատարմությունը շարունակ աջակցում են մեզ:

Իմ հովիվներին Տեխաս նահանգի Էլ Պասո քաղաքից՝ Չարլզ և Ռոշել Նիմեններին, ովքեր ամենասկզբից սովորեցրել են մեզ, որ «**Աստված մեր կողմն է**», և եթե մենք ունենանք «**Լայն մտածելակերպ, մեծ հավատք և մեծ սպասում**», մեր սպասումը կիրականանա:

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնին և Եղբայր Հեգինին, ով սովորեցրեց մեզ, որ հավատալ՝ նշանակում է գերազանցության չափանիշ սահմանել, նաև՝ վստահել ու հնազանդվել Աստծո Խոսքին:

Ջին և Ալբերտա Դեվիդսոններին, ովքեր հնազանդվեցին Աստծուն և եկան աղոթելու ինձ համար 1979 թվականին, երբ ծանր հիվանդ էի:

Իմ լավ ընկերուհի Շիրլի Լորենցին... քո ընկերությունը, աղոթքները և սերն այնքա՜ն կարևոր են եղել ինձ համար:

Իմ հրաշալի ընկերուհուն՝ Նեվա Լեմային, ով նույնպես լրիվ ժամանակվա ծառայության մեջ է: Նա օգնության եկավ և ճիշտ ժամանակին Երկնքից խոսք տվեց: Նա միշտ քրոջ պես է եղել ինձ համար:

Մեր բոլոր հրաշալի ընկերներին, ովքեր աղոթում են և աղոթել են մեզ համար մեր կյանքի տարբեր փուլերում... դուք անգնահատելի՜ եք:

Փեթի Ալեքսին, ով սովորեցրեց ինձ աղոթել Աստծո Խոսքով՝ մինչև պատասխան ստանալը: Դոկտոր Էդ և Նենսի Դյուֆրեյններին, ովքեր

խրախուսել են ինձ չհանձնվել, և Սուրբ Հոգով առաջնորդվող մարդկանց մեծ օրինակ են եղել:

Օդրի Վեդերլիին, ում հավատքի աղոթքները, ընկերությունը, սերը, գթասրտությունը և խրախուսանքը կրկին ու կրկին օրհնել են ինձ:

Մեր հրաշալի ծառայող-ընկերներին...

Ջոն Բիվերին, ով կայծ վառեց իմ ներսում՝ կյանքիս հաջորդ փուլին անցնելու համար:

Եվ Ռոբերտս Լիարդոնին, ում հաղորդակցությունը, ոգեշնչումը և խիզախությունը դրդեցին ինձ հասնել ավելի մեծ բարձունքների և խորությունների՝ Աստծո հետ:

Նրանց, ովքեր ոգեշնչում էին մեզ՝ փնտրելու լավագույնը, տեսնելու լավագույնը և լինելու լավագույնը:

Ռոբերտս Լիարդոնին՝ այն բանի համար, որ խրախուսեց ինձ գրել այս գիրքը և գնալ դեպի ազգերը:

Եվ մեր եկեղեցական համայնքին՝ Աստծուն նվիրված մարդկանց, ովքեր ձգտում են իրենց երազանքներին և իրագործում են Աստծուց տրված ներուժն իրենց կյանքում:

Մեր թոռներին, որոնց շնորհիվ մենք ցանկանում ենք ապրել, որպեսզի տեսնենք, թե ինչպես են իրականացնում իրենց երազանքները, նաև՝ թողնել ժառանգություն, որին նրանք կարող են հետևել:

Նրանց, ովքեր ընթերցում են այս գիրքը... իմ ցանկությունը, հույսը և աղոթքն է, որ դուք համոզվեք, որ միշտ հույս կա, և երբեք չպետք է հանձնվել:

Ի սրտե՝

Բարբարա Պլիլար

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Նախաբան*..........................................................................9

*Հանձնարարականներ*..........................................................11

*Ներածություն* ...................................................................15

*Գլուխ 1.* Իմ փորձառությունը «փոսում» .............................................19

*Գլուխ 2.* Ինչպե՞ս ազատվեցի «փոսից» ..........................................29

*Գլուխ 3.* Տեղորոշե՛ք ձեր «փոսը»...........................................37

*Գլուխ 4.* Դավիթը և «փոսը»................................................43

*Գլուխ 5.* Հովսեփը և ծրագիրը ..............................................57

*Գլուխ 6.* Սա ձե՛ր գլուխն է....................................................73

*Գլուխ 7.* Աստծո բարեհաճության օրհնությունները...........................79

*Գլուխ 8.* Ինչպե՞ս Աստված բերեց մեզ մեր

Խոստման երկիրը ..................................................91

# ՆԱԽԱԲԱՆ

Մեծ ուրախությամբ ցանկանում եմ ներկայացնել Բարբարա Պլիլարի նոր հրաշալի գիրքը, որը կոչվում է «Ինչպե՞ս դուրս գալ փոսից»:

Ժամանակ առ ժամանակ գրեթե բոլորիս կյանքը հայտնվում է խառնաշփոթ վիճակում: Բարբարան օգտագործում է Աստծո Խոսքը և իր հավատքի փորձառությունը, որպեսզի ցույց տա մեզ Աստծո ճանապարհը՝ փոսից դուրս գալու և այլևս դրանում չհայտնվելու համար:

Ես հավատում եմ, որ դուք կարևոր և օգտակար դասեր կքաղեք Բարբարայից և նրա յուրօրինակ գրելաոճից:

Ռասել և Բարբարա Պլիլարները էվելինի և իմ ընկերներն են: Մենք հավատում ենք նրանց և նրանց ծառայությանը, որը մեծ հաջողություն ունի:

Աստված առատորեն օրհնի ձեզ «Ինչպե՞ս դուրս գալ փոսից» գրքի անժամանակյա ճշմարտություններն ընթերցելու և յուրացնելու ընթացքում:

– Օրալ Ռոբերտս,
*Հունիս, 2000թ.*

Մահ հիշեցնող գոյությունից դեպի հարություն և կյա՛նք: Բարբարան վերապրել է փոսում լինելու անհուսությունը, երբ այն մարդիկ, ովքեր պետք է օգնեին նրան, սխալ որոշումներ էին կայացրել, և նա հայտնվել էր «անհույս» վիճակում: Բայց Աստված գործե՛ց նրա կյանքում: Այս կյանքով լի կինը հաղթեց. նա հուսաց Աստծուն՝ իր Ապաստանին, և Աստված բարձրացրեց Բարբարային՝ իր կայացրած ճիշտ որոշումների միջոցով:

Ինչպիսին էլ լինի ձեր կյանքը, Բարբարայի փորձառությունը և իմաստությունն ուժ կհաղորդեն ձեզ, որ հասնեք ավելի մեծ հաջողությունների և հաղթանակների: Ինձ դուր է գալիս նրա պնդումը. «Դուք չեք կարող հասնել հաղթանակի նոր մակարդակի, քանի դեռ լսում եք նրանց, ովքեր որոշել են մնալ պարտության մեջ: Անհաջողակ մարդիկ մշտապես փորձում են պահել ձեզ իրենց մակարդակի վրա: Մի՛ համակերպվեք դրան: Որոշո՛ւմ կայացրեք դուրս գալ այդ միջավայրից»:

Դուք կարող եք անել դա՝ օգտվելով Բարբարայի անձնական հաղթանակների մասին իմաստուն խորհուրդներից և վկայություններից, որոնք նա զետեղել է «Ինչպե՞ս դուրս գալ փոսից» գրքում:

*– Բոբբի Ջին Մերք,*
*Հունիս, 2000թ.*

# ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Հովիվ Բարբարան և ամուսինը՝ հովիվ Ռասելը, ծառայում են Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքում: Նրանք կառուցում են ուժեղ եկեղեցի, որը կենտրոնացած է միսիայի վրա: Նա և ամուսինը հաճախ են ուղևորվում այլ երկրներ՝ քարոզելու և սովորեցնելու համար: Նրանք բարձրացնում են մարդկանց՝ տալով հավատքի հաստատուն ժառանգություն և օգնելով հասկանալ Աստծո Խոսքի սկզբունքները: Այս գիրքը գրվել է հենց այդ կարողությունների հիման վրա: Ուրախ եմ հանձնարարել այս գիրքը նրանց, ովքեր հավատքով կանգնած՝ սպասում են խոստման, մարգարեության կամ հունձքի:

Ե՛վ Բարբարան, և՛ նրա ամուսինը եղել են իմ «Հոգևոր կյանք» Աստվածաշնչյան համալսարանի դասախոսական կազմում և օգնել են ինձ դրա հիմնադրումից ի վեր (1992թ.): Նրանք հավատարիմ ընկերներ են, ովքեր հաստատ կանգնել են պայքարների մեջ և նվիրված են եղել Աստծո ծրագրին, Խոսքին և սրտին:

Այդ գրքի ճշմարտությունը, անկեղծությունը և հորդորները կծառայեն ձեզ և փոփոխություններ կառաջացնեն ձեր կյանքում:

Ի սրտե՝

*Ռոբերտս Լիարդոն*

Փորձություններն ու նեղությունները մեր լավագույն ուսուցիչներն են: Դրանք սովորեցնում են մեզ այն, ինչը մենք, մեր կարծիքով, արդեն գիտենք: Մեծ փորձությունները մեծ հավատք են ստեղծում:

Շատերը սխալմամբ համարում են, որ իրենք հաղթող են՝ միայն երբ իրենց կյանքում չկան փորձություններ և նեղություններ: Այնուամենայնիվ, հաղթանակն այն է, երբ ձեր աչքերը, ականջները և սիրտն ուղղված են Հիսուսին, և դուք հարում եք Աստծո Խոսքին՝ ի դեմս բոլոր հակառակությունների: Նույնիսկ ինքներդ ձեզնից սպասում ունենալն է պարտություն: Ինչպես մի հեղինակ գրում է. «Նայի՛ր շուրջդ և կհուսահատվես. նայի՛ր ինքդ քեզ և կվհատվես. բայց նայի՛ր Հիսուսին և կապրես հանդարտության մեջ»:

Մարդու մարմնում կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրա պարտությունը երաշխավորելու համար, բայց հավատացյալի սրտում կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրա հաղթանակն ապահովելու համար: Երբ մարդն ապրում է մարմնավոր ձևով, նրա կյանքը լի է նեղություններով և դառնությամբ, բայց երբ մարդն ապրում է իր սրտից՝ ուղղելով կյանքն ու ուշադրությունն Աստծո Խոսքին, նրա վարձատրությունը կլինի հաղթանակ, ուրախություն, խաղաղություն և օրհնություններ:

Առաջին հերթին մենք պետք է ոչ թե պայքարենք՝ այս կյանքում բարձրանալու համար, այլ գիտակցենք, որ Աստված բարձրացրել է մեզ և նստեցրել Քրիստոսի հետ՝ Երկնքում (տե՛ս Եփես. 2.6):

Դուք օրհնված կլինեք՝ կարդալով այս թանկ անձնավորության, կնոջ և ծառայողի գիրքը: Ինչպես նա, դուք նույնպես կհասկանաք, որ որքան էլ խորը լինի նեղությունների փոսը, Աստծո խորություններն ավելի՛ն են:

*Նենսի Դյուֆրեյն*

Բարբարա Պլիլարի տապանաքարի վրա կարող էր գրված լինել. «Չէ՞ որ ես ասում էի, որ ծանր հիվանդ եմ»: Բարբարայի կյանքը լրջորեն վտանգված էր, և նա հուսահատորեն օգնության կարիք ուներ: Նա նման էր այն մարդուն, ով ասում է. «Իմ բժիշկը վեց ամսվա կյանք է տվել ինձ»: «Ի՞նչ է պատահել»,– հարցնում է նրա ընկերը: «Երբ ես չկարողացա վճարել նրան, նա ևս վեց ամիս ժամանակ տվեց ինձ»: Բարբարայի բժիշկը չուներ պատասխան նրա իրավիճակի վերաբերյալ:

Ի՞նչ էր կատարվում այս մկրտական կնոջ հետ: Նա քաղցկե՞ղ ուներ, նրա մոտ ստաֆիլակոկային վարա՞կ էր, նրա երիկամներից մեկը պետք է հեռացվե՞ր, թե՞ նրան ավելի վատ բան էր սպասվում: Ի՞նչ կլիներ, եթե նրան փոխպատվաստեին միզուղիների անզսպությամբ տառապող մի մարդու երիկամ: Բարբարայի իրավիճակը հեշտ չէր, և նա իսկապես ծանր հիվանդ էր: Նա ընկել էր փոսի մեջ և չէր կարողանում ո՛չ դուրս գալ դրանից, ո՛չ էլ, նույնիսկ, ոտքի կանգնել:

**«Ինչպե՞ս դուրս գալ փոսից»** գիրքը թուլասիրտների համար չէ: Այն պատմություն է մի հրաշալի քրիստոնյա կնոջ մասին, ով բառացիորեն պայքարում էր իր կյանքի համար: Դուք կգնահատեք այն անկեղծ և ծանրակշիռ ոճը, որով Բարբարան ներկայացնում է իր հանգամանքները: Կա մի բարի լուր. մենք կարող ենք սովորել Բարբարայի փորձառությունից և կիրառել միևնույն սկզբունքները՝ հաղթանակի հասնելու համար:

Բարբարա Պլիլարը կենդանի օրինակ է, որ ինչպես Հովսեփի դեպքում, Աստված ցանկանում է դուրս հանել մեզ փոսից և տեղափոխել պալատ: Նա կիրառեց Աստծո Խոսքը՝ որպես ձեռնարկ հաղթանակի հասնելու մասին:

Նա և ամուսինը՝ Ռասը, հովվում են «Ցանք և հունձք» եկեղեցին, որը համազգային ճանաչում է ստացել գերազանցությամբ ծառայելու և կյանքեր փոխելու շնորհիվ: Բարբարան և Ռասը հաստատուն բնավորության տեր և անկեղծ մարդիկ են:

Շնորհակալ եմ Աստծուն, որ պատշաճ համարեց ծանոթացնել ինձ Պլիլարների ընտանիքի հետ: Ինձ համար պատիվ է անվանել Բարբարային իմ ընկերը և սովորել նրա օրինակից:

Դուք կխրախուսվեք, երբ կարդաք այս գիրքը: Այն «ժամանակին ասված խոսք» է, որովհետև ժամանակն է, որ բոլորս դուրս գանք փոսից:

Խանդավառությամբ՝

*Վիլյամ Վան Քրաուչ,*
Փոսից դուրս եկողներից մեկը,
«Վան Քրաուչ Քոմյունիքեյշնս»

Տարիներ շարունակ ճանաչում եմ Բարբարա Պլիլարին և նրա ամուսնուն՝ Ռասելին: Բարբարան Աստծո Խոսքի գերազանց ուսուցիչ է: Նրա՝ «Ինչպե՞ս դուրս գալ փոսից» գիրքն անհրաժեշտ ուղերձ է եկեղեցու համար: Բարբարան փայլուն կերպով խոսում է մեղքի «փոսի» մասին և ցույց է տալիս, թե ինչպես պետք է դուրս գալ: Այս գիրքը գերազանց զենք է հաղթանակի համար:

*Ջոն Բիվեր՝*
Հեղինակ և քարոզիչ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## *Բարբարա Պլիլար*

Դուք երբևէ զգացե՞լ եք ձեզ այս գրքի կազմին պատկերված կնոջ պես: Ես զգացել եմ: Միգուցե ձեր ամուսինը զանգահարել է ձեզ վերջին րոպեին և ասել, որ ընթրիքի է գալու կարևոր հյուրի հետ, բայց տունն ամբողջովին թափթփված է, երեխաները բղավելով վազվզում են միջանցքով, իսկ շունը և կատուն փորձում են հասնել նրանց ետևից: Դուք փորձում եք ինչ-որ բան ձեռնարկել վերջին րոպեին. ձեռքով խարխափում եք դարակի մեջ՝ փնտրելով այնպիսի բան, ինչը կարելի էր պատրաստել մինչև հյուրի գալը, բայց թվում է՝ ոչինչ չի ստացվում: Դուք մտածում եք. «Ինչպե՞ս եմ ամեն ինչ հասցնելու»:

Սա կարող է պատահել և՛ կանանց, և տղամարդկանց հետ. համոզված եմ, որ ձեր կյանքում եղել են օրեր, երբ թվացել է, թե ձեզ ներկայացված պահանջներն անհաղթահարելի են: Հնարավոր է՝ դուք մեծ ճնշում եք զգացել աշխատավայրում, ամուսնության մեջ, ընտանիքում, դպրոցում կամ համալսարանում, որևէ հարաբերության մեջ, ձեր ընտանիքի անդամներից մեկի հիվանդության կամ մահվան պատճառով, կամ էլ անսպասելի ամուսնալուծության արդյունքում:

Իմ կյանքում հաճախ է պատահել, որ ճնշումներն անհաղթահարելի են թվացել: Նույնիսկ եղել են պահեր, երբ ես մտածում էի, որ կենդանի չէի մնա մինչև օրվա վերջը: Միգուցե հիմա՝ երբ այս գիրքը ձեր ձեռքին է, դուք զգում եք նո՞ւյնը:

Նկատե՞լ եք, որ երբեմն խնդիրներն ինքնաբերաբար են լուծվում: Դուք պառկում եք քնելու այնպիսի զգացումով, որ ամեն ինչ անհույս է, բայց հաջորդ առավոտյան արթնանում եք ավելի լավ զգացողությամբ և նորովի եք նայում ձեր իրավիճակին: Այնուամենայնիվ, լինում են այլ դեպքեր, երբ թվում է՝ ձեր խնդիրներն է՛լ ավելի են բարդանում. դուք այնքա՜ն եք լաց լինում, որ թվում է՝ այլևս չեք կարող լաց լինել, բայց ձեր ներսում դեռ այնքա՜ն ցավ կա: Հենց այդ ժամանակ է, որ թվում է, թե դուք «փոսի մեջ» եք, և չգիտեք, թե ինչպես դուրս գալ:

Երբեմն մարդիկ «փոսն են ընկնում» իրենց սխալ որոշումների պատճառով: Այլ դեպքերում, մարդիկ հայտնվում են սարսափելի իրավիճակներում ո՛չ իրենց մեղավորությամբ. նրանք վճարում են այլ մարդկանց սխալների համար: Միգուցե ասեք. «Ես եղել եմ այդ իրավիճակում, և նույնիսկ այդտեղ արված լուսանկար ունեմ՝ իմ խոսքերն ապացուցելու համար»:

Մեր որոշումները կարող են դժվարություններ ստեղծել մեր կյանքում, բայց կա մի ոգևորիչ ճշմարտություն. կարիք չկա, որ մնանք դրանցում: Ամեն իրավիճակից ե՛լք կա:

Սխալ որոշումները նման են սխալ շրջադարձերի: Եթե զգում եք, որ սխալ շրջադարձ եք արել, դուք դեռ ժամանակ ունեք, որ կանգ առնեք և նայեք քարտեզին, կամ հարցնեք ճանապարհին ինչ-որ մեկից: Դժբախտաբար, ոմանք հրաժարվում են խոստովանել, որ սխալ շրջադարձ են արել: Նրանց հպարտությունը թույլ չի տալիս կանգ առնել և հարցնել ճիշտ ճանապարհը: Նման դիրքորոշում ունեցող մարդիկ սովորաբար պտտվում են նույն տեղում և վատնում են իրենց ժամանակը, որը պետք է օգտագործեին՝ իրենց նպատակին հասնելու համար, իսկ նրանցից ոմանք այդպես էլ տեղ չեն հասնում:

Եթե կյանքում սխալ շրջադարձեր եք արել, դուք, իհարկե, չեք կարող վերադարձնել ժամանակը և ամեն ինչ նորից սկսել, բայց կարող եք որոշում կայացնել, որ կմոռանաք ձեր անցյալի մասին և կնայեք ձեր ապագային: Ձեր կյանքի ուղղությունը փոխելու ամենալավ ժամանակը՝ ներկան է: Եթե դուք գնացել եք սխալ ճանապարհով, ժամանակն է, որ վեր կենաք ձեր տեղից և ետ դառնաք դեպի ճիշտ ճանապարհը: Եթե չգիտեք՝ ինչ անել, իմաստուն խորհուրդ հարցրեք

ինչ-որ մեկից, ով կարող է օգնել ձեզ: Մի՛ դիմեք այնպիսի մարդու, ով նույն վիճակում է, կամ՝ ավելի վատ վիճակում. խոսե՛ք այնպիսի մարդու հետ, ով հաղթանակով է դուրս եկել կյանքի փոթորիկներից:

Միգուցե ժամանակն է փոխել ձեր ընկերներից մի քանիսին, եթե նրանք դրական ազդեցություն չեն թողնում ձեր կյանքում: Դուք չեք կարող հասնել հաղթանակի նոր մակարդակի, քանի դեռ լսում եք նրանց, ովքեր որոշել են մնալ պարտության մեջ: Անհաջողակ մարդիկ մշտապես փորձում են պահել ձեզ իրենց մակարդակի վրա: Մի՛ համակերպվեք դրան: Որոշում կայացրեք դուրս գալ այդ միջավայրից: Որոշում կայացրեք դուրս գալ այն փոսից, որում գտնվում եք: Եթե դուք պետք է շարունակեք ձեր կրթությունը, քա՛յլ արեք: Մասնակցե՛ք անհրաժեշտ դասընթացների և շարժվե՛ք դեպի ձեր նպատակը: Դուք կարող եք սիրել մարդկանց՝ չլինելով այն «փոսում», որում նրանք են:

Որոշո՛ւմ կայացրեք դրական փոփոխություններ կատարել ձեր կյանքում: Մի՛ հեռացեք այս աշխարհից՝ թողնելով աղքատություն, ստեր, խաբեություն, կախվածություն ալկոհոլից, և չթողնելով ոչինչ ձեր երեխաներին:

## ՎԵՐՑՐԵ՛Ք ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ

Նույնիսկ եթե ձեր մարմնում լուրջ հիվանդություն են հայտնաբերել, և բժիշկները ոչնչով չեն կարող օգնել, չպետք է հանձնվեք: Միգուցե թվա, թե դուք չեք ունենա շատ օրեր ապագայում, բայց դուք ունեք ա՛յս օրը: Ձեր այսօրվա որոշումները կարող են դրականորեն փոխել ձեր և ձեր սիրելիների կյանքը: Մի՞թե դուք անցկացնելու եք ձեր վերջին ժամերը, օրերը կամ շաբաթները՝ միայն խղճալով ձեզ և դժբախտացնելով ձեզ շրջապատող մարդկանց: Ինչպե՞ս եք ուզում հիշվել մարդկանցից: Ավելի լավ չէ՞ բարի հուշեր թողնել ձեր սիրելիներին: Ավելի լավ չէ՞ նյութական ժառանգություն թողնել նրանց, որը կօգնի կառուցել իրենց ապագան: Ընտրությունը ձե՛րն է:

Եթե դուք չեք կարողանում ներել ինչ-որ մեկին, հիմա՛ է ժամանակը, որ փոխեք դա և շտկեք ձեր հարաբերությունները: Եթե կարծում

եք, որ բարկությունը և դառնությունը կհատուցեն այն ամենի դիմաց, ինչ այդ մարդն արել է ձեր հանդեպ, դուք չարաչար սխալվում եք: Միակ մարդը, ում այդ վիրավորանքը ցավ է պատճառում, դո՛ւք եք: Ժամանակն է արձակել այդ կապանքը և թողնել այն: Ներելով մարդկանց՝ դուք կօգնեք ձեզ և ձեր ապագային:

Մեկ անգամ ինձ ասացին. «Միգուցե դուք չապրեք...»: Այս բառերը շատ սարսափելի են, հատկապես եթե դուք ամուսնացած եք և ունեք փոքրիկ երեխաներ, ովքեր կախված են ձեզնից: Ամիսներ շարունակ ես ունեի առողջական լուրջ խնդիրներ և չգիտեի, թե ինչ էր կատարվում ինձ հետ: Ես մտածում էի. «Ի՞նչ պետք է անեմ: Ի՞նչ ընտրություն ունեմ հիմա»:

Գլուխ 1-ում ես պատմում եմ իմ անձնական «փոսի» մասին, որն առաջացել էր մահացու հիվանդության պատճառով: Ես հավատում եմ, որ այն կխրախուսի ձեզ և կլցնի ապագայի հանդեպ հույսով: Քանի դեռ կա կյանք, կա հույս: Մի՛ հանձնվեք՝ անկախ այն բանից, թե ինչպիսի լուր եք ստացել:

Ոմանք չեն ցանկանում խրախուսել ձեզ, որպեսզի «կեղծ հույսեր» չտան: Նրանք գերադասում են, որ դուք ընդունեք բացասական լուրը և «հաշտվեք այն փաստի հետ, որ մահանալու եք»: Ես նկատի չունեմ, որ դուք չպետք է անհրաժեշտ հրահանգներ տաք ձեր գործերի վերաբերյալ կամ չպետք է կտակ պատրաստեք. այս բաները դուք առանց այդ էլ պետք է արած լինեք: Այնուամենայնիվ, սխալ է ասել մարդուն, որ նա պետք է հանձնվի և ընդունի ներկա հանգամանքները: Ավելի լավ է ես հեռանամ այս կյանքից՝ սրտումս ունեցած հավատքով, քան հուսահատված և պարտված վիճակում: Իսկ դո՞ւք: Նույնիսկ եթե ձեր խոսքերն այն մասին, որ ես անզոր եմ փոխելու իրավիճակը, ճիշտ են, *մի՛ ասեք ինձ, որ ես հույս չունեմ:* Աստծո հետ միշտ հույս կա, և իմ հույսը հենց Աստված է:

– Հովիվ Բարբարա Պլիլար,
*Փետրվար, 2000թ.*

# • ԳԼՈՒԽ 1 •

## *Իմ փորձառությունը «փոսում»*

– Դու չպետք է օգտագործես այդ ասեղը,– առարկեց բժիշկներից մեկը:– Նա շատ վտիտ կազմվածք ունի, և այդ ասեղը կարող է անցնել նրա միջով:

– Ես գիտեմ, թե ինչ եմ անում,– կոպտորեն պատասխանեց մյուսը:

Ես զգում էի լարվածությունը նրանց միջև:

Բժիշկներն արեցին վերջին պատրաստությունը և երեսնիվայր դրեցին ինձ հետազոտության մետաղյա սեղանին: Փակելով աչքերս՝ ես նյարդայնորեն սպասում էի ասեղի ցավոտ ծակոցին:

– Մի՛ լարվեք,– ասաց նրանցից մեկը,– սրսկումը պետք է որ հարաբերականորեն անցավ լինի:

Սիրտս սկսեց արագորեն բաբախել: Ես ցնցվեցի, երբ սուր մետաղյա ծայրը հանկարծակի ծակեց մեջքիս ստորին հատվածը: Իմ անհանգստությունն ավելանում էր, մինչ նրանք ավելի ու ավելի խորն էին տանում ասեղը՝ անցնելով մկանային շերտից և թափանցելով այնտեղ, ինչը, նրանց կարծիքով, իմ երիկամն էր:

Հանկարծ զգացի, որ նրանք ինչ-որ բան սխալ էին անում: Ասեղը շատ խորն էր մտել: Ես խայթոց զգացի որովայնումս: Առանց զգուշացնելու՝ մի թեթև վեր բարձրացրի մարմինս և ներքև նայեցի հենց

այն պահին, երբ ասեղի սուր մետաղյա ծայրը դուրս եկավ որովայնիս ստորին հատվածից: Նրանք վրիպե՛լ էին:

– Բժի՛շկ... – ասացի երերուն ձայնով:

Սենյակը սկսեց պտտվել: Ես գլխապտույտ ունեցա ցնցումից՝ մինչ բժիշկներն արագորեն ետ էին քաշում երկար մետաղյա ասեղն իմ որովայնից: Նրանց ձայները հեռավոր և աղոտ էին:

«Մի՞թե այդ ասեղն անցավ իմ ամբողջ մարմնով,– մտածեցի ես:– Ինչո՞ւ նրանք չցավազրկեցին ինձ»:

Այդ ծանր և լարված փորձությունը սկսվել էր գրեթե վեց ամիս առաջ: Մենք ապրում էինք Սան Ֆրանցիսկոյի շրջանում: Ամուսինս՝ Ռասելը, աշխատում էր մի խոշոր տրանսպորտային ընկերությունում. ես գործակալ էի աշխատանքի տեղավորման գործակալությունում, իսկ ազատ ժամերին զբաղվում էի դիմահարդարմամբ Սան Ֆրանցիսկոյի ծովախորշի տարածքի խոշոր հանրախանութներում: Մեր երկու ավագ դուստրերը՝ Շերիլը (15տ.) և Միշելը (13տ.) դպրոցականներ էին, իսկ կրտսեր դուստրը՝ Քրիսթին (5տ.) դեռ մանկապարտեզում էր:

Ես այն մարդկանցից չեմ, ովքեր հաճախ վատ զգացողություն են ունենում, բայց այդ օրը խիստ թույլ էի զգում ինձ, երբ տուն վերադարձա աշխատանքից: Այդ ժամանակ ոտքիս վրա մի բան նկատեցի, որը նման էր միջատի խայթոցի: Ես ուշադրություն չդարձրի՝ մտածելով, որ դա ինչ-որ միջատի կամ սարդի խայթոց էր: Այնուամենայնիվ, մինչև շաբաթվա վերջ, այսպես կոչված, «միջատի խայթոցն» ափսեի չափ դարձավ: Հենց այդ ժամանակ ես սկսեցի անհանգստանալ: Ամուսինս՝ Ռասելը, սովորում էր երեկոյան ժամերին, և այդ երեկո նա տանը չէր: Ես զանգահարեցի դեղատուն՝ խորհուրդ հարցնելու համար:

– Ձեր ասածը շատ ավելի լուրջ է թվում, քան միջատի խայթոցը, տիկի՛ն,– պատասխանեց դեղատան աշխատակցուհին,– դուք պետք է անմիջապես հիվանդանոց զանգահարեք:

Նրա ձայնի հրատապությունը տագնապ առաջացրեց իմ մեջ: Առանց ժամանակ կորցնելու՝ ես անմիջապես զանգահարեցի հիվանդանոց: Երբ նկարագրեցի իմ ախտանշանները հերթապահ բուժքրոջը, նա պնդեց, որ անմիջապես հիվանդանոց գնամ: Ես թողեցի երե-

խաներին մեր ավագ դստեր մոտ և մեքենայով շտապ գնացի դեպի մեր տեղական հիվանդանոցի շտապ օգնության սենյակ:

Տեղ հասնելուն պես՝ բուժքույրերն ուղեկցեցին ինձ հետազոտության սենյակ և ընդհանուր ստուգում անցկացրին: Երևում էր, որ նրանք մտահոգված էին իմ ախտանշանների պատճառով: Մի քանի րոպե անց ներս մտավ բժիշկը: Նա նշտարով նմուշ վերցրեց իմ վերքից և հեռացավ հետազոտության սենյակից՝ ստուգումներ կատարելու համար: Նա վերադարձավ ոգևորված տեսքով:

– Տիկին Պլիլա՛ր, դուք մի թեթև արյան թունավորում և ստաֆիլակոկային վարակ ունեք: Ես ամպիցիլինի հինգ հաբ կտամ, կխմեք օրը մեկ անգամ, և ամեն ինչ լավ կլինի:

Ես թեթևություն զգացի բժշկի ասածից և տառացիորեն հետևեցի նրա հրահանգներին: Այնուամենայնիվ, իմ վիճակը չէր բարելավվում: Երկու շաբաթ անց ձեռքիս վրա մեկ այլ վերք հայտնվեց: Այն մեծացավ՝ հասնելով գրեթե առաջինի չափին: Ներսումս գիտեի, որ դա լուրջ խնդիր էր, բայց երբ այդ մասին պատմեցի ինձ բուժող բժշկին, նա ասաց, որ իր կարծիքով՝ ոչ մի լուրջ բան չկա:

– Հավանաբար, դա հարբուխի տեսակ է,– ասաց նա:– Դուք նաև ինչ-որ տեսակի փոքրիկ վարակ ունեք: Ի վերջո, այն ինքնաբերաբար կհեռանա ձեր մարմնից: Կարիք չկա, որ անհանգստանաք:

Նա կրկին սխալվեց: Երկու շաբաթ անց հայտնվեց երրորդ վերքը, որն ուղեկցվեց ուժգին տենդով. ջերմությունս բարձրացավ մինչև 41 աստիճան: Ես գնացի բժշկի մոտ երրորդ անգամ, և նա տվեց ինձ նույն ախտանշանը.

– Հավանաբար, դուք սուր հարբուխի կամ ալերգիայի ինչ-որ տեսակ ունեք,– հանդարտ և անփույթ ձայնով ասաց նա:

Ես գիտեի, որ դա շատ ավելի լուրջ էր, բայց չկարողացա համոզել իմ բժշկին ավելի մանրակրկիտ ձևով հետազոտել ինձ: Նա համոզված էր, որ իմ անհանգստությունը չափազանցված էր:

Շուտով է՛լ ավելի ծանր ախտանշաններ հայտնվեցին: Ամեն օր աշխատանքի գնալիս ես ջերմակ էի դնում մեջքիս ստորին հատվածին՝ մեջքիս ցավերի պատճառով: Ես նույնպես բռաչափ ասպիրին էի օգտագործում, բայց իմ տենդագին վիճակը չէր անցնում: Ես տուն

էի գալիս և նստում տաք ջրով լի լոգարանի մեջ, իսկ քնելիս բարձրացնում էի էլեկտրական ծածկոցի ջերմաստիճանն ամենաբարձրի վրա, բայց չէի կարողանում տաքանալ: Ես վառվում էի բարձր ջերմությունից, բայց միևնույն ժամանակ ասես սառչեի ներսումս:

## ԱՅԼԵՎՍ Ո՛Չ ՄԻ ԲԺԻՇԿ

Ես այնքա՛ն էի գնացել բժշկի մոտ, որ դա արդեն նվաստացուցիչ էր դարձել:

«Միգուցե ինձ մոտ սևամաղձություն է սկսվել,– մտածեցի:– Այլևս բժշկի չեմ գնա: Երևի թե ես երևակայում եմ այս ամենը»: Ամուսինս և ես վերջերս էինք դարձել վերստին ծնված քրիստոնյաներ և ոչինչ չգիտեինք աստվածային բժշկության մասին: Ես միայն գիտեի, որ վատ զգացողություն ունեմ, և որ պետք է ամեն օր աշխատանքի գնամ տանջալի ցավերով՝ մեջքիս ստորին հատվածում:

Գրեթե վեց ամսվա ընթացքում այս ախտանշաններն անարգել տանջում էին ինձ: Ես փորձում էի կատարել առօրյա պարտականություններս, բայց անում էի դրանք շատ ավելի մեծ դժվարությամբ: Շուտով մարդիկ նկատեցին, որ ես շատ հիվանդ տեսք ունեմ: Այն, որ ես լուրջ առողջական խնդիրներ ունեի, ակնհայտ էր դառնում բոլորի համար՝ բացի իմ բժշկից:

## ՆՐԱՆՔ ԽԱԲԵՑԻ՜Ն ԻՆՁ

Այդ ժամանակ մենք որոշեցինք հյուրընկալվել իմ ամուսնու քրոջ՝ Շերոնի մոտ, ով ապրում էր Հավայան կղզիներում: Երբ մենք նրանց տանն էինք, նա մի կողմ տարավ ամուսնուս և ասաց.

– Բարբարան սարսափելի տեսք ունի:

– Այո՛, ես գիտեմ,– համաձայնեց նա:– Ես բժշկի եմ տարել նրան, և բժիշկն ամեն անգամ ասում է, որ նա հիվանդ չէ:

– Ի՞նչ, եթե տանենք նրան իմ բժշկի մո՞տ,– առաջարկեց նա:

– Չեմ կարծում, որ կգնա. նա արդեն հոգնել է բժիշկներից,– պատասխանեց Ռասելը:

– Միշելի ականջը ցավում է,– ասաց Շերոնը:– Միգուցե մենք օգտագործենք դա՝ Բարբարային բժշկի տանելու համար: Բացի այդ՝ ճիշտ չէ, որ Միշելը ցավացող ականջով սուզվող տա այստեղի ջրերում:

Նրանք այդպես էլ արեցին: Երբ մենք հիվանդանոցում էինք, հանկարծ բժիշկը հետաքրքրվեց իմ վիճակով: Միայն այդ պահին ես հասկացա, որ ամուսինս և նրա քույրն արդեն խոսել էին նրա հետ: Ես դժկամորեն ցույց տվեցի նրան ոտքիս և ձեռքիս վրայի վերքերը:

– Կարծում եմ՝ ես պետք է նմուշ վերցնեմ դրանցից մեկից՝ հետազոտելու համար,– ասաց բժիշկը:

«Կրկին նույնը»,– մտածեցի ես:

Մի վերքից վերցրած նմուշը հետազոտելուց հետո նա վերադարձավ և ասաց, որ իմ առողջությանը վտանգ չի սպառնում:

– Գիտեք,– ասաց նա,– եթե դուք՝ ամերիկուհիներդ, հոտազերծիչ միջոցներ չօգտագործեիք, դուք ոչ մի խնդիր չէիք ունենա:

Ես այնպե՜ս բարկացա:

– Կարծում եմ՝ ոտքիս վրայի վերքը նույնպես դրանից է առաջացել,– կոպտորեն պատասխանեցի ես:

Բարկությունից կաս-կարմիր դեմքով և ինձ նվաստացած զգալով՝ շրջվեցի և արագ դուրս եկա նրա սենյակից:

– Այլևս այդպիսի բան չանե՛ս,– ասացի ամուսնուս, երբ իջնում էինք աստիճաններով:

## ԽԻՐՈՊՐԱԿՏԻԿԸ ԼՈՒՅՍ Է ՍՓՌՈՒՄ

Որոշ ժամանակ անց, երբ մենք դեռ Հավայան կղզիներում էինք, Շերոնը խնդրեց ինձ՝ իր հետ գնամ խիրոպրակտիկի մոտ: Նա պետք է հանդիպեր այդ բժշկին, և ուզում էր ցույց տալ ինձ նրան՝ հույս ունենալով, որ նա կկարողանար օգնել ինձ ազատվել մեջքիս ստորին հատվածի ցավերից: Մեզ տեսնելուն պես՝ խիրոպրակտիկը նայեց աչքերիս և հասկացավ իմ վիճակի լրջությունը:

– Տիկի՛ն, դուք ծանր հիվանդ եք,– ասաց նա:

– Այո՛, ճիշտ է:

– Դուք գիտե՞ք, թե որն է խնդիրը:

– Ո՛չ, ես արդեն մի քանի անգամ բժշկի եմ գնացել, և բժիշկները շարունակ ասում են ինձ, որ ես հարբուխով հիվանդ եմ: Նրանք ասում են, որ իմ վիճակն ինքնաբերաբար կկարգավորվի, բայց արդեն վեց ամիս է՝ այս վիճակում եմ:

– Վերադարձե՛ք ձեր բժիշկների մոտ և ասե՛ք, որ խնդիրը կա՛մ ձեր երիկամների, կա՛մ լյարդի մեջ է: Թող նրանք հետազոտեն ձեզ, և համոզված եմ՝ նրանք կգտնեն ձեր հիվանդության իրական պատճառը:

Դա առաջին խելամիտ ախտորոշումն էր, որը ես ստացա: Այն շատ խրախուսեց ինձ, և երբ տուն վերադարձա, այցելեցի իմ բժշկին: Բայց երբ պատմեցի նրան խիրոպրակտիկի ասածը, նա պարզապես ծիծաղեց:

– Տիկի՛ն Պլիլար, մենք արյան հետազոտություն ենք անցկացրել,– ասաց նա ամբարտավան տոնով:– Ձեր արյան սպիտակ գնդիկների քանակը նորմալ է: Վստահեցնում եմ, որ ձեր մարմնում մի տեսակ աննշան վարակ կա: Այն դուրս կգա ձեր օրգանիզմից: Ավելի քան հավանական է, որ դա ինչ-որ տեսակի ալերգիա է:

Ես շփոթված հեռացա նրա գրասենյակից և որոշեցի այլևս չգնալ նրա մոտ: Ես հետզհետե ինձ զգում էի՝ ինչպես աստվածաշնչյան այն կինը, ով տասներկու տարի շարունակ արյունահոսում էր: Աստվածաշնչում գրված է, որ նա *«շատ բժիշկներից շատ չարչարվել էր, և իր ամբողջ ունեցածը ծախսել և ոչինչ օգուտ չէր ստացել, այլ է՛լ ավելի էր դեպի վատը գնացել»* (Մարկոս 5.25,26):

## ԻՆՁ ԹՎԱՑ, ԹԵ ԴՈՒ ՄԱՀԱՑԵ՛Լ ԵՍ

Անցավ ևս մի քանի ամիս: Մի օր ամուսինս հավաքույթից տուն եկավ ուշ ժամին և փորձեց սողոսկել անկողնու մեջ՝ առանց ինձ արթնացնելու: Թույլ լույսի ներքո նայելով դեմքիս՝ նկատեց, որ գունատ եմ, ես ասես սառած լինեի: Նա մատը մոտեցրեց քթիս՝ ստուգելու համար, թե արդյո՞ք շնչում եմ, և երբ ոչինչ չզգաց, տագնապեց: Նա արագորեն վեր կացավ անկողնուց և վառեց լույսը:

– Ի՞նչ ես անում, Ռասել,– կիսաքուն հարցրի ես:

– Ինձ թվաց, թե դու մահացե՛լ ես,– ձայնս լսելուն պես նա թեթևացավ:– Հերի՛ք է: Մենք պետք է գտնենք ինչ-որ մեկին, ով հավատում է, որ դու հիվանդ ես: Հագնվի՛ր, ես հիվանդանոց եմ տանելու քեզ:

Այդ գիշեր Ռասելը տարավ ինձ շուրջօրյա աշխատող մի բժշկական կենտրոն: Նա որոշել էր դիմել մասնագետի, ով պրոֆեսիոնալ ախտորոշում կկատարեր: Այդ հիվանդանոցի բժիշկը ներս մտնելուն պես ասաց.

– Պարո՛ն Պլիլար, ձեր կինը շատ հիվանդ է:

– Ես գիտեմ,– պատասխանեց Ռասելը,– բայց ոչ ոք չի բուժում նրան:

– Դուք պետք է հիվանդանոց տանեք ձեր կնոջը առավոտյան, որպեսզի նրան ընդունեն,– ասաց բժիշկը:– Ես թոշակի եմ գնում, և սա իմ վերջին գիշերային հերթափոխն է: Ես չեմ կարող ընդունել նրան, բայց կզանգահարեմ և կպայմանավորվեմ, որ առավոտյան նրան ընդունեն:

## ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԵՎՍ ՄԵԿ ԿԱՐԾԻՔ ԼՍԵԼ

Հաջորդ օրը ինձ հիվանդանոցում ընդունելուց հետո մի քանի մասնագետներ սկսեցին հետազոտությունը: Նրանք պարզեցին, որ իմ երիկամներից մեկը խցանվել է, և գրեթե վեց ամիս է՝ չի գործում:

– Դուք այնքա՛ն բարձր ջերմություն ունեք, որ չգիտեմ, թե ինչպես է ձեր միտքն աշխատում,– բացատրեց բժիշկներից մեկը:– Մենք պետք է հենց հիմա հեռացնենք ձեր չգործող երիկամը:

– Ի՞նչ է նշանակում՝ հեռացնել իմ երիկամը,– առարկեցի ես:

– Բանն այն է, որ երբ երիկամն այդքան ժամանակ դադարում է գործել, այն սկսում է փչանալ: Մենք համոզված ենք, որ դուք քաղցկեղ ունեք: Դուք միանշանակ պետք է վիրահատվեք:

– Սպասե՛ք, բժի՛շկ,– ընդհատեցի ես:– Իմ ընտանիքի անդամներից շատերը մահացել են քաղցկեղից: Ես բավականաչափ տեղեկություն ունեմ այդ հիվանդության մասին, որպեսզի հասկանամ, որ քաղցկեղի բուժումը չի սկսվում մարդկանց «կտրելով»: Քաղցկեղը վիրահատելուց հետո այն կարող է տարածվել: Դուք ուզում եք ասել, որ հաստատ չգիտեք՝ ես քաղցկեղ ունե՞մ, թե՞ ոչ, բայց, միևնույն է՝ որոշել եք վիրահատել ինձ և հեռացնել իմ երիկամը, այնպես չէ՞:

– Այո՛,– պատասխանեց նա:

– Ես համաձայն չեմ դրան:

– Տիկի՛ն, դուք կմահանաք, եթե մենք չվիրահատենք ձեզ:

– Բայց ես համաձայն չեմ,– պնդեցի:– Դուք չեք կարող վիրահատել ինձ՝ քաղցկեղը հեռացնելու համար, քանի դեռ հաստատ չգիտեք, թե ինչ եք անում: Դուք չեք կարող պարզապես մտածել, որ ես քաղցկեղ ունեմ. դուք պետք է հստա՛կ իմանաք դա:

– Ամեն դեպքում, դուք պետք է խոսեք վիրաբույժի հետ: Եվ տեսնենք, թե ինչ կասեք դրանից հետո:

Ես համաձայնեցի, բայց միևնույն է՝ չէի համակերպվում այն մտքին, որ նրանք պետք է հեռացնեին երիկամս: Ավելի ուշ ես իմացա, որ իմ մտահոգությունն անհիմն չէր:

## ԲԵՆ ՔԵՅՍԻ ԿՐՏՍԵՐ

Երբ վիրաբույժը մտավ հիվանդասենյակ, նա կանգ առավ սենյակում դրված հայելու առջև և պարզապես սևեռված սկսեց զննել ինքն իրեն: Այնպիսի տպավորություն էր, որ նա տպավորված էր ինքն իրենով: Նա ձեռքով ետ տարավ մազերը ճակատից և մոտեցավ իմ մահճակալին, ոտքը դրեց մահճակալիս ներքևի ճաղին և ասաց.

– Ես ձեր վիրաբույժն եմ լինելու:

Հանկարծակիի եկած նրա հանդգնությունից՝ ես պատասխանեցի այնքան քաղաքավարի, որքան կարող էի.

– Ի՞նչ եք պատրաստվում անել, բժի՛շկ:

– Ես կտրելու եմ ձեր այս տեղից՝ այս տեղը,– ասաց նա չափից մեծ ինքնավստահությամբ՝ մատնացույց անելով կտրվածքի ուղղությունը:– Մենք կհանենք ձեր երիկամը, քանի որ կարծում ենք, որ դուք քաղցկեղ ունեք:

– Գիտեք, բժի՛շկ, ես չեմ կարող համաձայնել դրան:

– Ինչո՞ւ:

– Դուք պետք է հստակ իմանաք, որ մարդը քաղցկեղ ունի, մինչև նրան վիրահատելը: Ես ուզում եմ խոսել ընտանիքիս հետ այս որոշման մասին և միայն դրանից հետո կրկին կխոսեմ ձեզ հետ:

Ավելորդ է ասել, որ վիրաբույժը տպավորված չէր: Նա հեռացավ բարկացած հայացքով:

Երբ այդ մասին խորհրդակցեցի ընտանիքիս հետ, ծնողներս առաջարկեցին ինձ գնալ մի բժշկի մոտ, ով Տեխասս նահանգում էր: Ինձ դուր եկավ նրանց առաջարկը, բայց այդ ժամանակ մենք ապրում էինք Հյուսիսային Կարոլինա նահանգում, և պետք է երկար ճանապարհ անցնեինք: Ամուսնուս հետ խորհրդակցելուց հետո մենք որոշեցինք, որ դա լավագույն տարբերակը կլինի՝ հաշվի առնելով մեր իրավիճակի լրջությունը:

Մեծ հուզմունքով և շատ արցունքներով՝ ընտանիքիս անդամներն ինձ օդանավակայան տարան և շարժասայլակով Տեխաս գնացող ինքնաթիռ նստեցրին: Ես խրախուսված էի՝ իմանալով, որ շուտով ամուսինս գալու էր Տեխաս՝ ինձ մոտ, բայց ինձ համար դժվար էր մտածել, որ պետք է այդքան հեռու լինեի իմ երեխաներից: Ես անհանգստանում էի՝ մտածելով, թե ինչ էին նրանք անելու առանց ինձ: Ես հակառակվում էի այն մտքերին, որ քաղցկեղ ունեի, և լավագույնս փորձում էի հավատալ, որ շուտով կրկին ընտանիքիս հետ եմ լինելու: Այնուամենայնիվ, ես նույնիսկ գաղափար չունեի, որ ընդամենը մի քանի շաբաթ հետո անցնելու էի կյանքիս մեծագույն փորձությունով:

# • ԳԼՈՒԽ 2 •

## *Ինչպես ազատվեցի «փոսից»*

Բիոպսիան պետք է մասնագետների կողմից կատարվող պարզ քան րոպեանոց պրոցեդուրա լիներ: Նրանք ծրագրում էին երկար ասեղ մտցնել մեջքովս՝ երիկամիս մեջ, և մի քիչ հեղուկ վերցնել՝ ստուգման համար: Տեխասի բժիշկներն աշխարհի ամենալավ մասնագետներից են. այնպես որ, ես միանգամայն վստահ էի, երբ նրանք ասացին, որ պրոցեդուրան անցավ է լինելու, և որ ես նույնիսկ ցավազրկման կարիք չեմ ունենա:

Այնուամենայնիվ, ես սկսեցի անհանգստություն զգալ, երբ բիոպսիայի օրը, երկու ենթադրյալ «մասնագետները» սենյակի անկյունում սկսեցին վիճել ասեղի երկարության մասին: Ես պետք է հասկանայի, որ ինչ-որ բան սխալ էր: Որտեղի՞ց կարող էի իմանալ, որ կատարվելու էր այն, ինչից ես ամենից շատ էի վախենում:

Երբ ասեղի սուր ծայրն առաջին անգամ «դուրս թռավ» որովայնիս ստորին հատվածից, մինչ նրանք որոնում էին իմ երիկամը, ես ուզում էի կսմթել ինձ՝ համոզվելու համար, որ երազ չէի տեսնում: Երբ ասեղը ծակեց մեջքս երկրորդ անգամ, դա մղձավանջից ավելի սարսափելի էր:

Ես ամուր բռնեցի բժշկական սեղանը, մինչ երկար մետաղյա ասեղն անցնում էր իմ մարմնով՝ փնտրելով երիկամս: Այս անգամ

այն ծակեց թոքիս ծայրը: Հասկանալով, որ կրկին վրիպել էին՝ բժիշկներն արագորեն հեռացրին ասեղը և պատրաստվեցին երրորդ փորձին: Նրանք հույս ունեին, որ այս անգամ կհասնեին իրենց նպատակին: Երբ ասեղն անցավ մաշկովս երրորդ անգամ, այն դիպավ ինչ-որ նյարդի, և մարմինս անմիջապես վեր թռավ սեղանից: Ինձ ասես հարվածեին ուժգին էլեկտրական հոսանքով:

Սովորաբար ես շատ դիմացկուն եմ ցավին, բայց արդեն չէի կարողանում դիմանալ: Ես սկսում էի ասեղների բարձիկի պես զգալ ինձ:

Եվս մի քանի փորձից հետո «կտտանքները» վերջապես դադարեցին: Ես մեծ թեթևություն զգացի, երբ այդ բժիշկներն ինձ շարժասայլակով հանեցին միջանցք, որտեղ մայրս, հայրս և ամուսինս սպասում էին ինձ:

– Ուրախ եմ, որ սա ավարտվեց,– թեթևացած մտածեցի ես:

Այդ պրոցեդուրան պետք է տևեր քսան րոպե, բայց այն տևեց մեկ ու կես ժամ: Հետագայում ես իմացա, որ մայրս մի քանի անգամ բուժքույրերի սենյակ էր գնացել և հարցրել էր պրոցեդուրայի՝ այդքան երկար տևելու պատճառը: Նա մեծ իրարանցում էր առաջացրել: Երբ բժշկի օգնականները դուրս բերեցին ինձ հետազոտության սենյակից, մորս համար բավական էր մեկ անգամ նայել երեսիս՝ հասկանալու համար, որ ես անտանելի ցավեր էի զգացել:

Հենց այդ պահին բժիշկներից մեկը նայեց ինձ և վրդովեցուցիչ հայտարարություն արեց.

– Մենք կրկնելու ենք այս պրոցեդուրան,– անսպասելիորեն ասաց նա:– Մենք չկարողացանք վերցնել այն, ինչ անհրաժեշտ է անալիզների համար:

– Ի՞նչ: Դուք երևի կատակո՛ւմ եք,– բարկացած պոռթկացի ես:– Ո՛չ մի դեպքում: Ես չե՛մ վերադառնա այդտեղ և չե՛մ ենթարկվի այնպիսի մարդկանց գործողություններին, ովքեր չեն հասկանում, թե ինչ են անում: Ես այլևս փորձակենդանու դեր չե՛մ կատարի ոչ ոքի համար:

Մայրս նույնիսկ ավելի բարկացավ, քան ես: Երբ գլխավոր բժիշկը եկավ՝ պարզելու ամբողջ իրարանցման պատճառը, մայրս հարձակվեց նրա վրա:

– Ներեցե՛ք,– բարկացած ասաց նա,– դուք ասացիք, որ այս պրոցեդուրան գրեթե անցավ է լինելու, և Բարբարան ցավազրկողի կարիք չի ունենա: Դուք ինքներդ անցե՞լ եք այն:

– Ո՛չ,– պատասխանեց գլխավոր բժիշկը:

– Այդ դեպքում, ինչպե՞ս կարող եք ասել, որ այն ցավոտ չէ: Դուք ասացիք մեզ, որ այն ամենաշատը կտևի ընդամենը քառասունհինգ րոպե, բայց մեկ ու կես ժամից ավելի տևեց: Իսկ հիմա նրանք խնդրում են կրկնել նույն պրոցեդուրան, որովհետև այն անհաջո՛ղ է եղել: Մենք համաձայն չե՛նք:

– Բայց տիկի՛ն Բրաուն, այն անհրաժեշտ է՝ ձեր դստերը ճիշտ ախտորոշում տալու համար: Մենք պետք է բիոպսիա անցկացնենք:

Որոշ ժամանակ վիճելուց հետո մենք վերջապես համաձայնեցինք կրկնել պրոցեդուրան այն պայմանով, որ նրանք ավելի փորձառու մասնագետ կգտնեն: Վերջապես գլխավոր բժիշկը համաձայնեց և կանչեց մի ասիացի մասնագետի, ով եկավ հետազոտման սենյակ և մեկ արագ փորձով ավարտեց բիոպսիան: Մեկ ժամ չանցած նրանք արդեն հետազոտություններ էին անցկացնում ստացված հեղուկով:

Մայրս և ես խիստ զայրացանք, երբ հետագայում իմացանք, որ այսպես կոչված «բժիշկները», ովքեր սկզբում կատարեցին այդ պրոցեդուրան, ընդամենը բժշկական համալսարանի ուսանողներ էին, ովքեր փորձ էին ձեռք բերում ինձ վրա:

## ՀՐԱԺԱՐՎԵ՛Ք ՁԵՐ ԵՐԻԿԱՄԻՑ ԿԱՄ ՄԱՀԱՑԵ՛Ք

Հաջորդ օրը գլխավոր բժիշկը վերադարձավ բիոպսիայի արդյունքներով: Նա և՛ լավ, և՛ վատ լուրեր ուներ:

– Տիկի՛ն Պլիլար, լավ լուրն այն է, որ դուք քաղցկեղ չունեք,– ասաց նա,– բայց սա դեռ վերջը չէ: Դուք ստաֆիլակոկային վարակ ունեք, որը տարածվել է ձեր ամբողջ մարմնով, և ձեր երիկամներից մեկն արդեն վեց ամիս է՝ չի գործում: Մենք պետք է հեռացնենք չգործող երիկամը և անմիջապես հակաբիոտիկներ նշանակենք, այլապես դուք կմահանաք: Դուք բուժվե՞լ եք հիվանդանոցում վերջին վեց ամիսների ընթացքում:

– Ո՛չ:

– Որպես կանոն՝ ստաֆիլակոկային վարակ կարելի է ձեռք բերել միայն հիվանդանոցում կամ որևէ բժշկական հաստատությունում,– բացատրեց բժիշկը:

– Հիմա ես հիշեցի, որ գրեթե վեց ամիս առաջ դուստրս՝ Շերիլը, և ես ատամնաբուժարան էինք գնացել՝ մեր ատամները մաքրելու համար: Նրա մարմնի վրա մի քանի վերք հայտնվեց, որոնք նման էին իմ վերքերին: Նրա վերքերն անցան, իսկ իմը՝ ոչ:

– Հը՜մ, հնարավոր է, որ դուք հենց այդտեղ եք վարակվել: Մենք պետք է ստուգենք ձեր արյունը և փորձենք որոշել, թե ո՛ր հակաբիոտիկն արդյունավետ կլինի այս տեսակի ստաֆիլակոկների դեպքում: Բոլոր հակաբիոտիկները չէ, որ արդյունք կտան: Մենք պետք է անպայման ճիշտ դեղամիջոց ընտրենք, հակառակ դեպքում, այն ավելի կուժգնացնի վարակը: Մենք նաև պետք է անմիջապես հեռացնենք ձեր հիվանդ երիկամը:

## ՀՐԱՇՔԸ, ՈՐԸ ԴՈՒՐՍ ՀԱՆԵՑ ԻՆՁ «ՓՈՍԻՑ»

Որքան ավելի էին բժիշկները խոսում երիկամս հեռացնելու մասին, այնքան ավելի էի անհանգստություն զգում: Ես շարունակ ձայն էի լսում ներսումս. «Չանե՛ս դա»: Երբ բժիշկը շարունակեց համոզել ինձ՝ հիշեցնելով իմ խնդիրը, ես բարկացա և հրաժարվեցի վիրահատությունից: Որքան ավելի էր նա շարունակում, այնքան ավելի համառ էի ես դառնում: Ինչ-որ կերպով ես գիտեի, որ իմ երիկամը չպետք է հեռացվեր: Հենց այն ժամանակ, երբ իմ զրույցը բժշկի հետ վերածվում էր թեժ վեճի, երկու անծանոթ մտան իմ հիվանդասենյակ, և կյանքս հավիտյան փոխվեց:

– Տիկի՛ն Պլիլար, ամուսինս և ես «700 ակումբ»-ից ենք,– դիմեց ինձ անծանոթ կինը:– Մենք լսել ենք ձեր մասին և եկել ենք, որ աղոթենք ձեր բժշկության համար:

Լինելով Մկրտական եկեղեցու հավատարիմ հետևորդ՝ ես միշտ լսել էի, որ նման աղոթքները սատանայից են, հատկապես՝ «լեզուներով աղոթքը»: Այդ պատճառով սկզբում ընդդիմացա նրա առաջար-

կին: Բայց հետո մտածեցի. «Ի՞նչ ես կորցնելու: Միևնույն է՝ դու մահանում ես, իսկ եթե դա սատանայից չէ, կբժշկվես»:

Ի վերջո, ես թույլ տվեցի այդ կնոջն աղոթել ինձ համար: Երբ նա դրեց ձեռքերն իմ գլխին և սկսեց աղոթել, անսպասելիորեն ջերմության ալիք զգացի, որն անցավ ամբողջ մարմնովս: Ես լայն բացեցի աչքերս՝ փոքրիկ ափսեների պես: Դա տենդի նոպա չէր, այլ ինչ-որ զորություն, որը մտավ մարմնիս մեջ:

– Դուք գիտե՞ք, թե ինչ ունեք,– ասացի ես՝ թեթև զարմացած ձայնով:

– Այդ ես չեմ,– ասաց նա,– այլ՝ Հիսուսը: Նա՛ է Բժշկողը:

– Զարմանալի՛ է,– ասացի ես:– Ինչ-որ բան տեղի ունեցավ: Կարծում եմ՝ ես բժշկվել եմ: Ես այլ կերպ եմ զգում ինձ:

– Կցանկանա՞ք ընդունել Սուրբ Հոգու մկրտությունը,– ընդհատեց նա՝ օգուտ քաղելով իմ հանկարծակի սրտաբաց վերաբերմունքից:

«Այն ամենից հետո, ինչ արդեն տեղի ունեցավ,– մտածեցի,– ես կգնամ մինչև վերջ»:

Երբ այդ կինն առաջնորդեց ինձ, որ աղոթեի՝ Սուրբ Հոգու մկրտությունն ստանալու համար, զորությունն իմ ներսում է՛լ ավելի ուժգնացավ: Ամուսինս, այդ կնոջ ամուսնու հետ հիվանդասենյակում կանգնած, դիտում էր այդ ամենը: Բոլորն էլ զարմանքով տեսան, թե ինչպես իմ մարմինը վեր բարձրացավ մահճակալից:

– Դուք երբևէ նման բան տեսե՞լ եք,– հարցրեց ամուսինս այդ տղամարդուն:

– Երբե՛ք:

Ռասելը և ես գիտեինք, որ այդ օրվանից մենք այլևս նույնը չէինք լինելու:

## ԱՆՀՆԱ՛Ր Է

Մեկ ժամվա ընթացքում այն թարախային զանգվածը, որը փակում էր իմ երիկամը, քայքայվեց: Երբ ես ասացի բուժքույրերին, որ Տերը բժշկել է ինձ, և որ իմ երիկամն արդեն գործում է, նրանք սկսեցին այս ու այն կողմ վազվզել՝ փորձելով հասկանալ, թե ինչ է կա-

տարվում: Նրանք հրաժարվեցին ընդունել այն փաստը, որ Աստված միջամտել էր՝ նույնիսկ տեսնելով դրա ֆիզիկական ապացույցը:

– Անհնա՛ր է,– ասում էին նրանք:– Այդպիսի բան չի՛ կարող լինել:

Բժիշկը մեծ թեթևություն զգաց, որ իմ երիկամը բացվել էր, բայց նա դեռ լրջորեն մտահոգված էր ստաֆիլակոկային վարակով: Բուժքույրերն ինձնից արյուն էին վերցնում մի քանի ժամը մեկ՝ պարզելու համար, թե ինչ տեսակի ստաֆիլակոկներ կային իմ մարմնում, և թե ինչպես պետք է պայքարեին դրանց դեմ:

Չեմ կարող ասել, որ ես բոլորովին չէի մտահոգվում դրանով, քանի որ գիտեի, որ ստաֆիլակոկային վարակը կարող է շատ վտանգավոր լինել: Մի կին իմ կողքի հիվանդասենյակում նույնպես վարակված էր ստաֆիլակոկով: Նա այնքա՛ն վարակիչ էր, որ հիվանդանոցը ցուցանակ էր կախել նրա հիվանդասենյակի դռանը, որի վրա գրված էր. «ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է»: Նա մահացավ այդ վարակից, երբ ես դեռ այդտեղ էի: Տեղի ունեցավ ևս մեկ ողբերգական զուգադիպություն. Ամուսինս հեռախոսազանգ ստացավ մի կնոջից, ով իմ իսպաներենի ուսուցիչն էր միջնակարգ դպրոցում: Նա ասաց Ռասելին, որ նրա որդին նույնպես վարակվել էր ստաֆիլակոկով և մահացել էր վիրահատությունից հետո:

Չնայած այդ բացասական լուրերին՝ ես գիտեի, որ Աստված հպվել էր ինձ: Ես համոզված էի, որ Նա հոգ էր տարել իմ երիկամի մասին, ինչպես նաև՝ իմ ունեցած ստաֆիլակոկային վարակի: Իմ բժիշկն, այնուամենայնիվ, այդքան վստահ չէր: Երբ հիվանդանոցի աշխատակիցներն ընտրեցին համապատասխան հակաբիոտիկը, նա հանձնարարեց երակային ներարկում կատարել:

– Ես իսկապես դրա կարիքը չունեմ,– ասացի բուժքույրերին:– Աստված բժշկել է ինձ:

Նրանք պնդեցին, որ դա անհրաժեշտ է, և միևնույն է՝ ներարկում կատարեցին:

Երբ հակաբիոտիկը լցվեց մարմնիս մեջ, սկսեց կրակի պես այրել երակներս: Ես զգացի, որ այդ այրոցը հասավ սրտիս: Հանկարծ անսպասելի կերպով այն երակը, որի մեջ նրանք մտցրել էին ասեղը, փակվեց: Բուժքույրերը փորձեցին ներարկել հակաբիոտիկը այլ

երակից, բայց այն նույնպես փակվեց: Երկու օր շարունակ նրանք փորձում էին ներարկել ինձ այդ հակաբիոտիկը, բայց ամեն երակը, որը նրանք փորձում էին, փակվում էր:

– Ասում եմ ձեզ՝ դա պե՛տք չէ ինձ: Ես բժշկվա՛ծ եմ,– պնդում էի ես:

– Մենք պետք է անենք սա, որպեսզի դուք չմահանաք,– բարկացած պատասխանում էին նրանք:

Ի վերջո, նրանք հարկադրված խոստովանեցին իրենց պարտությունը:

– Մենք պետք է այլ կերպ տանք ձեզ այս դեղամիջոցը,– ասացին նրանք:

Հիվանդանոցից դուրս գրվելու օրը բժիշկը հակաբիոտիկների մի շիշ տվեց ինձ և ասաց, որ ես պետք է օգտագործեմ այն մինչև իմ կյանքի վերջը.

– Դուք միշտ երիկամի և միզապարկի վարակներ եք ունենալու:

– Սա երբեք պետք չի գալու ինձ,– անդրդվելիորեն պատասխանեցի ես և դուրս եկա հիվանդանոցի գլխավոր դռնից:– Ես երիկամի խնդիրներ նույնպես չեմ ունենալու:

Առանց կասկածի նշույլի՝ ես գիտեի, որ բժշկված եմ: Եվ ժամանակն ապացուցեց դա: Այդ օրվանից արդեն քանմեկ տարի է անցել. ես երբեք չեմ ունեցել ոչ մի ստաֆիլակոկային վարակ, և իմ երիկամներն անխափան գործել են այդ ժամանակվանից ի վեր: Ես բժշկվեցի Աստծո զորությամբ, և դրանից հետո իմ կյանքն անդառնալիորեն փոխվեց: Այդ օրը Աստված հանեց ինձ փոսից: Նա փառավոր կերպով ազատեց ինձ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Կարևոր չէ, թե ինչ «փոսի» մեջ եք դուք այսօր. Աստված ունի պատասխաններ ձեզ համար, և Նա ցանկանում է տալ դրանք ձեզ: Միգուցե ձեր փոսը՝ ամուսնալուծությունն է, կամ դուք միայնակ մայր եք՝ երկու երեխայի հետ, և չունեք բնակարան: Կամ միգուցե ձեր դեմ բռնություն են գործադրում, և դուք չգիտեք, թե ում դիմեք: Միգուցե կախվածության մեջ եք թմրանյութերից կամ ալկոհոլից: Ինչպիսի

«փոսում» էլ լինեք, Աստված փրկության ճանապարհ է պատրաստել ձեզ համար:

Մինչև ձեր «փոսից» դուրս գալը, դուք պետք է տեղորոշեք այն: Հաջորդ գլխում կխոսենք այն մասին, թե ինչպիսին է «փոսը», և թե ինչպես կարելի է դուրս գալ:

## • ԳԼՈՒԽ 3 •

## *Տեղորոշե՛ք ձեր «փոսը»*

Փոքրուց ծնողներս ինձ ասում էին, որ եթե ուշադրություն դարձնեմ իրենց խորհուրդներին, կյանքում կխուսափեմ շատ դժվարություններից: Այնուամենայնիվ, ես կարգախոս ունեի՝ ըստ Ֆրենկ Սինատրայի հայտնի երգերից մեկի. «Անել ամեն ինչ իմ ուզածով»: Դուք երբևէ այդպես մտածե՞լ եք: Իհարկե, կարիք չկա, որ ասեմ ձեզ, թե ինչ է լինում դրա արդյունքում: Ամեն անգամ, երբ ես հրաժարվում էի ողջամիտ և իմաստուն խորհուրդներ լսելուց, ամեն ինչ խառնաշփոթի էր վերածվում:

Աստվածաշունչը «փոս» է անվանում մեր նեղությունները: Դժբախտաբար, հիմնականում մենք հայտնվում ենք փոսերի մեջ մեր իսկ մեղավորությամբ: Հասկանալով, որ փոսի մեջ ենք՝ մենք պետք է ամեն ինչ նորից սկսենք և պատասխանատվություն ստանձնենք այն բանի հանդեպ, ինչը դարձել է մեր խնդիրների պատճառը: Դրանից հետո մենք պետք է ապաշխարենք, երբ անհրաժեշտ է, և սպասենք, որ Տերն ազատի մեզ:

Ահա թե ինչպես է Դավիթը նկարագրում «փոսը» Սաղմոս 40-ում.

*«Սպասելով սպասեցի Տիրոջը, և Նա դեպի ինձ նայեց և աղաղակս լսեց:*

*Եվ ինձ հանեց կորստի հորից՝ տիղմոտ ցեխից, և վեմի վրա կանգնեցրեց ոտքերս, և գնացքս հաստատեց»* (խոսքեր 1,2):

Ես անմիջապես անցնելու եմ բուն թեմային, քանի որ համոզված եմ, որ դուք չէիք կարդա այս գիրքը, եթե ձեր կյանքում դժվարություններ չլինեին: Բոլորս էլ եղել ենք նման իրավիճակներում: Երբեմն դուք փոսի մեջ եք, իսկ երբեմն ձեզ միայն թվում է, թե փոսի մեջ եք: Բայց կա մի ճշմարտություն. դուք չպետք է մնաք այդտեղ*:*

## ՓՈ՞Ս, ԹԵ՞ ԾՐԱԳԻՐ

Եթե այսօր դուք փոսի մեջ եք, պատճառները կարող են տարբեր լինել: Կա՛մ դուք ուշադրություն չեք դարձրել աստվածապաշտ մարդկանց խորհուրդներին և այն զանազանությանը, որը եղել է ձեր հոգում, կա՛մ Տիրոջ Խոսքը ձևավորում և հասունացնում է ձեզ՝ Աստծո խոստումն ստանալու համար, կա՛մ դուք ենթարկվում եք սատանայական հարձակման:

Ուշադիր լսե՛ք ինձ: Եթե դուք փոսում եք հայտնվել ձեր իսկ սխալների պատճառով, պատասխանատվությո՛ւն ստանձնեք դրանց համար: Դադարե՛ք տրտնջալ և մեղադրել բոլորին ձեր խնդիրների համար: Այլ մարդկանց մեղադրելով՝ դուք ավելի խորը կընկնեք ձեր փոսի մեջ: Հպարտություն ցուցաբերելու ժամանակը չէ: Ավելի լավ է՝ պարզեք, թե որտեղ եք սխալվել, խոնարհվե՛ք և ապաշխարե՛ք: Իսկ հետո խնդրե՛ք, որ Աստված Իր ողորմությամբ վերականգնի և ազատի ձեզ: Ամեն ջանք արեք, որ հատուցեք ձեր սխալների համար՝ համաձայն Աստծո առաջնորդության, իսկ հետո հավատացեք, որ Աստված կշտկի ձեր իրավիճակը, և ***սովորե՛ք ձեր սխալից****:*

Եթե, քննելով ձեր սիրտը, տեսնում եք, որ այս տարբերակը չի համապատասխանում ձեր իրավիճակին, հնարավոր է՝ դուք վերապրում եք ցավեր, որոնք կապված են քրիստոնեական աճի հետ: Թեև շատերը չեն ցանկանում մտածել այս մասին, միևնույն է, ***փորձությունները գալու են***, մինչև որ կատարվի Տիրոջ խոստումը: Սաղմոս 105.19-ում պարզ գրված է, որ՝

*«Մինչև այն ժամանակ, որ Նրա Խոսքը եկավ. Տիրոջ Խոսքը փորձեց նրան»:*

Երբեմն փորձվելիս մենք կարող ենք մտածել, որ փոսում ենք, քանի որ դա ցավոտ է: Բայց այդ ցավը պարզապես առաջանում է մեր ճանապարհներից մաքրվելու արդյունքում: «Սթրոնգի սպառիչ համաբարբառը» ներկայացնում է եբրայերեն «փորձել» (հմ. 6884) բառի թարգմանությունը. «ձուլել (մետաղը), մաքրել, հեռացնել անմաքրությունները, հալեցնել, լցնել՝ ինչպես ոսկերիչն է անում, երբ մաքրում է ոսկին»: Մաքրման ջերմությունն այնքան ուժգին է, որ իսկական ոսկին առանձնանում է մետաղախարամից: Հաճախ, երբ մենք առաջխաղացման ճանապարհին ենք, մարմնավորը պետք է հեռանա, նախքան կկարողանանք մուտք գործել մեր օրհնության վայրը: Եթե ճշմարտապես սիրում ենք Աստծո իրողությունները, մենք կցանկանանք ավելի մոտենալ Աստծուն: Այնուամենայնիվ, մինչև Աստծուն ավելի մոտենալը կամ Նրա մեջ «աճելը», մեր ճանապարհները, մտքերը և վարքագծերը պետք է «նվազեն»: Եվ քանի որ մենք մարմնավոր մարդիկ ենք, այդ գործընթացը ցավոտ է լինելու մեզ համար:

Կա մի նկատելի տարբերություն սեփական մեղավորությամբ փոսն ընկնելու և փորձությունների փոսով անցնելու միջև: Փորձության ժամանակ ձեր ներսում չի լինի մշտապես տանջող զգացողություն, որ դուք սխալ եք գործել: Ինչ իրավիճակում էլ լինեք, դուք չեք հպարտանա կամ թշնամանա: Չեմ ասում, որ դուք ստիպված չեք լինի պայքարել հուսալքության դեմ: Բոլորս էլ մաքրվելու ենք այն կերպով, որն արդյունավետ է մեզ համար: Բայց ընդհանուր առմամբ, դուք ***խաղաղություն կունենաք*** ձեր շուրջը մոլեգնող փոթորկի ժամանակ:

Եթե Աստված ինչ-որ խոստում է տվել ձեզ, Նրա Խոսքը կզորացնի, կէտի և կհաստատի ձեզ այդ դժվարին ընթացքում: Իրականում, նեղության ժամանակ Աստծո Խոսքը կհագեցնի ձեզ ավելի, քան ցանկացած այլ բան: Դուք սիրավեպ կունենաք Աստծո հետ, մինչ ամբողջ դժոխքը մոլեգնում է ձեր շուրջը. սովորե՛ք կանգնել Աստծո խոստման վրա և դավանել հաղթանակ, ոչ թե պարտություն:

# ԲՈԼՈՐՍ ԷԼ ԵՂԵԼ ԵՆՔ ՆՄԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Ինչ իրավիճակում էլ լինեք այսօր, ես ուզում եմ, որ վեր բարձրացնեք ձեր գլուխը և հստակ ծրագիր մշակեք՝ նեղությունից դուրս գալու համար: Դուք քրիստոնյա եք և կանչված չեք՝ գնալու դեպի լեռները, պաշարներ կուտակելու և թաքնվելու: Դուք կանչված չեք՝ փախչելու ինչ-որ տեղ և քաղաք կառուցելու ձեզ համար: Վախն Աստծուց չէ, այլ՝ սատանայից: Եթե դուք վախենաք սատանայից, նա կհաղթի: Եթե հակառակվեք սատանային, նա կփախչի: Կատարե՛ք բոլոր անհրաժեշտ շտկումները ձեր կյանքում: Ավելի խորապե՛ս ուսումնասիրեք Աստծո Խոսքը: Սովորե՛ք ճշմարիտ երկրպագու լինել: Պարզապես երեսնիվայր ընկե՛ք Աստծո ներկայության մեջ և իմացե՛ք, թե ինչ է կատարվում ձեզ հետ: Աստված ծրագիր ունի ձեզ համար, բայց դուք չեք իմանա այն, քանի դեռ նստած եք փոսի մեջ՝ հուսահատորեն տարածելով ձեր ձեռքերը և բռնելով ձեր գլուխը: Ժամանա՛կն է, որ գործի անցնեք, իսկ հավանությունները և խրախուսանքը կգան դրանից հետո:

Մի՛ մտածեք, որ դուք մենակ եք, կամ որ՝ միակն եք, ում հետ նման բան է տեղի ունեցել: Ինչպես արդեն ասացի, բոլորս էլ եղել ենք նման վիճակում: Աստված գրել է պատմություններ երկու ականառու մարդկանց մասին, ովքեր խորը փոսի մեջ էին ընկել: Դրանցում Նա ցույց է տալիս, թե ինչպես նրանք ընկան փոսը և ինչպես դուրս եկան:

Աստված տվեց մեզ այդ պատմությունները՝ խրախուսանքի և օրինակի համար: Այնպես որ, եթե Աստված ժամանակներ առաջ ուղեցույց է տրամադրել այն իրավիճակի համար, որում այսօր գտնվում եք, կարծում եմ՝ շատ կարևոր է, որ կարդանք այդ պատմությունները և ուսումնասիրենք այդ մարդկանց իրավիճակները: Հնարավոր է, որ դուք նմանություններ գտնեք ձեր և նրանց իրավիճակներում, և դրանից ելնելով՝ կիրառեք նրանց լուծումները:

Այդ երկու ականառու մարդիկ Դավիթը և Հովսեփն են: Նրանց կյանքի պատմություններն իրականում տեղի են ունեցել: Թեև երբեմն նրանք սխալներ են գործել և ոչ ճիշտ որոշումներ կայացրել, երկու-

սի անուններն էլ նշված են Եբրայեցիների նամակի «Հավատքի սրահում»: Աստծո Խոսքը ներկայացնում է թե՛ նրանց, թե՛ նրանց նման այլ մարդկանց, ովքեր, ունենալով տկարություններ, անապահովության զգացում, վախ և մարդկային բարդույթներ, «դուրս եկան փոսից», և ասում է հետևյալը նրանց մասին.

*«Որոնք հավատքով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, խոստումներ ստացան, առյուծների բերաններ խցկեցին.*

*Կրակի զորությունն անցկացրին, սրի բերանից պրծան, տկարությունից զորացան, պատերազմի մեջ զորավոր եղան, օտարների բանակները փախցրին»* (Եբրայեցիների 11.33,34):

Ես ընդգծեցի այս հատվածի մի մասը, որպեսզի ցույց տամ հետևյալը. այն մարդիկ, ովքեր մեծ էին Աստծո առջև, երբեմն տկարանում էին, բայց նրանք զորանում էին իրենց տկարությունից: Ես ցանկանում եմ, որ հասկանաք՝ ձեր իրավիճակը նույնպես կփոխվի: Ես հավատում եմ, որ մինչև այս գիրքն ավարտելը, դուք լիովին նոր կերպով կտեսնեք ձեր ապագան: Եթե մնաք Աստծո հետ՝ Դավթի և Հովսեփի պես, ձեր ապագան ապահով և հաստատուն կլինի:

Եկե՛ք սկսենք:

# • ԳԼՈՒԽ 4 •

## *Դավիթը և «փուլը»*

*«Ես մերժել եմ Սավուղին, որովհետև նրա սիրտը հրաժարվում է փոխվել. ուրեմն, որքա՞ն ժամանակ ես դու լաց լինելու նրա համար: Այս անգամ Ես կընտրեմ, թե ով է լինելու Իսրայելի թագավորը, ոչ թե մարդիկ: Գնա՛ բեթլեհեմցի Հեսսեի տուն և տա՛ր քեզ հետ քո օծման յուղը, որովհետև Ես նոր թագավոր եմ ընտրել Ինձ համար»:*

Ես շրջասության ենթարկեցի Տիրոջ խոսքերը Ա Թագավորաց 16.1-ում, որպեսզի ավելի հասկանալի դարձնեմ ձեզ համար: Տերն ասաց, որ Սավուղի վարչակարգն Իսրայելում (մարդկանց ընտրությունը) մոտենում էր ավարտին, և Նա նոր թագավորի էր ընտրել: Համոզված եմ, որ այս բառերը ցնցեցին Սամուել մարգարեին: Նա այնքա՛ն ժամանակ էր բարեխոսել և հավատացել չար Սավուղ թագավորի համար, որ Տերը պետք է «ուշքի բերեր» նրան: Սամուելը հնազանդվեց Տիրոջը, բայց նա վախենում էր, որ Սավուղը կսպաներ իրեն, եթե ինքը մեկ այլ մարդու թագավոր օծեր:

Տերը կարգադրեց նրան մի երինջ վերցնել, զոհաբերություն հայտարարել և հրավիրել Հեսսեին և նրա որդիներին: Քանի որ զոհաբե-

րությանը կարող էին մասնակցել միայն հրավիրվածները, Սամուելը կարող էր անարգել և աննկատ հնազանդվել Տիրոջը:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հեսսեն բերեց իր բոլոր որդիներին և ներկայացրեց նրանց մարգարեին: Սկզբում նա Սամուելի առջև կանգնեցրեց իր ավագ որդուն: Մարգարեն վստահ էր՝ Տերը կուզեր, որ առաջնեկը զբաղեցներ այդ բարձր իշխանական դիրքը: Սամուելը, առաջնորդվելով մարդկային մտքով, բարձրացրեց իր ձեռքը, որ օծեր Եղիաբին՝ որպես Իսրայելի ապագա թագավոր: Տերը միջամտեց. «Նա՛ չէ: Դու նայում ես արտաքինին, Սամուե՛լ: Հիշո՞ւմ ես, որ պետք է օծես նրան, ում Ե՛ս եմ ընտրել: Ես նայում եմ մարդու սրտին»:

Այնպես որ, Սամուելը խնդրեց, որ մոտենար մյուս որդին, իսկ հետո՝ մյուսը: Երբ թվաց, թե Հեսսեն այլևս որդիներ չունի, մարգարեն ասաց.

– Հեսսե՛, ես գիտեմ, որ իմ առջև յոթ տղաներ կանգնեցին, բայց նրանք բոլորը չէին: Դու պետք է ևս մեկ որդի ունենաս:

– Այո՛,– պատասխանեց Հեսսեն:– Բայց նա դեռ փոքր է, և ես թողեցի նրան դաշտում՝ ոչխարներին հետևելու համար:

Սամուելը, հավանաբար, հոգոց հանեց, որը նշանակում էր և՛ թեթևություն, և՛ սպասում: Հեսսեն պատվիրեց, որ տղային մարգարեի մոտ բերեն:

Ես գրեթե տեսնում եմ, թե ինչպես է պատանի Դավիթը քայլում իր հոր հետ՝ հարգալից նայելով Աստծո մարգարեին, ով արդեն տարեց էր: Տեսնելով Դավթին՝ Սամուելն անմիջապես գոհունակություն զգաց: Տերը խոսեց. «Օծի՛ր նրան: Ես հենց նրան եմ ընտրել»: Այնպես որ, Հեսսեի և նրա յոթ որդիների ներկայությամբ Սամուելը վերցրեց յուղի եղջյուրը և լցրեց պատանի Դավթի գլխին և մարգարեաբար հռչակեց նրան որպես Իսրայելի հաջորդ թագավոր:

Ինձ շատ է դուր գալիս այն, ինչ տեղի ունեցավ այդ շրջադարձային և ապշեցուցիչ իրադարձությունից հետո: Երբ մարգարեն օծեց և թագավոր հռչակեց Դավթին, մի՞թե ներկաներն սկսեցին ցնծալ և արժա-

վենու ճյուղեր վեր նետել: Մի՞թե նրանք բարձրացրին պատանի Դավթին՝ դնելով իրենց ուսերին: Ո՛չ: Երբ ամեն ինչ ավարտվեց, մարգարեն վեր կացավ և գնաց մեկ այլ քաղաք, իսկ Հեսսեն կրկին դաշտ ուղարկեց Դավթին՝ ոչխարներին հետևելու համար: Այնուամենայնիվ, տեղի ունեցավ մի զգալի փոփոխություն: Աստվածաշունչն ասում է, որ այդ օրվանից Տիրոջ օծությունը զորավոր կերպով եկավ Դավթի վրա:

## ՕԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Թույլ տվեք մի փոքր նշում անել: Այդ պատմական օրը, թեև Դավիթն օծվեց՝ թագավոր դառնալու համար, նա անմիջապես չփոխարինեց Սավուղ թագավորին: Թեև Աստված ընտրել էր Դավթին՝ որպես Իսրայելի թագավոր, բավականին ժամանակ անցավ, մինչև նա փաստացիորեն զբաղեցրեց այդ պաշտոնը: Կար մի ընթացք, որը Դավիթը պետք է անցներ:

Հաճախ մենք փոսում ենք հայտնվում, քանի որ փորձում ենք արագացնել որևէ բան մեր կյանքում, ինչի համար Աստված հստակ ժամանակ է սահմանել: Գոյություն ունեն հոգևոր ժամանակներ՝ նշանակված և որոշված ժամանակներ: Դավթի համար ժամանակ էր որոշվել՝ Իսրայելի թագավոր դառնալու համար: Աստված ընտրել էր նրան, որպեսզի այն ամենը, ինչը վերաբերում էր նրա կյանքին, ղեկավարվեր Իր կողմից: Նույնը վերաբերում է ձեզ՝ այն բանից հետո, երբ Աստված օծում կամ կանչում է ձեզ որևէ գործի համար: Ոմանք կարծում են, որ այսօրվա մարգարեական խոսքն իրագործվելու է վաղը, կամ ամենաուշը՝ մեկ ամիս անց: Եվ երբ ամեն ինչ չի կատարվում սպասվածի պես, նրանք փորձում են ի կատար ածել այդ խոսքն իրենց ուժերով: Աստծուց առաջ շարժվելու դեպքում դուք մշտապես նեղություն, վնաս և ցավ կկրեք: Այլ կերպ ասած՝ դուք կհայտնվեք փոսի մեջ. հեռո՛ւ մնացեք փոսից: Մնացե՛ք Աստծո կողմից որոշված ժամանակների մեջ: Թո՛ւյլ տվեք Նրան՝ կրթել ձեզ, որպեսզի այն, ինչ որոշված է, կատարվի ձեր կյանքում:

Գիտե՞ք, թե ինչու ենք մենք նախապես օծվում մեր կոչման համար: Պատճառն այն է, որ օծությունը ծարավ է առաջացնում մեր

ներսում՝ սովորելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեր կոչումն իրականացնելու համար: Դուք երբեք չէիք ծգտի և ժամանակ չէիք տրամադրի այդ բաներին, եթե Աստված նախապես չշնորհեր ձեզ Իր օծությունը: Ձեր օծությունը ցանկություն է առաջացնում ձեր մեջ: Այն բավական է, որ դուք ձգտեք ավելիին: Եթե շարունակեք կատարել այն, ինչ Նա պատվիրում է ձեզ, շուտով ձեռք կբերեք իմաստություն, գիտելիք և ըմբռնողություն՝ ձեր կոչումը քայլ առ քայլ իրականացնելու համար: Դուք Աստծո համար երբեք չէիք անի այն, ինչ անում եք, և չէիք սովորի այն ամենը, ինչ սովորում եք, եթե օծություն չունենայիք դրա համար: Սա է պատճառը, որ դուք չեք կարող ամեն մարդու հետ խոսել այն մասին, թե ինչով եք զբաղված: Նրանք այնպես կնայեն ձեզ, ասես դուք այլ մոլորակից եք: Ինչո՞ւ: Նրանք օծված չեն՝ անցնելու այն ճանապարհը, որի համար դուք կանչվել եք:

## ԲԱՆԱԼԻՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ Է

Ես ցանկանում եմ մատնանշել մի հրաշալի բնավորության գիծ, որն ուներ Դավիթը: Նա հոժարությամբ և հնազանդությամբ կատարում էր այն, ինչ նրա հայր Հեսսեն պատվիրում էր նրան: Նա չկարծեց, որ խիստ կարևոր մարդ է դարձել, քանի որ օծվել է որպես Իսրայելի ապագա թագավոր: Ո՛չ. նա վերադարձավ իր նախկին աշխատանքին՝ գառնարածությանը: Նա չէր տրտնջում այդ պատճառով և չէր ասում. «Հավատալ չեմ կարողանում, որ ես պետք է այս գառների հետ լինեմ: Նրանցից վատ հո՜տ է գալիս: Ես արժանի եմ ավելիի՛ն: Մարդիկ չպե՛տք է տեսնեն ինձ այս աշխատանքը կատարելիս: Քիչ առաջ ինձ օծեցին որպես Իսրայելի ապագա թագավոր: Ինչ-որ մեկը պետք է կրի իմ քսակը և ձեռնափայտը»:

Եսայի 1.19-ում գրված է, որ եթե մենք հոժարակամ և հնազանդ լինենք, կուտենք երկրի բարիքը: Դավիթը սովորեց այս կարևոր սկզբունքն իր պատանեկության տարիներին: Աստված գիտեր, որ եթե Դավթին ինչ-որ բան հանձնարարվեր, նա կհնազանդվեր: Դավիթը գիտեր, թե ինչպես լիներ ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին և զբաղված լիներ ճիշտ գործով: Նա պատվավոր պատանի էր, և մե-

ծանալով՝ պատվի մարդ դարձավ: Մենք դեռ կտեսնենք, որ այս սկզբունքը ժամանակավորապես անտեսելը լուրջ խնդիրներ առաջացրեց Դավթի կյանքում:

## ՄԵՂՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Պատմությունը Դավթի թագավորության մասին՝ սկսվում է Բ Թագավորաց 5-րդ գլխից:

Շատ ժամանակ էր անցել. Սավուղը մահացել էր, և Դավիթը թագավոր էր դարձել: Այժմ նա ուներ այն, ինչ մարդը կարող է ցանկանալ: Մարդիկ սիրում էին նրան, նա մեծ պատերազմող էր և ազդեցիկ ու պատվարժան թագավոր: Նա հաղթող էր թե՛ բնական, թե՛ գերբնական ոլորտներում: Դավիթն աղոթում և ծոմ էր պահում Աստծո առջև: Նա ճանաչում էր Աստծո սիրտը, և թվում էր՝ ամեն ինչ հրաշալի էր: Նա Աստծո օծված և ընտրյալ անոթն էր:

Կան բազմաթիվ աստվածապաշտ քրիստոնյաներ, ովքեր ճշմարտապես սիրում են Տիրոջը և հավատարիմ են Նրան: Այնուամենայնիվ, ինչպե՞ս է պատահում, որ նրանք մեղքի մեջ են ընկնում: Մի՞թե ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան է հայտնվում նրանց ճանապարհին և վայր է գցում նրանց: Մի՞թե նրանք մի օր լավ մարդ են, մի օր՝ չար: Ո՛չ: Կա մի ընթացք, որն ամեն մեկս անցնում է՝ մինչև մեղք գործելը: Հիշո՞ւմ եք՝ ես արդեն ասացի, որ եթե մենք ողջամիտ և իմաստուն խորհուրդներ լսեինք, նեղության մեջ չէինք ընկնի: Ես ողջամտություն և իմաստություն կսովորեցնեմ ձեզ Դավթի կյանքի պատմությունից, որպեսզի դուք կարողանաք շրջանցել այն փոսերը, որոնք կհայտնվեն ձեր ճանապարհին:

## ԱՌԱՋԻՆ ՍԽԱԼԸ

Դավթի առաջին անթույլատրելի սխալի մասին գրված է Բ Թագավորաց 11-րդ գլխում:

*«Եվ եղավ հետևյալ տարին, որ թագավորները պատերազմի դուրս գալու ժամանակ՝ Դավիթը Հովաբին և նրա հետ իր ծառաներին և ամ-*

*բողջ Իսրայելին ուղարկեց, որոնք Ամոնացիներին կոտորեցին, և Ռաբբան պաշարեցին: Բայց Դավիթը մնացել էր Երուսաղեմում»* (խոսք 1):

Մենք տեսնում ենք, թե ինչպես սկսվեց այն սխալների շարանը, որն ի վերջո փոսի մեջ գցեց Դավթին. նա չէր անում այն, ինչ պետք է աներ: Թագավորների պատերազմի դուրս գալու ժամանակն էր, բայց Դավիթը մնաց Երուսաղեմում: Նա թագավոր էր, և եկել էր նրա գնալու ժամանակը, բայց՝ մնաց: Իր բոլոր զինվորները պատերազմի դաշտում էին: Իսկ ի՞նչ էր անում նա: Նա տանն էր:

Դավիթը պետք է իր զորքի հետ լիներ: Մենք արդեն տեսնում ենք, որ նա ճիշտ չէր տնօրինում իր ժամանակը: Նա դեռ պատվավոր մարդ էր, բայց սխալ տեղում էր՝ սխալ ժամանակ: Դա բավական էր, որ սատանան օգտվեր առիթից: Երբ մարդը շեղվում է ճիշտ ծրագրից, նա հայտնվում է սատանայի ծրագրի մեջ: Սա լուրջ պատճառ է զգուշանալու համար: Շարունակենք և տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ:

## ԵՐԿՐՈՐԴ ՍԽԱԼԸ

*«Եվ մեկ օր՝ իրիկվա դեմ, Դավիթն իր անկողնուց դուրս գալով՝ պալատի տանիքի վրա ման էր գալիս, և տանիքի վրա մի կին տեսավ, որ լվացվում էր, և այն կինը շատ գեղեցիկ էր տեսքով»* (խոսք 2):

Ես կարող էի մի ամբողջ գիրք գրել այն մասին, թե ինչ էր տեղի ունեցել խոսք 1-ից մինչև խոսք 2-ը:

Փորձե՛ք պատկերացնել, թե ինչ կատարվեց: Դավիթը հոժարակամ և հնազանդ անձնավորություն էր: Նա պատվարժան թագավոր էր: Պետք է լիներ իր զինվորների հետ, բայց նրանց հետ չէր: Այդ պատճառով, նա անհանգստություն էր զգում և չէր կարողանում քնել: Անկողնում այս ու այն կողմ պտտվելուց հետո, ի վերջո վեր կացավ և առանց եռքին մտքի՝ որոշեց զբոսնել պալատի տանիքին և մաքուր օդ շնչել:

Դավթին սպասում էր ավելին, քան մաքուր օդը: Մի փոքր հեռու գտնվող տան տանիքին մի կին երեկոյան լոգանք էր ընդունում: Այդ ժամանակ տներում ցնցուղ չկար: Մարդիկ լողանում էին կա՛մ գետում, կա՛մ իրենց տան տանիքին: Այդ կինը գիտեր, որ այդ ժամանակ Իսրայելի բոլոր տղամարդիկ պետք է պատերազմի գնացած լի-

նեին: Նա չէր մտածում, որ շրջակայքում կարող էր որևէ տղամարդ լինել: Նրա մտքով նույնիսկ չէր անցել, որ ինքը չպետք է տանիք բարձրանար և լոգանք ընդուներ այնտեղ:

Ուշադրություն դարձրեք, որ Դավիթը շփոթված չգնաց այդտեղից: Ընդհակառակը՝ նա ցանկացավ իմանալ ավելին: Հավանաբար, նա մտածեց, որ այդ կինն ամուրի էր, և նա կարող էր դարձնել նրան իր կանանցից մեկը: Այնուամենայնիվ, նա հետաքրքրվեց և պարզեց, որ տեսել էր Բերսաբեին՝ Ուրիայի կնոջը: Ուրիան Իսրայելի բանակի և Դավթի՝ իր թագավորի հավատարիմ սպաներից էր:

## ԵՐՐՈՐԴ ՍԽԱԼԸ

Այդ կինն ամուսնացա՛ծ էր: Բայց մի՞թե դա կանգնեցրեց Դավթին: Մի՞թե նա ասաց՝ ձեռքը թափ տալով. «Դա ինձ չի վերաբերում»: Ո՛չ. նրան դուր եկավ իր տեսածը, և ոչ մի խոչընդոտ չկանգնեցրեց նրան՝ այդ կնոջն ստանալու համար: Նրա մտածելակերպը փոխվել էր: Նա այն աստիճան էր սովորել ստանալ իր ուզածը, որ թվում է՝ կորցրել էր ողջամտությունը:

Երբ ինչ-որ մեկին շարունակ ծառայում և աստվածացնում են, նրա մոտ կատարելության կեղծ զգացում է հայտնվում: Նման մարդն այն աստիճան է ընտելանում ղեկավարող դիրքին, որ դադարում է խղճի խայթ զգալ սխալ վարվելիս: Նրան թվում է, թե ինքն ազատված է մեղքի պատասխանատվությունից, կամ որ ինքն անկում չի ունենա՝ իր մեծ հարստության կամ բարձր դիրքի պատճառով: Մեծ իշխանություն ունեցող մարդկանց մոտ կարող է այդպիսի կեղծ զգացում հայտնվել, քանի որ բացի Աստծուց՝ նրանք ոչ ոքի հաշվետու չեն: Այդ ժամանակ նրանց իշխանությունը ագրեսիվ բնույթ է կրում:

Այնպես որ, եթե դուք ամենաբարձր աստիճանն եք զբաղեցնում և տեսնում եք, որ ձեր միտքը նմանվում է Դավթի մտքին, ավելի լավ է՝ արթնացե՛ք: Միգուցե Աստված չպատասխանի ձեր սխալ վարքին այսօր կամ վաղը, բայց իմացե՛ք հետևյալը. Աստված գիտի ձեր գործերը, և Աստվածաշունչը պարզ ասում է, որ բոլորը կհնձեն այն, ինչ ցանել են: Չգիտեմ, թե ինչ էր անցնում Դավթի մտքով այդ պահին, բայց ինչ-ինչ պատճառով նա չէր մտածում իր որոշումների

հետևանքների մասին: Մեկ սխալ արարքը՝ սխալ ժամանակ սխալ տեղում լինելը, հանգեցրեց մեկ այլ սխալ արարքի: Այս պատմությունը վատ սկսվեց և սարսափելի ավարտ ունեցավ:

*«Եվ Դավիթը պատգամավորներ ուղարկեց և առավ նրան: Եվ նա եկավ նրա մոտ, և Դավիթը պառկեց նրա հետ: Եվ նա նոր էր մաքրվել իր անմաքրությունից, և նա ետ դարձավ իր տունը»* (խոսք 4):

Ոչ շատ ժամանակ անց Բերսաբեն հասկացավ, որ հղացել էր Դավթից: Երբ նա հայտնեց այդ լուրը, Դավիթը, միևնույն է, չապաշխարեց: Փոխարենը՝ սկսեց մտածել, թե ինչպես քողարկեր իր հետքերը:

## ՁՅՈՒՆ Է ՍԿՍՎՈՒՄ...

Այժմ մենք տեսնում ենք, որ երբեմնի հոժարակամ, հնազանդ և պատվավոր մարդն անիարմար իրավիճակում է հայտնվել: Եթե նա շարունակեր պատվի մարդ լինել մինչև այդ պահը, պատասխանատվություն կստանձներ իր սխալների համար և կխոստովաներ իր անօրինությունները: Նա կգիտակցեր, որ այդ ամենն սկսվեց սխալ ժամանակ սխալ տեղում լինելու պատճառով:

Բայց ո՛չ. Դավիթն սկսեց մատների արանքով նայել իր սխալներին և կեղծավորությամբ վարվել: Այն մեղքը, որը նա գտավ իր կյանքում, սկսեց մեծանալ՝ բարձունքից գլորվող ձնագնդի պես:

Երբ մեղք եք գործում, անմիջապես կա՛նգ առեք: Եթե ոչ, այն կմեծանա՝ գլորվող ձնագնդի պես, և կընկնի ձեզ վրա: Դուք երբևէ դիտե՞լ եք մուլտֆիլմեր, որոնցում փոքրիկ ձնագունդն ընկնում է բլրի գագաթից: Մինչև ներքև հասնելը՝ ձնագունդն այնքա՛ն է մեծանում, որ կործանում է ամեն ինչ իր ճանապարհին: Մենք պետք է սովորենք այդ օրինակից: Եթե անվերահսկելի մեղքը չդադարեցվի, այն կաճի ձեր կյանքում նույն կերպով: Այն ի զորու է սահմանափակելու կամ կործանելու ամեն ինչ և ամեն մեկին իր ճանապարհին:

Դավիթը կեղծավորությամբ վարվեց Բերսաբեի ամուսնու՝ Ուրիայի հետ: Փոխարենը պատասխանատվություն ստանձներ իր արարքի համար, գնար Բերսաբեի ամուսնու մոտ և ապաշխարեր, նա այլ բան արեց: Նա սուրհանդակ ուղարկեց՝ Ուրիային իր մոտ բերելու համար: Ուրիան նրա գլխավոր սպաներից էր պատերազմի դաշտում, ով մեծ

պատիվ էր համարում Դավթի հրամանատարության ներքո ծառայելը: Երբ Ուրիան տեղ հասավ, Դավիթը հարցրեց զինվորների և անձամբ Ուրիայի ողջությունը: Հանկարծ Դավիթն սկսեց ձևացնել, թե մեծ հոգատարությամբ է վերաբերվում Ուրիային: Նա պատվիրեց Բերսաբեի ամուսնուն՝ տուն գնալ և թարմանալ, սակայն Ուրիան հրաժարվեց, և փոխարենը՝ քնեց թագավորի պալատի դարպասների մոտ:

Ուրիան պատվի մարդ էր: Նա ճիշտ չէր համարում հանգստանալ այն ժամանակ, երբ իր զինվորներն սպանվում կամ վիրավորվում էին կռվում: Համոզված եմ՝ այն պատիվը, որը կար Ուրիայի ներսում, հուսահատության հասցրեց Դավթին: Դավիթը գիտեր, թե ինչպես էր դավաճանել և շահարկել Ուրիային, բայց այդ մարդը ծառայում և սիրում էր նրան ամբողջ սրտով՝ նույնիսկ գաղափար չունենալով իր դեմ գործած մեղքի մասին: Դավիթը փոսի մեջ էր, բայց հրաժարվեց դուրս գալ: Օգտագործելով իր դատողությունը և իրեն հասանելի միջոցները՝ նա շարունակում էր մեքենայություններ անել, որպեսզի ազատվեր իր խնդիրներից:

## ԽԱԲԵԲԱ ԴԱՎԻԹԸ

Այս պատմությունը շարունակվում է Բ Թագավորաց 11.13-րդ խոսքից: Դավիթը կանչեց Ուրիային՝ իր հետ ուտելու և խմելու: Համոզված եմ, որ Դավիթը փորձում էր արբեցնել Ուրիային՝ հույս ունենալով, որ նա տուն կգնար և կպառկեր իր կնոջ հետ: Այդ դեպքում հնարավոր է՝ ծնված երեխային Ուրիան կհամարեր իրենը:

Ուրիան հարբեց, բայց միևնույն է՝ տուն չգնաց: Դավթի նենգ մեքենայություններից ոչ մեկը չգործեց: Իր եկած առաջին օրվանից Ուրիան չհեռացավ թագավորի պալատի նախասրահից:

Այնքա՜ն հեշտ կլիներ, եթե Դավիթը խոնարհեցներ իրեն և ապաշխարեր: Այնուամենայնիվ, Դավիթն արդեն այն աստիճան տագնապած էր, որ նրա միտքը բթացել էր: Դուք երբևէ եղե՞լ եք նման վիճակում:

Նա ընդհանրապես չէր մտածում պատվի մասին: Շուտով մարդիկ կտեսնեին, որ Բերսաբեն հղի էր, և բոլորը գիտեին, որ Ուրիան ամիսներ շարունակ տանը չէր եղել:

Դավթին պատկանում էր գերագույն իշխանությունն Իսրայելում, նույնիսկ այն իմաստով, որ նա կարող էր զրկել մարդկանց կյանքից: Խոսք 14-ում Դավիթը նամակ գրեց իր հրամանատար Հովաբին և ուղարկեց այն Ուրիայի հետ: Նամակում գրված էր.

*«Ուրիային դրե՛ք սաստիկ պատերազմի դիմացը, և դուք ե՛տ քաշվեք նրա ետևից, որ նա զարկվի և մեռնի»* (խոսք 15):

Մտածելով, որ մեծ ծառայություն էր մատուցում թագավորին՝ Ուրիան տանում էր հրամանն իր մահվան մասին: Նա ամենահավատարիմ մարդկանցից էր Դավթի ամբողջ թագավորության մեջ, բայց նրա հավատարմությունը վարձատրելու փոխարեն, Դավիթը ծրագրում էր նրա մահը: Եվ պատճառը՝ իր իսկ սխալները ծածկելն էր:

Անկախ այն բանից, թե ինչպես ամեն ինչ կդասավորվեր՝ Դավիթը կարող էր դադարեցնել այդ ամենը և ներում ստանալ: Անկախ հետևանքներից՝ նա կարող էր ճիշտ որոշում կայացնել, և Աստված կպատվեր նրան: Բայց նա այդպես չվարվեց:

Ուզում եմ, որ իմանաք հետևյալը. անկախ այն բանից, թե ձեր կարծիքով որքա՜ն խորն եք ընկել փոսի մեջ, և անկախ ձեր սխալներից՝ Աստված կների և կվերականգնի ձեզ, եթե պատասխանատվություն ստանձնեք և ապաշխարեք: Միգուցե ձեզ թվում է, թե հիմա դուք վատ վիճակում եք, բայց ես խոստանում եմ՝ ձեր վիճակն է՛լ ավելի է վատանալու: Դուք չեք կարող դուրս գալ փոսից՝ ձեր դատողությամբ և ձեր սխալները ծածկելով: Այնպես մի՛ վարվեք, որ կորցնեք ամեն ինչ, և միայն դրանից հետո հարկադրված խոնարհվեք և շտկեք իրավիճակը: Հպարտությունը խաբուսիկ է: Չարժե կորցնել այն ամենը, ինչի համար դուք աշխատել եք, և բոլորին, ում սիրում եք: Այնքան համառ մի՛ եղեք, որ կորցնեք բոլոր անհավատալի օրհնությունները, որոնք Աստված շնորհել է ձեզ:

Մինչ այդ պահը Դավթի խիղճն արդեն այրված կամ բթացած էր: Այս ասելով՝ ես նկատի ունեմ, որ նա այլևս խղճի խայթ չէր զգում: Նա պարզապես ձգտում էր ազատվել ստեղծված իրավիճակից և միայն կարևորում էր իր համբավը:

Այսպիսով, Ուրիան ուղարկվեց առաջնագիծ, որտեղ ընթանում էր ամենակատաղի պայքարը թշնամու հետ: Բարձրաստիճան սպանե-

րը հազվադեպ էին առաջնագիծ ուղարկվում. այնպես որ, համոզված եմ՝ Ուրիան պատիվ համարեց դա: Նա սպանվեց մյուսների հետ:

Երբ այդ մասին լուրը հասավ Դավթին, նա թոթվեց ուսերը և ասաց. «Ոչի՛նչ: Կռվի մեջ սուրը զարկում է թե՛ մեկին, թե՛ մյուսին» (խոսք 25): Այլ կերպ ասած՝ «Մոռացե՛ք այդ մասին»: Ինչպիսի՜ ցավալիորեն անպատշաճ արձագանք:

Այն բանից հետո, երբ Բերսաբեն սգաց իր ամուսնու մահը, Դավիթը դարձրեց նրան իր կինը: Այժմ նա կարող էր երեխա ունենալ, և ոչ մի խնդիր չէր լինի: Համոզված եմ, որ Դավթի համար այդ ընթացքը պարզապես սարսափելի էր: Նա մտածեց, որ ամեն ինչ արդեն ետևում էր, մինչև որ Աստված ուղարկեց Նաթան մարգարեին՝ առակի միջոցով նրան ընդդիմանալու և նրա արարքները բացահայտելու համար: Միայն այդ ժամանակ Դավիթն ապաշխարեց: Նա վերականգնվեց Տիրոջ առջև և մինչև կյանքի ավարտը ապրեց աստվածավախ կյանքով, բայց այն երեխան, որը ծնվեց Բերսաբեի հետ գործած մեղքի արդյունքում, մահացավ:

Ի՞նչ կատարվեց այն փոքրիկ գառնարածի հետ, ով հոժարակամ և հնազանդ էր: Ի՞նչ կատարվեց այն Դավթի հետ, ով այնքա՜ն էր պատվում Աստծո օծյալ Սավուղին, որ հրաժարվում էր խոսել նրա դեմ: Ի՞նչ կատարվեց այդ հոժարակամ, հնազանդ և պատվավոր երիտասարդի հետ:

Հիշե՛ք այն, ինչ ես արդեն ասացի. այնպես չէ, որ մեկ օր մենք արթնանում ենք և պարզում, որ փոսի մեջ ենք հայտնվել: Գոյություն ունի որոշակի ընթացք (կամ՝ քայլեր, որոնք մենք անում ենք), որը տանում է փոսի հատակը: Դիտարկենք այն արարքները, որոնց պատճառով Դավիթը վարընթաց անկում ապրեց:

## ՔԱՅԼ ԴԵՊԻ ՆԵՐՔԵՎ 1.

## ՁԵՐ ԳՈՐԾՆ ԱՆՏԵՍԵԼԸ

Դավիթը պետք է իր բանակի հետ լիներ, բայց փոխարենը կատարեր իր պարտավորությունը, նա ուղարկեց իր մարդկանց, իսկ ինքը

մնաց տանը: Երբ դուք չեք կատարում ձեր գործը և ծուլանում եք, հիմարությունը գալիս է ձեզ վրա: Դուք սկսում եք փնտրել այլ զբաղմունք՝ այն գործի փոխարեն, որը պետք է անեիք:

## ՔԱՅԼ ԴԵՊԻ ՆԵՐՔԵՎ 2.

## ՀԵՇՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Անգործությունը՝ վատագույն բաներից մեկն է, որոնց մեջ քրիստոնյան կարող է հայտնվել: Ես չեմ խոսում հանգստի մասին: Հանգիստը նպատակ ունի, իսկ անգործությունն առաջանում է ծուլությունից և անտարբերությունից: Անգործ մարդը չունի ծրագրեր, նպատակներ և ձգտումներ: Նա պարզապես ապրում է՝ սպասելով այնպիսի բանի, ինչը կզբաղեցնի կամ կզվարճացնի իրեն:

Այս տեսակի մարդիկ շարունակ հառաչում են. «Աստվա՜ծ, ահա՜ ես. արա՛ այն, ինչ ուզում ես»: Այնուամենայնիվ, նրանք երբեք ոչնչի չեն հասնում, քանի որ մշտապես սպասում են: Մի հին ասացվածք կա. «Կանգնած ջրերը կեղտ են հավաքում»: Ձեր ջրերը կարող են կեղտոտվել. այնպես որ, ավելի լավ է՝ շարժման մե՛ջ եղեք: Մի՛ լցվեք քմահաճ մտքերով կամ դատարկ պատկերացումներով: Դավիթը սխալ տեղում էր՝ սխալ ժամանակ: Նրա միտքն անգործ էր, որովհետև նա զբաղված չէր իր գործով: Հսկե՛ք ձեր միտքը և հրաժարվե՛ք անգործությունից:

## ՔԱՅԼ ԴԵՊԻ ՆԵՐՔԵՎ 3.

## ԹԱՓԱՌՈՂ ԱՉՔ

Աստվածաշունչն ասում է, որ մեր աչքերը և ականջները՝ դռներ են, որոնք տանում են դեպի մեր անձը: Այլ կերպ ասած՝ դուք ներս եք թողնում այն, ինչին ուղղում եք ձեր հայացքը. դուք սկսում եք խոսել և մտածել այն, ինչի մասին լսում եք: Այնպես որ, անչափ կարևոր է հսկել

այս բնագավառները: Ի՞նչ եք դուք ամեն օր ներս թողնում ձեր աչքերով: Ի՞նչ եք դուք դիտում հեռուստացույցով: Ի՞նչ եք դուք կարդում:

Հոբը հայտարարեց, որ ուխտ է կնքել իր աչքերի հետ (տե՛ս Հոբ 31.1): Նա գիտեր, որ այն, ինչին ինքը նայում է, կա՛մ կօգնի, կա՛մ կկործանի իրեն: Մեր ընկերներից մեկը, ով ծառայող է, մեկ այլ ծառայողի հետ օդանավակայան էր գնացել՝ ինչ-որ մեկին դիմավորելու համար: Սպասելու ընթացքում Տերը խոսել է նրա հետ՝ ասելով, որ թշնամին պատրաստվում է գայթակղեցնել իրեն, և պատվիրել է՝ ուղիղ առաջ նայել և տեղի չտալ շրջվելու գայթակղությանը: Մեր ընկերը քարացած նստում է նստարանին և աչքի պոչով տեսնում, որ մյուս ծառայողը աչքերով ուշադիր հետևում է իրենց կողքով անցնող երիտասարդ կնոջը այնքան ժամանակ, մինչև նա հեռանում է տեսադաշտից: Եվ Տերը խոսում է մեր ընկերոջ հետ՝ պատվիրելով նրան դաս քաղել այդ իրավիճակից: Նա ասում է, որ իր հետ գտնվող ծառայողը մեղքի մեջ է ընկնելու և կործնելու է իր ծառայությունը. եթե դուք չեք կարողանում վերահսկել ձեր աչքերը, ինչպե՞ս կարող եք առաջնորդել մարդկանց դեպի Աստված: Ինչպե՞ս կարող եք հայտնել Աստծուն աշխարհին:

Երբ Դավիթն իմացավ, որ Բերսաբեն ամուսնացած է, նա պետք է դադարեր նրան հետամուտ լինելուց: Այնուամենայնիվ, նա թույլ տվեց, որ իր հայացքը վերահսկեր իր անձը և լռեցներ իր հոգին: Այդ պահից ի վեր՝ նա սկսեց անկում ապրել մինչև փոսի խորքը: Նրա ցանկությունն ավելի ու ավելի մեծացավ, որովհետև նա չհսկեց իր աչքերը, որոնք դուռ էին դեպի իր անձը: Նա սխալ վայրում էր՝ սխալ ժամանակ, նրա միտքն անգործ էր, և բացի այդ՝ նա չէր հսկում իր աչքերը: Բերսաբեն դարձել էր նրա թիրախը, և նա չէր կարողանում մտահան անել նրան:

Ես ցանկանում եմ, որ դուք գիտակցեք հետևյալը. թեև թվում էր, թե Դավթի ամեն մի քայլը պարտության էր տանում նրան, բայց եթե նա ընդամենը մեկ կամային քայլ աներ, եթե պարզապես ասեր՝ ես ձախողվեցի և ապաշխարում եմ դրա համար, նա կշտկեր ամեն ինչ:

# ՃՇՄԱՐԻՏ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Բոլորս էլ մեղանչել ենք, այդ պատճառով, բոլորս կարող ենք ինչ-որ չափով հասկանալ Դավթի իրավիճակը: Մենք չենք կարող նայել որևէ մեկին և ասել. «Դու մեղանչել ես, իսկ ես սուրբ եմ»: Ո՛չ. բոլորս էլ ձախողվել ենք: Բայց գոհությո՛ւն Աստծուն, որ մեզ տրվել է Սուրբ Հոգին, Ով միշտ մեզ հետ է՝ շտկելու և զգուշացնելու համար: Եթե մենք լսենք Նրան, ապա ամեն իրավիճակում կարող ենք ասել. «Այո՛, Աստված: Շնորհակալություն, Տե՛ր: Ես կշրջվեմ դրանից հե՛նց հիմա»:

Ապաշխարություն՝ նշանակում է փոփոխություն: Ապաշխարություն՝ չի նշանակում անգիր ասել Ա Հովհաննես 1.9-ը և շարունակել գործել նույն մեղքը: Երբ մենք ճշմարտապես ապաշխարում ենք, մենք շրջվում ենք և գնում այլ ճանապարհով: Միայն համարձակ քրիստոնյան ոտքի կելնի և կասի. «Ես ձախողվել եմ: Ահա իմ սխալը, բայց ես փոխվում եմ և շտկում այն»: Երբ մենք ձախողվում ենք, Աստված պատրաստ է վերականգնել մեզ: Նա ողորմած և շնորհքով լի Աստված է: Մենք նաև ունենք քրիստոնյա եղբայրներ և քույրեր, ովքեր ձեռք կմեկնեն մեզ և կասեն. «Ե՛կ: Ոչի՛նչ: Մենք կօգնենք, որ դուրս գաս դրանից»: Եվ այդ հավատացյալները մեզ հետ կլինեն մինչև վերջ:

Կարդալով պատմությունը Դավթի և «փոսի» մասին՝ հնարավոր է, որ տեսնեք, որ ինչ-որ առումով դուք նրա պես եք վարվում: Բարի լուրն այն է, որ դուք կարող եք վերջ տալ դրան հենց հիմա: Ես հավատում եմ, որ հանգամանքների ինչպիսի փոսում էլ լինեք, կա մի զորություն, որը եկել է՝ ձեզ դրանից դուրս հանելու համար: Ես նկատի ունեմ պատասխանատվության զորությունը, պատվի զորությունը և ապաշխարության զորությունը: Իմացե՛ք, որ այսօր՝ հենց այս գիրքը կարդալու ընթացքում, Աստված ցանկանում է ձեռք մեկնել և դուրս հանել ձեզ այն փոսից, որում գտնվում եք: Ձեր կյանքը շրջադարձային փոփոխություն է ապրելու՝ դեպի լավը:

# • ԳԼՈՒԽ 5 •

## *Հովսեփը և ծրագիրը*

Հովսեփի փոսը նման չէր Դավթի փոսին: Հովսեփը հայտնվեց մեծ նեղությունների մեջ, որոնք էտեցին նրան և բարձրացրին դեպի իր կոչումը: Դավթի փոսը, ի տարբերություն սրան, սեփական մեղավորությամբ առաջացած արգելք էր:

Կարդալով նրա պատմությունը՝ կնկատեք, որ Հովսեփն ասաց և արեց այնպիսի բաներ, որոնք «օգնեցին», որ նրա կյանքում նեղություններ գան. այնուամենայնիվ, նրա փորձառությունն անկարելի է համեմատել Դավթի «գլորվող ձնագնդի» հետ:

Երբեմն Տերը վերցնում է ձեզ ինչ-որ տեղից և տանում այնտեղ, որտեղ դուք պետք է լինեք: Ահա թե ինչ կատարվեց Հովսեփի հետ: Ամեն անգամ, երբ սատանան մտածում էր, որ ձախողել է Աստծո ծրագիրը Հովսեփի կյանքում, Տերը միջամտում էր՝ նրան վերականգնելու և առաջխաղացում տալու համար: Հովսեփի կյանքն ասես վերուվար գնացող ամերիկյան զվարճագնացք լիներ, բայց արդյունքը լիովին արժեր նրա կրած դժվարություններին. Հովսեփը դարձավ Տիրոջ փորձված և ընտիր անոթը: Նա անգնահատելի էր Աստծո ծրագրի մեջ:

*Սա վերաբերում է նաև ձեզ:*

Հովսեփի պատմությունն սկսվում է Ծննդոց գրքի 37-րդ գլխից: Հովսեփի հայրը սիրում էր նրան ավելի, քան իր մյուս որդիներին, և նա

ցույց տվեց դա՝ նրա համար բազմերանգ պատմուճան պատրաստելով: Հովսեփին ակնհայտորեն վայելում էր հոր բարեհաճությունը, ինչը խիստ վրդովմունք և ատելություն էր առաջացնում իր եղբայրների մոտ:

Տասնյոթ տարեկանում Հովսեփը երազ տեսավ այն մասին, որ իր ընտանիքը խոնարհվելու է իր առջև: Հովսեփի և իր եղբայրների հարաբերությունները մինչ այդ էլ լարված էին, բայց չնայած դրան՝ նա պատմեց բոլորին իր երազը: Այն լսելուց հետո եղբայրները, ովքեր առանց այն էլ նախանձում էին Հովսեփին, է՛լ ավելի ատեցին նրան: Դրանից հետո Հովսեփը ևս մեկ խորհրդանշական երազ տեսավ, որը կրկին յուղ լցրեց կրակի մեջ: Երկրորդ երազում արևը, լուսինը և տասնմեկ աստղեր խոնարհվում էին իր առջև: Այս անգամ նրա եղբայրների զայրույթին չափ չկար: Նրանց նախանձը բորբոքվեց Հովսեփի դեմ:

## ԱՌԱՋԻՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփի երազներից կարճ ժամանակ անց նրա հայրն ուղարկեց մյուս եղբայրներին Սյուքեմ՝ հոտերն արածեցնելու համար: Երբ եղբայրներն արդեն բավականին ժամանակ էր՝ գնացել էին, հայրը նկատեց, որ Հովսեփը ձանձրանում է, քանի որ անելիք չունի, և շոյելով որդու գլուխը՝ ասաց.

– Գնա՛, գտի՛ր եղբայրներիդ, իսկ հետո վերադարձի՛ր և ասա՛, թե ինչպես են նրանք և հոտերը:

Եղբայրները հեռվից տեսան, որ Հովսեփը մոտենում է իրենց: Նրան տեսնելուն պես՝ ատելությունը բորբոքվեց նրանց սրտերում:

Նրանցից մեկն ասաց.

– Այդ երազ տեսնողը գալիս է: Եկե՛ք սպանենք նրան և ասենք հորը, որ նրան վայրի գազան է հոշոտել:

Դուք երբևէ լսե՞լ եք պատմություններ այնպիսի մարդկանց մասին, ովքեր այնքա՛ն են ատում ինչ-որ մեկին, որ ուզում են սպանել նրան և ասել Աստծուն, որ այդ մարդը մահացել է: Ես դա անվանում եմ «Հովսեփի եղբայրների համախտանիշ»:

Ռուբենը՝ ավագ եղբայրը, լսեց, թե ինչ էին որոշել եղբայրները, և ասաց նրանց.

– Մի՛ սպանեք նրան: Գցե՛ք անապատի փոսերից մեկը:

Ռուբենը ծրագրում էր գաղտնի վերադարձնել նրան հոր մոտ, երբ արևը մայր մտներ:

Մյուսները համաձայնեցին և հանելով Հովսեփի վրայից գեղեցիկ պատմուճանը՝ գցեցին մի փոսի մեջ և թողեցին այնտեղ: Եվ երբ նրանք ճաշում էին, եղբայրներից մեկն ասաց.

– Եկե՛ք չթողնենք, որ Հովսեփը մահանա փոսի մեջ: Ի վերջո, նա մեր մարմինը և արյունն է: Եկե՛ք վաճառենք նրան՝ որպես ստրուկ, և կիսենք փողը:

Այդպիսի սիրտ ունեցող մարդկանց կյանքում նույնիսկ սատանան է ավելորդ:

Որոշ ժամանակ անց նրանց կողքով անցնում էին մի խումբ իսմայելցի ճանապարհորդներ: Եղբայրները վաճառեցին Հովսեփին քսան արծաթով՝ առանց Ռուբենին իմացնելու:

Ուշ երեկոյան Ռուբենը որոշեց իրագործել իր փրկության ծրագիրը: Չգտնելով կրտսեր եղբորը՝ նա բարկացած վազեց դեպի վրանը, որտեղ մյուս եղբայրներն էին, և բղավեց.

– Ի՞նչ եք արել: Ո՞ւր է Հովսեփը: Ես չե՛մ կարող վերադառնալ հորս մոտ՝ առանց նրա:

Եղբայրները պատմեցին, որ վաճառել են նրան: Նրանք որոշեցին վերցնել Հովսեփի բազմերանգ պատմուճանը և թաթախել գառան արյան մեջ: Նրանք վերադարձրին այդ պատմուճանն իրենց հորը՝ ասելով.

– Հովսեփը մեզ հետ չի եղել: Սա նրա՞ պատմուճանն է:

Հայրը սգի մեջ մտավ՝ կարծելով, որ ինչ-որ վայրի գազան հոշոտել է իր սիրելի որդուն:

Այդ ժամանակ Հովսեփն արդեն ստրուկ էր ինչ-որ տեղ՝ Եգիպտոսի խորքերում:

## ՄԱՐԶՄԱՆ ՓՈՒԼ Ա. ԱՍՏԾՈ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԸ

Պետափրեսը, ով փարավոնի պաշտոնյաներից էր, տեսավ իսմայելցիների խումբը և մի գեղեցկատես պատանու՝ նրանց հետ: Պե-

տափրեսին ծառա էր հարկավոր իր ընդարձակ տան համար, և նա առաջարկեց գնել Հովսեփին: Համաձայնելով գնի հարցում՝ Պետափրեսն իր տուն տարավ նրան (տե՛ս Ծննդ. 39):

Ցանկանում եմ, որ մի շատ կարևոր բան հասկանաք: Թեև Հովսեփի եղբայրներն ատեցին և դավաճանեցին նրան՝ զրկելով ծնողական խնամքից և հանձնելով բախտի քմահաճույքին, սակայն Աստված նրա հետ էր: Հիշե՛ք սա. թեև ձեր կյանքը ցավոտ լինի, եթե Աստված ձեզ հետ է, այլևս ոչ մի բան կարևոր չէ: Նա կկարգավորի ամեն ինչ: Նախ՝ փնտրե՛ք Աստծո թագավորությունը և Նրա բարեհաճությունը. մնացած ամեն ինչը կավելանա դրան:

Աստվածաշունչը հետևյալ կերպով է նկարագրում սա Ծննդոց 39.2,3-ում.

*«Եվ Եհովան Հովսեփի հետ էր, և նա հաջողակ մարդ էր և իր Եգիպտացի տիրոջ տանն էր:*

*Եվ նրա տերը տեսավ, որ Եհովան նրա հետ էր, և թե՝ ինչ որ անում էր, Եհովան հաջողում էր նրա ձեռքով»:*

Այս խոսքերը չեն տեղավորվում մեր մտքում: Ինչպե՞ս Հովսեփը կարող էր հաջողակ լինել, եթե ստրուկ էր: Պատճառն այն էր, որ Տերը նրա հետ էր: Այն ամենը, ինչին դիպչում էր նրա ձեռքը, հաջողվում էր:

Եթե դուք փնտրում եք Տիրոջը, ներկա հանգամանքները մեծ ազդեցություն չեն ունենա ձեր կյանքի ընթացքի վրա: Մեկ անգամ մի քարոզիչ ասաց. «Հաջողությունը կամ պարտությունը որոշվում են այն բանով, թե ինչ կա ձեր հոգում: Դրանք ոչ մի կապ չունեն ձեր հանգամանքների հետ»: ***Կարևոր չէ, թե ինչ իրավիճակում եք. կարևորն այն է, թե ի՛նչ եք դուք անում և ո՛ւմ եք փնտրում այդ իրավիճակում:***

## ԱՍՏԾՈ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփը՝ ում տեսնում էր, չէր ասում. «Աստված ինձ հետ է»: Մենք էլ չպետք է այդպես վարվենք: Երբ ձեր կյանքը տարբերվի, նույնիսկ Աստծուն չճանաչող մարդիկ կնկատեն դա: Երբ Աստծո բարեհաճությունը մարդու վրա է, դա նկատելի է: Եգիպտացի Պետափրեսը նույնպես հասկացավ դա:

Ուշադրություն դարձրեք, որ Պետափրեսը նկատեց Աստծո բարեհաճությունը Հովսեփի կյանքում ոչ այն պատճառով, որ նա աղքատ էր: Ոչինչ գրված չէ այն մասին, որ Հովսեփն աղքատության երդում էր տվել: Նրա կյանքում եղած բարեհաճությունը և նրա հոգևոր լինելը կախված չէին այն դժվարին ժամանակներից, որոնցով նա անցնում էր: Աստված նման բան չի ասում. այդ մասին սովորեցնում է կրոնը, և շատերը հավատացել են դրան:

Դուք կանցնեք դժվարին ժամանակներով: Գաղափարն այն մասին, որ երբեք չեք հանդիպի դժվարությունների, հավատքի մոլորություն և թյուրըմբռնում է: Երբ լսում եմ այն քարոզիչներին, ովքեր ասում են անհավատներին, որ եթե նրանք ընդունեն Քրիստոսին, կյանքը վարդագույն կդառնա, մարմնովս սարսուռ է անցնում: Կյանքը վարդագույն չի դառնա, բայց այն կարող է փառավոր լինել: Ձեր ճանապարհին դուք կհանդիպեք փշերի, բայց եթե վստահեք Աստծուն, Նա կբժշկի դրանցից առաջացած վերքերը: Եթե լսեք Աստծուն, դուք կարող եք ազատվել այդ փշերից և վերապրել Նրա փրկության փառքը:

Պետափրեսը տեսավ հաջողությունը Հովսեփի կյանքում, քանի որ ինքը նույնպես հաջողակ մարդ էր: Նա գիտեր, որ Հովսեփը չուներ բնական պայմաններ՝ նման հաջողություն ունենալու համար. նշանակում է՝ այն պետք է Աստծուց լիներ: Պետափրեսն առաջխաղացում տվեց Հովսեփին՝ վերակացու նշանակելով իր ամբողջ ունեցվածքի վրա:

Փորձե՛ք պատկերացնել, թե ինչ տեղի ունեցավ: Հովսեփը պատկանում էր մի ժողովրդի, որոնք եգիպտացիների թշնամիներն էին: Նա «թշնամու ճամբարից» էր: Բայց այնպիսի բարեհաճություն գտավ Պետափրեսի առջև, որ դարձավ նրա օգնականը և ամբողջ ունեցվածքի վերակացուն: Պետափրեսի ամբողջ հարստությունը՝ դաշտերը, տունը և ունեցվածքը, վստահված էր Հովսեփին: Ինչպիսի՜ գերբնական բարեհաճություն:

## ՕԾՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Աստվածաշունչը շարունակում է՝ ասելով, որ Պետափրեսը բարգավաճեց այն օրվանից, երբ դարձրեց Հովսեփին իր ամբողջ ունեց-

վածքի վերակացուն: Այլ կերպ ասած՝ Տիրոջ օրհնությունն այդ տան վրա էր, քանի որ Հովսեփն էր ղեկավարում այն:

Դուք գիտե՞ք, որ Աստծո օրհնությունը կարող է լինել ձեր աշխատավայրում՝ ձե՛ր շնորհիվ: Սա ճշմարտություն է: Կան տարբեր տեսակի վկայություններ այն մասին, որ հավատացյալներն աշխատանքի են ընդունվել ինչ-որ վայրում, և արդյունքում այն բարգավաճել է: Մի կին աշխատանքի էր ընդունվել փակման շեմին գտնվող շինարարական ընկերությունում և ամեն օր բարեխոսում էր այդ ընկերության համար: Արդյունքում՝ Աստված անհավատալի բարգավաճում տվեց նրանց: Այդ ընկերության սեփականատերը թագավորական աշխատավարձ նշանակեց այդ կնոջ համար և երկու տարին մեկ նոր մեքենա էր գնում նրա համար: Այդ մարդն այնքա՜ն շնորհակալ էր այդ կնոջ ներկայության և ջանքերի համար, որ անում էր ամեն ինչ, որպեսզի նա երբեք ոչ մի կարիք չունենար:

Եթե Աստված ձեզ տարել է որևէ աշխատավայր, մի՛ բողոքեք և մի՛ տրտնջացեք այդտեղի խնդիրների պատճառով: Աղոթե՛ք, որ այդ աշխատավայրը փոխվի. աղոթե՛ք, որ այն բարգավաճի: Եթե այդպես վարվեք, կփոխվի նաև ձեր վերաբերմունքը, և ձեր աշխատակիցները կնկատեն դա: Տիրոջ բարեհաճությո՛ւնը կգա ձեզ վրա:

Եթե ձեզ մոտ աշխատում են քրիստոնյաներ, ովքեր օգնում են, որ ձեր գործը կամ եկեղեցին բարգավաճի, այնպես արեք, որ նրանք նույնպես բարգավաճեն: Եթե դուք հավատացյալ ձեռնարկատեր եք կամ՝ եկեղեցու հովիվ, թույլ մի՛ տվեք, որ ձեր կարևոր աշխատակիցները կարիքի մեջ լինեն: Նույնիսկ Պետափրեսը, ով խորհրդանշում է այս աշխարհը, շատ լավ հասկանում էր, որ պետք է աներ դա: Նա մեծ բարգավաճում բերեց Հովսեփի կյանքում, որովհետև Հովսեփը բարգավաճում էր բերում իրեն: Այնպես որ, եթե ձեր աշխատողներն օգնել են ձեզ առատության հասնել, անպայման առատորեն օրհնե՛ք նրանց:

Այս սկզբունքը կիրառելի է ամեն բնագավառում: Նույնիսկ եթե դուք սենյակ եք վարձել անհավատ մարդկանց տանը, Աստված կարող է օրհնել այդ տունը: Ես ճանաչում եմ ընտանիքներ, որտեղ ոչ ոք չի ծառայել Տիրոջը՝ բացի տան տիկնոջից, և այդ կնոջ շնորհիվ Աստ-

ված օրհնել է նրա ընտանիքի բոլոր անդամներին, նույնիսկ՝ նրա բռնակալ ամուսնուն:

Աստծո օրհնությունը չի գալիս ձեր անձնական սրբության պատճառով: Ո՛չ, Աստված օրհնում է, քանի որ դուք արդարացված եք Քրիստոս Հիսուսի միջոցով: Հիսուսի արյան շնորհիվ՝ ձեր ձեռքերն արդար են, և Աստված պահում է Իր ուխտը: Այնպես որ, Աստծո օրհնությունը գալիս է այն ամենի վրա, ինչին ձեր ձեռքը դիպչում է: Նա օրհնում է այն ամենը, ինչ դուք անում եք:

Բայց դուք պետք է հավատաք, որ Նրա բարեհաճությունը և օրհնությունը ձեզ համար են: Դուք պետք է գործուն դարձնեք ձեր ուխտը՝ հավատալով դրան: Հավատացե՛ք, որ Աստված ձեր կողմն է, որ Նա ձեզ հետ է, և որ այն ամենը, ինչին դիպչի ձեր ձեռքը, բարգավաճելու է:

Աստվածաշունչն ասում է, որ Պետափրեսն այնքան էր վստահում Հովսեփին, որ նույնիսկ տեղյակ չէր իր տանը եղած բաներից՝ բացի այն հացից, որն ուտում էր:

Անկասկած՝ սատանան նկատեց այն բարեհաճությունը, որը Հովսեփը վայելում էր, և սկսեց մտածել, թե ինչպես վերջ տա դրան: Մի՛ տարվեք հաջողությամբ այն աստիճան, որ չնկատեք թշնամու դավերը, այլապես՝ դուք փոսում կհայտնվեք:

## ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հովսեփն արդեն գեղեցիկ տղամարդ էր դարձել: Նա բարեհաճություն և հաջողություն ուներ, ինչն ավելի գրավիչ էր դարձնում նրան: Եվ սատանան օգտագործեց դա:

*«Եվ եղավ այս բաներից հետո, որ նրա տիրոջ կինը աչք բարձրացրեց Հովսեփի վրա և ասաց. «Պառկի՛ր ինձ հետ»»* (խոսք 7):

Հովսեփը վերահսկում էր տան ամեն ինչը: Պետափրեսը մեծ մասամբ տանը չէր լինում, իսկ Հովսեփը, ով գեղեցիկ, ազդեցիկ և հաջողակ տղամարդ էր, միշտ տեսադաշտում էր: Պետափրեսի կինը, հավանաբար, նույնպես գեղեցիկ էր և շատ ազատ ժամանակ ուներ: Նա աչք դրեց Հովսեփի վրա և սկսեց գործածել իր ամբողջ հրապու-

րանքը՝ նրան գայթակղեցնելու համար: Նա սովոր էր ունենալ այն, ինչ ցանկանում էր, և Հովսեփը չպետք է բացառություն լիներ:

Այնուամենայնիվ, Հովսեփն այնպիսի բնավորության և անկեղծության տեր մարդ էր, որ մերժեց նրան՝ ասելով.

*«Այս տան մեջ ինձնից մեծը չկա, և ինձնից մի բան չարգելեց՝ բացի քեզնից, ըստ որում դու նրա կինն ես: Ուրեմն ես ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը և Աստծո դեմ մեղանչեմ»* (խոսք 9):

Ի տարբերություն Դավթի՝ Հովսեփը հրաժարվեց թույլ տալ, որ իր մարդկային ցանկությունները իշխեն իր վրա: Բայց կարծում եք՝ նրա որոշումը վե՞րջ դրեց այդ իրավիճակին և կանգնեցրե՞ց սատանային: Ո՛չ: Աստվածաշնչում գրված է, որ այդ գեղեցիկ կինն ամեն օր ստիպում էր նրան պառկել իր հետ:

Սատանան հանգիստ չի տա ձեզ և կնյարդայնացնի՝ կաթկթացող ծորակի պես: Երբ ծորակը նոր է սկսում կաթկթալ, դուք ուշադրություն չեք դարձնում դրան: Բայց գիշերվա կեսին, երբ դուք հոգնած եք, այդ ձայնը պայթող ռումբի պես բարձր է թվում: Այն արձագանքում է ամբողջ տնով և սկսում է հոգնեցնել ձեզ: Սատանան հենց այդպես է վարվում: Նա հոգնեցնում է ձեզ՝ գայթակղեցնելով և հանգիստ չտալով, մինչև որ ձեզ թվում է, թե դուք այլևս չեք կարող դիմանալ: Նա այնքան է անում դա, մինչև որևէ թույլ տեղ է գտնում, և այդ ժամանակ հարվածում է:

Պատկերացնո՞ւմ եք, թե որքան անհարմար իրավիճակում էր Հովսեփը: Դուք տեսնո՞ւմ եք, որ եթե Հովսեփի մտքում թեկուզ անբարոյության նշույլ լիներ, նա տեղի կտար:

Հովսեփը նայում էր ավելի հեռուն, քան այդ կինը, և տեսնում էր մեղքը, որը հակառակ էր Աստծուն: Հովսեփը նայում էր կյանքին հավիտենության տեսանկյունից: Ուշադրություն դարձրեք, որ Հովսեփը չասաց. «Եթե քնեմ քեզ հետ, ես մեղք կգործեմ քո ամուսնու դեմ»: Այո՛, դրանով նա կմեղանչեր այդ կնոջ ամուսնու դեմ, բայց գոյություն ունի շատ ավելի մեծ ճշմարտություն: Նա կմեղանչեր Աստծո դեմ և չէր արդարացնի Նրա սպասումները: Չէ՞ որ այն բարեհաճությունը, դիրքը, որոնք Հովսեփն ուներ, Տիրոջից էին: Տիրոջ բարեհաճության շնորհիվ էր, որ Պետափրեսը վերակացու էր նշանակել նրան:

Այնուամենայնիվ, այս խոսքերը չկանգնեցրին Պետափրեսի կնոջը: Սատանան մտածում էր, որ դեռ մի օր կկարողանար ծուղակը գցել Հովսեփին, երբ նա ճնշված և փխտված լիներ: Նա մտածում էր, որ այդ կնոջ հետամուտ լինելու պատճառով Հովսեփը կարող էր ցանկալի և ազդեցիկ զգալ իրեն: Սատանան ուզում էր տալ Հովսեփին այդ պատրանքը:

## ԼՍԵ՛Ք ԻՆՁ

Ամեն օր թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ընկնում են պոռնոգրաֆիայի մահացու փոսը: Նրանք պատրանք են ստանում, որի պատճառով իրենց ցանկալի, բաղձալի և ազդեցիկ են զգում: Մարդիկ մտածում են, որ պոռնոգրաֆիան՝ բնական մարդկային ցանկություն է, բայց այն աննորմալ է: Մարդիկ մտածում են, որ այն «թաքուն» մեղք է, որը ոչ մի հետևանք չունի, բայց սխալվում են: Շուտով այդ «թաքուն» մեղքը գերում է նրանց: Այն կառավարում և վերահսկում է մարդկանց՝ ֆիլմերի և ամսագրերի միջոցով: Դրա կենդանական բնույթը ցանկանում է ավելին ու ավելին, մինչև որ լիովին կլանում է մարդուն, և մեղքը նրա կյանքում բացահայտ է դառնում:

Մասսայական սպանություններ կատարող մարդիկ խոստովանում են, որ կախվածություն ունեն ծանր պոռնոգրաֆիայից: Նրանք սկսել են անմեղ թվացող բաներից, բայց նրանց ցանկությունն ու ախորժակն այնքան են մեծացել, որ պետք է այլասերված սեռական կապեր ունենան և սպանություն գործեն՝ իրենց բթացած միտքը խթանելու և սեռական գրգռվածություն զգալու համար: Եթե դուք որևէ կերպով առնչվում եք պոռնոգրաֆիայի հետ, դուք փոսի մեջ եք: Անմիջապես դիմե՛ք օգնության և մի՛ սպասեք: Այդ փոսը կկործանի ձեզ:

Թույլ տվեք ևս մեկ բան ասել, քանի դեռ խոսում ենք այս մասին: Դադարե՛ք սիրախաղեր անել հակառակ սեռի ներկայացուցիչների հետ այն ժամանակ, երբ բարկացած եք ձեր ամուսնու կամ կնոջ վրա: Սա հատկապես կանանց թույլ կողմն է, բայց տղամարդիկ նույնպես մեղավոր են այս հարցում: Երբ դուք բարկանում եք և մտածում եք, որ իրավունք ունեք հակառակ սեռի ներկայացուցիչնե-

րի հետ անելու՝ ինչ ցանկանում եք, դուք մեծ վտանգի մեջ եք: Բավակա՞ն է պատմեք ձեր կողակցին, որ ինչ-որ մեկը հաճոյախոսել է ձեզ՝ ասելով, թե որքան գեղեցիկ եք: Ես կասեմ ձեզ, թե ինչու եք այդպես վարվում: Այդ պահին դուք մերժվածություն և երկչոտություն եք զգում ձեր ներսում: Դուք հույս ունեք մի փոքր խանդ առաջացնել ձեր կողակցի մոտ, որպեսզի ավելի լավ զգաք: Վե՛րջ տվեք դրան: Սատանան նման փոքրիկ կետեր է որոնում ձեր կյանքում: Եթե դուք չլրջանաք, այդ փոքրիկ կետերը սև խոռոչներ կդառնան, և թե՛ դուք, թե՛ ձեր կողակիցը փոսի մեջ կհայտնվեք:

## ՍՈՒՏԸ

Սատանան օգտագործեց Պետափրեսի կնոջը, որպեսզի գայթակղեցնի Հովսեփին և դրդի նրան մեղանչել՝ իր ցանկությունների պատճառով: Բայց Հովսեփը թույլ չտվեց իրեն գայթակղվել այդ կնոջով, և սատանան այլ ծրագիր կազմեց:

*«Եվ եղավ, որ նա մի օր իր գործը կատարելու համար տուն եկավ, և այնտեղ՝ տան մեջ, տան մարդկանցից մեկը չկար:*

*Եվ տիկինը բռնեց նրա հանդերձից՝ ասելով. «Պառկի՛ր ինձ հետ»: Եվ նա իր հանդերձը թողեց նորա ձեռքում և փախավ դուրս գնաց:*

*Եվ եղավ, երբ որ տեսավ, որ նա իր հանդերձը նրա ձեռքում թողեց և դուրս փախավ, իր տան մարդկանց կանչեց և պատմեց նրանց՝ ասելով. «Տեսե՛ք, մեզ համար մի եբրայեցի բերեց՝ մեզ խայտառակ անելու համար: Նա ինձ մոտ եկավ, որ ինձ հետ պառկի, ու ես բարձր ձայնով աղաղակեցի»:*

*Եվ եղավ, երբ որ լսեց, թե ես իմ ձայնը բարձրացրի և աղաղակեցի, իր հանդերձը ինձ մոտ թողեց և փախավ ու դուրս գնաց»* (Ծննդոց 39.11-15):

Այս կինն այնպիսի ցանկություն ուներ Հովսեփի հանդեպ, որ անցավ խնդրանքների սահմանը և սկսեց հանել հագուստը նրա վրայից: Հովսեփը հրաժարվեց կատարել նրա ցանկությունը և փախավ այդ սենյակից:

Դուք պետք է իմանաք՝ ե՛րբ հաստատ կանգնել, և ե՛րբ փախուստի դիմել: Երկուսն էլ աստվածահաճո արձագանքներ են, պարզապես մենք պետք է սովորենք կիրառել դրանք իրենց ժամանակին:

Պետափրեսի կինն այնպիսի՜ նվաստացում զգաց Հովսեփի մերժման պատճառով, որ հետևեց այն ծրագրին, որը սատանան շշնջաց նրա սրտում: Նա կանչեց Հովսեփին ենթարկվող ծառաներին և ցույց տվեց նրա հագուստը: Նա պատմություն հնարեց այն մասին, որ Հովսեփը ցանկացավ բռնաբարել իր պես բարեպաշտ կնոջը և փախավ, երբ ինքն սկսեց ճչալ: Նա մատնանշեց, որ Հովսեփը հրեա էր՝ իրենց ազգի թշնամին: Դա նշանակում էր, որ նրա միակ նպատակը պետք է լիներ այդ ընտանիքը նվաստացնելը:

Երբ Պետափրեսը տուն եկավ, նրա կինը կրկնեց իր պատմությունը: Մեղմ ասած՝ նրա զայրույթին չափ չկար: Աստվածաշնչում գրված է, որ նա բանտ նետեց Հովսեփին այլ հանցագործների հետ: Հովսեփը, ով վերակացու էր Պետափրեսի տանը, վատ համբավ վաստակեց ամբողջ Եգիպտոսում և հայտնվեց բանտի խորը փոսում:

## ՀՆԱՐԱՎՈ՞Ր ԷՐ ԽՈՒՍԱՓԵԼ ԴՐԱՆԻՑ

Մինչև առաջ գնալը, ուզում եմ նշել երկու բան, որոնք, միգուցե, «նպաստեցին» տեղի ունեցածին: Ի տարբերություն Դավթի՝ Հովսեփն անմեղությամբ արեց դրանք: Չեմ ուզում ասել, որ դուք պետք է ամենուր վտանգ փնտրեք, բայց համոզված եմ, որ մենք պետք է լրացուցիչ նախազգուշական միջոցներ ձեռնարկենք, երբ տեսնում ենք, որ մեր դեմ հարձակում է պատրաստված: Այն, որ Հովսեփի ղեկավարի կինը շարունակ առաջարկներ էր անում նրան, պետք է դրդեր նրան ոչ թե պարզապես զգոն լինել, այլ խիստ զգուշավորություն ցուցաբերել:

**Առաջինը**՝ հիշե՛ք, որ թշնամին մշտապես ցանկանում է վարկաբեկել և նսեմացնել ձեզ: Իմանալով, թե ինչ մտքեր ուներ Պետափրեսի կինը՝ ***Հովսեփը ոչ մի դեպքում չպետք է տուն մտներ, երբ տանը ուրիշ ոչ ոք չկար:***

Երբ դուք շփվում եք հակառակ սեռի ներկայացուցիչների հետ, ձեզ հետ միշտ պետք է այլ մարդիկ լինեն: Ես և ամուսինս հովիվներ ենք, և

սա մեզ համար օրենք է, որը մենք խստորեն պարտադրում ենք, և որին խստորեն հետևում ենք: Նա մենակ խորհրդատվություն չի անցկացնում կանանց հետ: Ես մենակ խորհրդատվություն չեմ անցկացնում տղամարդկանց հետ: Ես երբեք ոչ մի տեղ չեմ գնում այլ տղամարդու հետ: Նա հետևում է նույն կանոնին՝ կանանց վերաբերյալ: Դուք իմաստուն կլինեք, եթե այսպես վարվեք: Սատանան փնտրում է ցանկացած հնարավորություն՝ ներս թափանցելու և ձեզ փոսի մեջ գցելու համար:

**Երկրորդը**՝ Հովսեփը կարող էր վերցնել իր հագուստը, որը Պետափրեսի կնոջ ձեռքում էր: Նա կարող էր մի պահ կանգ առնել և խլել այն նրա ձեռքից, բայց փախավ՝ կեղծ ապացույց թողնելով այդ կնոջ մոտ: Իմ կարծիքով՝ նույնպես հետաքրքիր է, որ այդ միջադեպի ընթացքում ոչ մի ծառա չկար, բայց հենց այն ավարտվեց, բոլոր ծառաները լսեցին իրենց տիրուհու ձայնը: Անկասկած՝ դա հոգևոր միջամտության արդյունք էր:

Հիշե՛ք. երբ հասկանում եք, որ ձեզ վրա հարձակում է գալիս, պաշտպանվե՛ք վտանգից և ուշադի՛ր եղեք ինքներդ ձեր հանդեպ: Լրացուցիչ նախազգուշական միջոցնե՛ր ձեռնարկեք, որպեսզի հնազանդվեք այն երկրի օրենքներին, որտեղ ապրում եք, և աչալրջորեն կանխե՛ք թմրությունը ձեր կյանքում: Երբ դուք գիտակցում եք, որ հարձակման եք ենթարկվել, պառկելու և ծուլանալու ժամանակը չէ՛: Փոխարենը՝ ժամանակն է, որ ճշտապահ և զգոն լինեք ձեր անձի, ձեր վերաբերմունքի և ձեզ շրջապատող մարդկանց հանդեպ:

## ՄԱՐԶՄԱՆ ՓՈՒԼ Բ. ԱԿՏԻՎ ՄԱՐԶՈՒՄ

Թեև Հովսեփը բանտարկվեց, ինձ այնքա՛ն են դուր գալիս հաջորդ խոսքերը.

*«Բայց Եհովան Հովսեփի հետ էր և ողորմություն ցույց տվեց նրան և բանտապետի առջև շնորհք գտնել տվեց նրան:*

*Եվ բանտապետը Հովսեփի ձեռքը հանձնեց բանտում եղած բոլոր բանտարկյալներին, և ամեն ինչ, որ այնտեղ անում էին, անողը նա էր:*

*Բանտապետը նրա ձեռքին եղած ոչ մի բանին չէր նայում, որովհետև Եհովան նրա հետ էր, և նրա բոլոր արածները Եհովան հաջողում էր»* (խոսքեր 21-23):

Ինչ էլ սատանան անի, նա չի կարող ետ պահել աստվածապաշտ մարդուն: Ես մտաբերում եմ Միքիա 7.8.

*«Մի՛ ուրախացիր ինձ վրա, ո՛վ իմ թշնամի, որովհետև, թեև ընկնեմ, վեր կկենամ, թեև խավարի մեջ նստեմ, Տերը ինձ լույս կլինի»:*

Հովսեփի նեղությունները չառաջացան մարմնական մեղքերի կամ ցանկությունների պատճառով: Տերը խոստում էր տվել նրան, և համաձայն Սաղմոս 105.19-ի՝

*«Մինչև այն ժամանակ, որ Նրա Խոսքը եկավ, Տիրոջ Խոսքը փորձեց նրան»:*

Համոզված եմ, որ Տերը պատրաստում էր Հովսեփին իր կոչման համար: Հովսեփը դեռ պետք է հասունանար մի շարք բնագավառներում, և դժբախտաբար, դա տեղի ունեցավ նեղությունների մեջ: Ես մտածում եմ, թե քանի՜ անգամ էր Հովսեփը նստում այդ խավար և խոնավ բանտում՝ մտածելով, որ չպետք է մենակ տուն մտներ այդ ժամանակ: Կամ՝ քանի՜ անգամ էր նա սեղմում բռունցքը՝ մտածելով, որ պետք է խլեր իր հագուստը Պետափրեսի կնոջ ձեռքից: Որքան էլ նա տրտմեր այդ պատճառով, Աստվածաշունչն ասում է, որ Տիրոջ ողորմությունը նրա հետ էր, և Նրա բարեհաճությունը շրջապատում էր Հովսեփին: Համոզված եմ, որ Հովսեփը սովորեց իր սխալներից և լիովին վստահեց Տիրոջ ծրագրին:

Երբ դուք վստահում եք Տիրոջը և Նրա ծրագրին, Նրա ողորմությունը նորոգվում է ամեն առավոտ:

Հովսեփը մի քանի տարի մնաց բանտում: Բանտում լինելու ընթացքում նա օգտագործեց իր պարգևները՝ մեկնելով մարդկանց երազները: Նա գիտեր, որ Տերը ժամանակ և վայր էր որոշել իր համար, և վստահում էր Նրան:

# ԱԿՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Որոշ ժամանակ անց փարավոնը մի երազ տեսավ, որը ոչ ոք չէր կարող մեկնել: Լսելով Հովսեփի մասին՝ նա դուրս բերեց նրան բանտից: Հովսեփն զգաց, որ դա Տիրոջ կողմից որոշված պահն էր: Նա սափրվեց և լողացավ, ինչից հետո կանգնեց Փարավոնի առջև:

Վերագրելով իր կարողություններն Աստծուն՝ Հովսեփը ոչ միայն մեկնաբանեց փարավոնի երազը, այլև ցույց տվեց փարավոնին, թե ինչ էր պետք անել: Փարավոնը նշանակեց Հովսեփին երկրորդ մարդը ամբողջ երկրում՝ իրենից հետո:

*«Եվ փարավոնն ասաց Հովսեփին. «Որովհետև Աստված այս ամենը քեզ իմացրեց, քեզ պես հանճարեղ և իմաստուն չկա:*

*Դու իմ տան վրա եղիր, և իմ ամբողջ ժողովուրդը քո բերանին հնազանդվի. ես միայն աթոռով քեզնից մեծ լինեմ»:*

*Եվ փարավոնն ասաց Հովսեփին. «Ահա քեզ Եգիպտոսի ամբողջ երկրի վրա դրի»:*

*Եվ փարավոնն իր ձեռքից մատանին հանեց և Հովսեփի ձեռքն անցկացրեց և նրան բեհեզյա հանդերձներ հագցրեց և նրա պարանոցին ոսկե մանյակ դրեց:*

*Եվ իր երկրորդ կառքի վրա հեծցրեց, և գոչում էին նրա առջև. «Ծո՛ւնր դրեք»: Եվ Եգիպտոսի ամբողջ երկրի վրա նշանակեց նրան»* (Ծննդոց 41.39-43):

Ինչպիսի՜ շրջադարձ: Քիչ առաջ Հովսեփը բանտում էր, իսկ այժմ ամբողջ երկիրը, որտեղ նա գտնվում էր, ծնկի է գալիս իր առջև: Հովսեփի պատանեկան երազն իրականություն էր դառնում: Տերը փորձել և մաքրել էր նրան, և հոգևորապես հասունացրել էր այդ մեծ կոչման համար:

Բայց կարծում եմ՝ մեծագույն փորձությունը Հովսեփի բնավորության համար այն էր, երբ նրա եղբայրները խոնարհվեցին նրա առջև՝ չճանաչելով նրան: Նրա եղբայրների մտքով նույնիսկ չէր անցնի, որ այն պատանին, ում իրենք ստրկության վաճառեցին քոչվոր իսմայելցիներին, դարձել է փարավոնի տեղակալը: Նույնիսկ ծանր սովը օգտագործվեց որպես միջոց՝ Հովսեփին իր օտարացած ընտա-

նիքի հետ միաբանելու համար: Դուք կարող եք կարդալ այս մասին Ծննդոց 42-45 գլուխներում:

Հովսեփը բարձրաձայն լաց եղավ, երբ հայտնեց իրեն եղբայրներին.

«*Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որ ինձ ծախեցիք Եգիպտոսում:*

*Եվ հիմա մի՛ վշտացեք և մի՛ նեղվեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետև Աստված ուղարկեց ինձ ձեր առջև կյանք պահելու համար:*

*Եվ արդ, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, այլ՝ Աստված, և ինձ՝ փարավոնին հայր, և նրա ամբողջ տանը՝ տեր, Եգիպտոսի ամբողջ երկրին՝ իշխան դրեց»* (Ծննդոց 45.4,5,8):

Թեև եղբայրները դաժանաբար վարվեցին Հովսեփի հետ, նրա գթասրտությունը նրանց հանդեպ անհավատալի էր: Նա ոչ միայն խնայեց նրանց կյանքը, այլև ամեն ինչով առատորեն մատակարարեց նրանց և նրանց ընտանիքներին, որպեսզի նրանք չհայտնվեն աղքատության մեջ:

## ԱՍՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ ՈՒՆԻ

Հաճախ մեզ թվում է, թե փոսի մեջ ենք, սակայն հետագայում պարզում ենք, որ դա փորձություն էր՝ մեր ապագա կոչման համար: Դուք հասկանո՞ւմ եք սա՝ Հովսեփի կյանքն ուսումնասիրելուց հետո:

Հետաքրքիր է՝ քանի՞ կրոնական մարդիկ չէին ցանկանա շփվել Հովսեփի հետ՝ նրա կյանքի բազմաթիվ «փոսերի» պատճառով: Քանի՞ իրենց անձն արդարացնող մարդիկ կմտածեին, որ Հովսեփը պետք է որ մեղք գործած լիներ՝ նման դաժան կյանք ունենալու համար: Հետաքրքիր է՝ քանի՞ անգամ ենք մենք սխալմամբ դատում մարդկանց մեր նեղ հայացքների և Աստծուն մակերեսորեն ճանաչելու պատճառով: Կարծում եմ՝ ժամանա՛կն է, որ մարդկանց սրտերը քննելը հանձնենք Աստծուն և միշտ պատրաստ լինենք օգնել նրանց, ովքեր օգնության կարիք ունեն, ոչ թե կոտրենք կամ վարկաբեկենք այն նեղությունների պատճառով, որոնք բաժին են հասել նրանց:

Եթե դուք վշտալի և հուսահատ վիճակում եք, և դա որևէ սխալ արարքի հետևանք չէ, մխիթարություն գտեք Հովսեփի պատմության

մեջ: Այդ ընթացքում սովորե՛ք այն, ինչ պետք է սովորեք: Թլփատե՛ք ձեր սիրտը: Հեռացրե՛ք այն խստասրտությունը, որը թույլ չի տալիս ձեզ սիրով հաղորդակցվել Տիրոջ և ձեզ շրջապատող մարդկանց հետ: Հեռացրե՛ք այն բաները, որոնք խանգարում են ձեզ քայլել Աստծո հետ:

Դուք փորձվելու եք այն բաների համար, որոնց հավատում եք: Օրինակ՝ երբ սկսում եք հավատալ բարգավաճմանը, հանկարծ կորցնում եք ձեր աշխատանքը: Սատանան փորձելու է հեռացնել ձեր ոտքերի տակից այն հիմքը, որի վրա կանգնած եք: Դուք կփորձվեք այն աստվածաշնչյան ճշմարտությունների համար, որը գիտեք, և այն սուրբգրային հատվածների համար, որոնք կենդանի են ձեր սրտում. մնացե՛ք կանգնած Աստծուց ստացած Խոսքի վրա՝ իմանալով, որ դուք դուրս եք գալու այդ փոսից: Ի սրտե հավատացե՛ք, մինչև որ սատանան դադարի պայքարել և պարտվի ձեր հավատքից: Կարևոր չէ, թե ինչպիսին էր ձեր իրավիճակը, և թե ինչ էր սատանան պատրաստվում անել: Դուք դո՛ւրս եք գալու այդ փոսից: Չհամարձակվե՛ք թուլանալ և չհանձնվե՛ք: Դուք կարող եք լինել ավելի դիմացկուն, քան սատանան:

Երբ Հովսեփը հասավ իր համար որոշված կոչմանը, նա շնորհակալ էր այն ամենի համար, ինչ ինքը կրել էր: Նա այնքան էր հասունացել, որ տեսնում էր Աստծո ձեռքն այդ ամենի մեջ: Նրա կյանքում այլևս չկար դառնություն և աններողամտություն որևէ մարդու հանդեպ: Համաձայն Հովսեփի խոսքերի՝ եթե չլինեին նրա կյանքի փոսերը, նա չէր հասնի իր դիրքին:

Ես հավատում եմ, որ այսօր դուք նույնպես կարող եք առաջ նայել և տեսնել, որ Աստված մեծ ծրագիր ունի ձեզ համար: **Ես հավատում եմ, որ ձեր հոգուց զորություն կբարձրանա և կհաղթահարի այն վախը և անհուսությունը, որոնք փորձել են սպառել ձեզ**: Մնացե՛ք Աստծո հետ և արե՛ք այն, ինչ Նա պատվիրում է: Ես երբեք չեմ տեսել, որ Աստված ելք չպատրաստի այն մարդկանց համար, ովքեր հետևում են Իրեն:

# • ԳԼՈՒԽ 6 •

## *Սա ձե՛ր գլուխն է*

Ուսումնասիրելով որոշ հատվածներ Դավթի և Հովսեփի կյանքերից՝ մենք տեսնում ենք, որ Աստված օգտագործում է իրական մարդկանց՝ իրական իրավիճակներում, և էտում է նրանց՝ Իր առաջնորդները դարձնելու համար:

Ես ուզում եմ, որ ուշադրություն դարձնեք այս երկու մարդկանց սրտի դիրքին: Թեև Դավթի խիղճն այրվել կամ բթացել էր որոշ ժամանակով, նա անմիջապես ապաշխարեց, երբ Նաթան մարգարեն բացահայտեց նրա շնությունը (տե՛ս Բ Թագ. 12): Դավիթը պետք է շատ ավելի վաղ ապաշխարեր, բայց չէր արել դա: Համոզված եմ, որ նա այնքա՛ն հուսահատորեն էր ձգտում թաքցնել իր սխալը, որ կիսախելագար էր դարձել: Աստված բերեց նրան որոշման կետի, երբ մարգարեն ցույց տվեց Դավթին նրա սրտի իրական վիճակը: Ինչպե՞ս կվարվեր Դավիթը՝ տեսնելով իր մեղքը: Նա կանիծեր մարգարեին, իսկ հետո՝ Աստծուն, և ի վերջո կմահանա՞ր, թե՞ կհիասթափվեր ինքն իրենից՝ համարելով, որ այլևս չի կարող առաջնորդ լինել: Ո՛չ: Ինչպես ասացի՝ Դավիթն անմիջապես ապաշխարեց, երբ մարգարեն բացահայտեց նրա մեղքը: Նա վերականգնեց իր հարաբերություններն Աստծո հետ և պատմության մեջ մնաց որպես Իսրայելի մեծագույն թագավոր:

Իսկ Հովսե՞փը: Ինչպե՞ս նա վարվեց, երբ նրան անարդարացիորեն մեղադրեցին, նվաստացրին և բանտարկեցին: Մի՞թե նա բարձրացրեց իր բռունցքը դեպի երկինք և անիծեց Աստծուն այն երազի համար, որը թվում էր՝ այլևս չէր իրականանա: Մի՞թե նա հուսահատորեն տարածեց ձեռքերը և աղաղակեց. «Ինչո՞ւ՝ ես»: Կամ՝ մի՞թե նա ընկճվեց և վերջ տվեց իր կյանքին, քանի որ գտնվում էր բանտում: Ո՛չ: Համոզված եմ, որ Հովսեփն օգտագործեց այդ ժամանակը՝ իր սիրտը քննելու համար: Հովսեփը գիտեր, որ Աստված որոշված ժամանակ ուներ իր համար, և նա հավատում էր, որ այն գալու է: Նա գիտեր, որ Աստված փրկել էր իրեն եղբայրների դավադրության փոսից, և հավատում էր, որ Աստված նույնպես կազատեր իրեն իր ներկա փոսից, որտեղ հայտնվել էր շնացող կնոջ մեղադրանքների պատճառով:

Նույնիսկ երբ բոլորը մոռացան Հովսեփին, նա հավատարիմ մնաց Աստծուն: Նա բարի տնտես դարձավ այն ամենի վրա, ինչը շրջապատում էր իրեն, և ծառայեց իր հետ գտնվող մարդկանց կարիքներին: Նա հասկացավ, որ Աստծո ձեռքը դուրս բերեց իրեն այն ամենից, ինչ տեղի էր ունեցել իր հետ: Հովսեփը թույլ տվեց, որ նեղության ժամանակները ձուլեին իրեն՝ դարձնելով այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված ստեղծել էր նրան: Իհարկե, երբ եկավ որոշված ժամանակը, Աստված կանգնեցրեց Հովսեփին փարավոնի առջև, և Հովսեփն առաջխաղացում ունեցավ՝ դառնալով երկրորդ մարդը ամբողջ Եգիպտոսում:

## ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այժմ մենք կխոսենք ձեր կյանքի մասին: Ի՞նչ եք դուք անում՝ ձեզ շրջապատող փոսից դուրս գալու համար: Ժամանակն է, որ քննեք ձեր սիրտը և հասկանաք ձեր կյանքի ընթացքը: Անձի նմանօրինակ վերլուծությունը ես անվանում եմ «տեղորոշման ժամանակ»:

Ուզում եմ, որ տաք ձեզ ստորև բերված հարցերը: Ոչ ոք չգիտի դրանց պատասխանները՝ բացի ձեզնից և Աստծուց: Եթե դուք ձախողվում եք այն բնագավառներում, որոնց անդրադառնում են այս հարցերը, շտկե՛ք ձեզ և փոխվե՛ք:

1. Ինչպե՞ս եք արձագանքում ձեր ներկա իրավիճակին: Դուք այն համարում եք փո՞ս, թե՞ ձեր կոչմանը տանող ծրագրի մասը:
2. Ինչպե՞ս եք պատասխանում սատանայից:
3. Ի՞նչ եք անում, երբ նա գայթակղեցնում է ձեզ:
4. Ինչպե՞ս կարձագանքեք, եթե ինչ-որ մեկը ծրագրի ձեր անկումը:
5. Արդյո՞ք Աստված առաջին տեղում է ձեր կյանքում:
6. Արդյո՞ք դուք հավատում եք այն խոստմանը, որը Նա տվել է ձեզ:
7. Դուք միշտ հավատո՞ւմ եք, որ Աստված կկատարի այն, ինչ ասում է:
8. Դուք կկատարե՞ք Նրա պատվիրանները և կանե՞ք այն, ինչ Նա պատվիրում է ձեզ:
9. Դուք աղոթո՞ւմ եք՝ փնտրելով Նրա երեսը:
10. Երբ դուրս գաք փոսից, դուք կճառայե՞ք, թե՞ կմոռանաք Նրան:

Աստված խաղ չի խաղում: Եթե հավատաք, Նա կհեռացնի ձեր կյանքի խոչընդոտները: Նա կհեռացնի այնպիսի բաներ, որոնք, ձեր կարծիքով, անհնար է հեռացնել:

Ես ուզում եմ, որ հիշեք հետևյալ երեք բաները:

## ԱՌԱՋԻՆԸ

Երկրորդ Օրինաց 29.9-ում գրված է.

*«Ուրեմն այս ուխտի խոսքերը պահե՛ք և կատարե՛ք, որ հաջողվեք ձեր ամեն գործի մեջ»:*

Այլ կերպ ասած՝ դուք պետք է կատարեք այն, ինչ Աստվածաշունչը պատվիրում է ձեզ: Դուք պետք է հնազանդությամբ ապրեք և կառուցեք ձեր կյանքը: **Հնազա՛նդ եղեք այն բանում, ինչ Աստված պատվիրում է ձեզ**:

## ԵՐԿՐՈՐԴԸ

Երկրորդ Մնացորդաց 26.5-ում գրված է.

*«Եվ խնդրում էր Աստծուն Զաքարիայի օրերում, որ Աստծո տեսիլքներին հմուտ էր, և որքան ժամանակ, որ նա խնդրում էր Տիրոջը, Աստված նրան հաջողություն էր տալիս»:*

Աստված կանի նույնը ձեզ համար, բայց դուք պետք է փնտրեք Նրա երեսը: Դուք պետք է ի սրտե ձգտեք Նրա ներկայությանը: Նա գիտի, թե ինչ է լինելու այսօր և վաղը: Նա գիտի, թե ուր պետք է գնաք, և որտեղից պետք է հեռու մնաք: Նա գիտի, որ ձեզ փող և աշխատանք է հարկավոր: Նա գիտի ձեր և ձեր երեխայի միջև խնդիրները: Նա ցանկանում է, որ դուք մտերմորեն ճանաչեք Իրեն՝ ինչպես երբեք չեք ճանաչել: Ես երաշխավորում եմ ձեզ՝ եթե չտաք Աստծուն առաջին տեղը, դուք կսկսեք հարվածներ ստանալ կյանքից: Բոլորի կյանքում էլ գալիս են նեղություններ, բայց դրանք հատկապես սարսափելի և ծանր են նրանց կյանքում, ովքեր մոռացել են Տիրոջը:

Ամենացավալի բաներից մեկը, որոնք ես նկատում եմ, այն է, որ երբ մարդիկ սկսում են բարգավաճել և բարեկեցիկ կյանք վարել, մենք այլևս չենք տեսնում նրանց եկեղեցում: Նրանք սկսում են մտածել, որ շատ զբաղված են, քանի որ տարբեր գործեր ունեն: Դա սատանայի ծուղա՛կն է: Նա ցանկանում է հասցնել ձեզ այնպիսի վիճակի, որ դուք ստանձնեք ձեր կյանքի վերահսկողությունը, և նա կհարվածի ձեզ, երբ ամենաքիչը սպասեք դրան: Սիրտս ցավում է այն մարդկանց համար, ովքեր կլանված են իրենց զբաղվածությամբ: Ես ուզում եմ բռնել նրանց օձիքից և ասել. «Չե՞ք հասկանում, որ դուք թշնամու թիրախն եք դառնում: Դուք թշնամու թիրա՛խն եք դառնում»:

**Դուք պետք է փնտրեք Տիրոջը ձեր բոլոր ճանապարհներում:**

## ԵՐՐՈՐԴԸ

Երկրորդ Մնացորդաց 31.21-ում գրված է.

*«Եվ իր բոլոր գործերում, որ սկսեց, թե՛ Աստծո տան ծառայության հարցում, և թե՛ օրենքի ու պատվիրանների հարցում, իր Աստծուն խնդրելով իր ամբողջ սրտով՝ արեց և հաջողվեց»:*

Այս խոսքում ասվում է երկու բանի մասին: Առաջինը՝ եթե դուք չունեք լավ եկեղեցի՝ հոգևոր ընտանիք, որտեղ կարող եք գնալ և աճ ունենալ Տիրոջ մեջ, գտե՛ք այն: Եթե ունեք, խնդրում եմ, մի՛ կառչեք ձեր նստարանից: Գտե՛ք մի բան, ինչը կարող եք անել եկեղեցում, և արե՛ք: Ես չգիտեմ նույնիսկ մի եկեղեցի, որտեղ կան ավելի շատ

ծառայողներ, քան անհրաժեշտ է: Միացե՛ք տեղական եկեղեցուն և դարձրե՛ք այն ձեր երկրորդ ընտանիքը:

Երկրորդը՝ ծառայե՛ք և փնտրե՛ք Աստծուն ամբողջ սրտով և ոչ թե թուլությամբ: Աստված կպատասխանի ձեզ, երբ սիրեք Նրան ամբողջ սրտով:

**Դուք պետք է աշխատեք և ծառայեք Աստծուն Տիրոջ տանը և անեք դա ձեր ամբողջ զորությամբ:**

# ՀԻՍՈՒՍԸ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է

Ձեր փրկությունը չի գա հանրահայտ հեռուստահաղորդումներից: Եթե ձեր հավատքն ուղղեք մարդկանց, դուք կհիասթափվեք: Հիսուսն ասաց, որ **Ինքն** է Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը (տե՛ս Հովh. 14.6): **Նա** է Փրկիչը: **Նա** է ճանապարհ բացում այնտեղ, որտեղ ճանապարհ չկա: **Նա** է լույս սփռում խավարում: **Հիսուսը** դուրս կբերի ձեզ փոսից և կկանգնեցնի ձեր ոտքերը ժայռի վրա:

Դուք նայում եք Հիսուսի՞ն, թե՞ ձեզ շրջապատող փոսին: Դուք նայում եք հանգամանքներին և խնդիրների՞ն: Ձեր հայացքն ուղղված է հիվանդությա՞նը: Մշտապես կենտրոնացած եք այն ամենի վրա, ինչը չի՞ ստացվում: Այդ դեպքում, դուք ավելի կխորասուզվեք ձեր փոսի մեջ:

Ուղղե՛ք ձեր հայացքը Հիսուսին: Ուղղե՛ք ձեր հայացքը Նրա մատակարարմանը, այն խոստումներին, որոնք Նա տվել է ձեզ, և Նրա պատրաստած ելքին: Նա ելք է պատրաստել ձեզ համար, բայց դուք պետք է որոշում կայացնեք, որ դուրս եք գալու: Հենց հիմա որոշում կայացրեք, որ չեք խոսելու ձեր խնդրի մասին և կլանված չեք լինելու դրանով: Փոխարենը՝ ուղղե՛ք ձեր հայացքը Տիրոջը և վստահե՛ք Նրան: Արե՛ք այն ամենը, ինչը ձեր ուժերի մեջ է: Միակ բանը, որը դուք պետք է անեք՝ այն է, ինչ Նա խնդրել է ձեզնից: Նա կհոգա մնացածը:

Հաջորդ երկու գլուխներում ես կպատմեմ մեր վկայությունը: Մենք անհավատալի մատակարարում ստացանք Աստծուց, երբ քայլ արեցինք՝ հնազանդվելով Նրա կանչին: Հավատում եմ, որ այս վկայությունը կօրհնի ձեզ, երբ դուք՝ Դավթի և Հովսեփի պես ստանաք Աստծո մատակարարումը և անցնեք ձեր ճանապարհը՝ «Փոսից» դեպի «Պալատ»:

# • ԳԼՈՒԽ 7 •

## *Աստծո բարեհաճության օրհնությունները*

Մենք քայլում էինք եկեղեցական լեփ-լեցուն դահլիճի միջանցքով, երբ Հովիվ Հաուսը կանչեց ամուսնուս.

– Ռասե՛լ, կարո՞ղ եմ մի պահ խոսել քեզ հետ:

– Իհա՛րկե,– պատասխանեց Ռասելը:

– Կարո՞ղ ես վերցնել ձեր ընկերության լիմուզիններից մեկը այս շաբաթավերջի համար: Մենք հյուր-քարոզիչ ունենք, և ես կուզեի, որ դու լիմուզինով եկեղեցի բերեիր նրան: Նա Բեննի Հինն է:

– Ո՞վ է նա,– հետաքրքրությամբ հարցրեց Ռասելը:

– Հազիվ թե դու լսած լինես նրա մասին: Նա ծառայող է Կանադայից և միայն վերջին մի քանի տարիներին է ծառայում Ամերիկայում:

– Խնդիր չկա: Միայն ասեք, թե որտեղ և` երբ պետք է դիմավորեմ նրան:

1978 թվականն էր: Ամուսինս և ես Սան Ֆրանցիսկոյում հավատարմորեն հաճախում էինք Աստծո ժողովների անդամ «Եկեղեցի՝ ժայռի վրա» ծաղկուն համայնքը: Ռոն Հաուսը՝ այդ եկեղեցու հիմնադիր հովիվը, գիտեր, որ ամուսինս աշխատում էր խոշոր բեռնափոխադրման ընկերությունում, որը երբեմն թույլ էր տալիս ոչ աշխատանքային օրերին օգտագործել ընկերությանը պատկանող

լիմուզինները: Նա մտածեց, որ լավ կլիներ, եթե լիմուզինով եկեղեցի բերեինք մեր հյուր-ավետարանչին: Մենք ոգևորվեցինք, որ հովիվ Հաուսը խնդրեց մեզ այդ մասին: Մենք սիրում էինք ծառայել մեր եկեղեցում և օգնել՝ ինչով կարող էինք:

Դրանից մի քանի տարի առաջ Ռասելը և ես կարդացել էինք Օրալ Ռոբերտսի գրքերից երկուսը՝ «Ցանքով և հավատքով կյանք» և «Առօրյա ուղեցույց հրաշքների համար»: Դրանք հեղաշրջեցին մեր կյանքը:

Դոկտոր Ռոբերտսը սովորեցնում էր, որ կա ցանելու ժամանակ, որ սերը և փողը սերմեր են, և որ ցանելուց հետո մենք պետք է սպասենք հունձքի: Այնպես որ, երբ հովիվ Հաուսը կանչեց մեզ և խնդրեց մեքենայով եկեղեցի բերել մեր հյուր-քարոզչին, մենք անչափ ուրախ էինք կատարել նրա խնդրանքը, քանի որ միշտ «ցանելու» հնարավորություն էինք փնտրում:

Երբ ժամանակն էր, որ հյուրանոցից եկեղեցի ուղեկցեինք Բեննի Հիննին, մենք եկանք հյուրանոցի մոտ, պատրաստ՝ ծառայելու: Մենք երբեք չէինք լսել նրա քարոզները, բայց առաջին անգամ հանդիպելով նրան՝ զգացինք, որ նրա կյանքում օծություն կար: Բեննին աշխույժ, կյանքով լեցուն և շատ դրական անձնավորություն էր: Մենք երկար չզրուցեցինք նրա հետ և որևէ տպավորիչ մարգարեություն չստացանք նրանից, բայց մեզ համար պատիվ էր կրել նրա պայուսակը՝ մեր եկեղեցում կայանալիք առաջին հավաքույթին: Մենք ներքուստ զգում էինք, որ Աստված գործում էր մեզ հետ՝ պատրաստելով մեր ապագան:

## ԱՍՏԾՈ ԿՈՉՈՒՄԸ

Մի քանի տարի շարունակ Ռասելն զգում էր, որ կանչված է լրիվ ժամանակվա ծառայության համար: Մինչև «Եկեղեցի՝ ժայռի վրա» եկեղեցական համայնքը հաճախելը, մենք Մկրտական եկեղեցում էինք: Մեկ անգամ Աֆրիկայից մի միսիոներ եկավ մեր եկեղեցի և հավաքույթի ժամանակ սկսեց արտապատկերիչով լուսանկարներ ցուցադրել իր միսիոներական ծառայությունից: Այդ հյուր-միսիոներն

այնպե՛ս հպվեց Ռասելի սրտին, որ նա ուզում էր թողնել իր աշխատանքը և տեղափոխվել Աֆրիկա: Ինձ համար շատ դժվար էր պատկերացնել մեր կյանքը ջունգլիներում գտնվող ինչ-որ հյուղակում:

– Դու խելագարվե՞լ ես,– ասացի նրան:– Ավելի լավ է՝ մտածես, թե ինչ ես խոսում:

Ես գիտեի, որ Աստված դրդում էր մեզ՝ ծառայել Իրեն, բայց նույնպես հասկանում էի, որ մենք հասունանալու կարիք ունեինք: Ռասելը մեծ ճնշումների էր ենթարկվում իր աշխատավայրում, և ես զգում էի, որ նա պարզապես փորձում էր փախչել դրանից: Այդ ժամանակ ես բավականաչափ ճանաչում էի Աստծուն՝ հասկանալու համար, որ փախուստը, որպես կանոն, Աստծո պատասխանը չէ: Աստված չի ցանկանում, որ մենք փախուստի դիմենք, երբ իրավիճակը բարդանում է: Նա ցանկանում է, որ մենք երես առ երես հանդիպենք կյանքի ճնշումներին և թույլ տանք, որ Նրա բնավորությունը ձևավորվի մեզանում: Հենց որ մենք հաջողության ենք հասնում մեր ներկա իրավիճակում, Նա առաջ է տանում մեզ: Տարիների ընթացքում ես սովորեցի երբեք վատ ձևով չհեռանալ որևէ տեղից: Ես միշտ փորձել եմ հեռանալ լավ ձևով, որպեսզի հետագայում ամաչելու ոչինչ չունենամ՝ իմանալով, որ ավարտել եմ իմ ընթացքն այնտեղ:

## ՀԵՏԵՎԵԼՈՎ ՆԵՐՔԻՆ «ԻՄԱՑՈՒԹՅԱՆԸ»

Այնպես չէր, որ ես չէի հավատում, որ Աստված կանչում էր մեզ: Ես հավատում էի դրան: Մարդիկ հաճախ մոտենում էին մեզ և ասում. «Դուք հովիվներ եք, ճի՞շտ է»: Այնուամենայնիվ, մենք չէինք առաջնորդվում միայն մարդկանց խոսքերով, այլև ունեինք ներքին «իմացություն», որ մեկ օր ծառայողներ ենք դառնալու:

Համոզված եմ, որ դուք ոչ մի դեպքում չպետք է վարվեք մարդկանց շողոքորթության հիման վրա: Ձեր սրտում պետք է Աստծուց դրված երազանք և ցանկություն լինի: Եթե Աստված երազանք չդնի ձեր սրտում, դուք չեք դիմանա, երբ դժվարին ժամանակներ գան:

Երբ Ռասելը որոշեց մնալ իր աշխատավայրում և գոհանում էր իր ներկա վիճակով, մեր ընթացքը դեպի մեր կոչումը՝ արագացավ:

# ԱՍՏԾՈ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1970-ականների վերջում մենք շատ էինք աղոթում և ցանում մեր ապագայի համար: Այդ ժամանակ Ռասելին առաջարկեցին ավելի բարձր պաշտոն իր աշխատավայրում, որի համար մենք պետք է տեղափոխվեինք Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքը: Այն հիվանդանոցը, որտեղ ես պառկած էի երիկամի խնդիրներով, հենց Հյուսթոնում էր: Հիշում եմ, որ հիվանդանոցում եղած ժամանակ ես դուրս էի նայում պատուհանից և ասում. «Աստվա՛ծ, խնդրում եմ, երբեք չտեղափոխես ինձ այստեղ»: Որտեղի՞ց կարող էի իմանալ, որ չանցած մեկ տարի՝ Աստված հենց այդտեղ էր տանելու մեզ: Ես միշտ ասել եմ, որ դուք պետք է զգույշ լինեք, երբ ասում եք Տիրոջը այնպիսի բաների մասին, որոնք դուք երբեք չեք անելու:

Ռասելն արդեն մերժել էր մի քանի նշանակումների և տեղափոխությունների առաջարկներ մեր ավագ դստեր՝ Շերիլի պատճառով, ով սովորում էր ավագ դպրոցում: Մենք չէինք ցանկանում, որ նա նոր դպրոց տեղափոխվեր իր կյանքի այդ փուլում, բայց, ի վերջո, ստիպված եղանք գնալ այդ քայլին: Դա մեծ նեղություն պատճառեց Շերիլին, բայց ետ նայելով՝ ես տեսնում եմ Աստծո ձեռքը մեր տեղափոխության մեջ:

Հյուսթոն տեղափոխվելով՝ մենք մի եկեղեցի գտանք քաղաքի հյուսիսային հատվածում, որը մեծ օրհնություն դարձավ մեզ համար: Մենք սկսեցինք ծառայել այդ եկեղեցում և հոգևորապես աճել Աստծո Խոսքը հասկանալու մեջ: Եկեղեցու հովիվը սովորեցնում էր մեզ հոգևոր ամրության մասին և՝ թե ինչպես պետք է վարվել դժվարին հանգամանքներում: Նա միշտ ասում էր. «Հաստատակամ մարդիկ երբեք կանգ չե՛ն առնում»:

Նոր աշխատավայրում Ռասելը մեծ դժվարություններ ունեցավ, բայց, միևնույն է, Աստծո բարեհաճությունն առաջխաղացում բերեց նրան: Մեկ օր՝ 1983 թվականին, Ռասելին խնդրեցին մեքենայով օդանավակայան ուղեկցել ընկերության Տնօրենների խորհրդի անդամներից մեկին, ով գտնվում էր մոտակա քաղաքներից մեկում: Ճանապարհին այդ մարդը հարցրեց Ռասելին, թե որտեղից է նա:

– Էլ Պասոյից,– պատասխանեց Ռասելը:

– Հետաքրքիր է,– ասաց նա:– Մենք մի աշխատակից ունենք Էլ Պասոյի մեր գրասենյակում, ով պատրաստվում է թոշակի անցնել: Կցանկանա՞ս վերադառնալ այնտեղ:

– Իհա՛րկե: Մեծ սիրով:

– Կարծում եմ՝ դու գերազանց թեկնածու ես այդ աշխատանքի համար,– շարունակեց նա:– Տո՛ւն գնա և խորհրդակցի՛ր ընտանիքիդ հետ, իսկ հետո զանգահարի՛ր ինձ:

Ռասելը վաճառքի մենեջեր էր իր ընկերությունում: Այն աշխատանքը, որն այդ մարդն առաջարկեց Ռասելին, պաշտոնի եռաստիճան բարձրացում էր: Ցածր պաշտոն ունեցող մարդուն միանգամից շրջանի ղեկավար նշանակելն ընդունված բան չէր: Երկուսով էլ հասկացանք, որ դա Աստծո գերբնական բարեհաճությունն էր, և որոշեցինք ընդունել այդ առաջարկը:

## ԿՐԿԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ես մեծ դժվարությամբ Հյուսթոնից տեղափոխվեցի Էլ Պասո: Հյուսթոնում մենք շատ լավ ընկերներ էինք ձեռք բերել, և ես բոլորովին չէի ցանկանում հեռանալ նրանցից: Նույնպես մեր երկրորդ դուստրը՝ Միշելը, ամուսնացել էր Հյուսթոնում, և ես չէի ցանկանում թողնել նրան: Բացի այդ՝ մենք պետք է վաճառեինք մեր տունը այն ժամանակ, երբ տներն այդ տարածքում չէին վաճառվում: Հյուսթոնի տնտեսությունը սրընթաց անկում էր ապրել. մարդիկ փակում էին իրենց տները և հեռանում քաղաքից, քանի որ չէին կարողանում վաճառել: Ռասելը պետք է տեղափոխվեր Էլ Պասո և ինձ և մեր կրտսեր դստերը՝ Քրիսթիին թողներ Հյուսթոնում, որպեսզի ես փորձեի վաճառել մեր տունը: Նա պետք է Էլ Պասոյից Հյուսթոն թռչեր ինքնաթիռով՝ մեզ այցելելու համար, և կարող էր անել դա միայն ամսվա մեջ մեկ կամ երկու անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին:

Քաղաքի այն մասում, որտեղ մենք ապրում էինք, ավելի քան հարյուր տուն էր վաճառվում: Մեր տունը գտնվում էր մի քամոտ փողոցի վերջում գրեթե չէր երևում ճանապարհից: Քանի որ այն ճանապարհից հեռու էր, պահանջվեց մեկ տարուց ավելի՝ այն վաճառելու

համար: Տասներկու ամիս անց մի զույգ, որը մեքենայով անցնում էր մեր տան մոտով, նկատեց «ՎԱՃԱՌՎՈՒՄ Է» ցուցանակը մեր տան բակի սիզամարգի վրա, և ամուսինը զանգահարեց մեր վաճառքի գործակալին՝ այն գնելու համար: Նրան դուր եկավ մեր բակը, և նա որոշեց գնել մեր տունը՝ առանց նույնիսկ ներս մտնելու: Հետաքրքիր է, որ այդ մարդու անունն Իսրայել էր: Բացի այդ՝ պարզվեց, որ Իսրայելը չէր սիրում աշխատել բակում: Տեղափոխվելուց հետո նա նույնիսկ չպահպանեց բակն իր նախկին վիճակում:

## ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԷԼ ՊԱՍՈ

Ռասելը և ես մեծացել էինք Էլ Պասոյում, և երկուսիս ընտանիքն էլ այդտեղ էր ապրում: Ետ նայելով՝ ես հասկանում եմ, որ մեր տեղափոխությունն Էլ Պասո՝ իմաստուն որոշում էր: Այն ևս մեկ քայլով Ռասելին և ինձ մոտեցրեց Աստծո կոչմանը: Բացի այդ՝ ես կարողացա հագեցած ժամանակ անցկացնել մորս հետ՝ աշխատելով նրա զգեստների խանութում: Ես չէի փոխի այդ օրերը ոչ մի բանի հետ այս աշխարհում, որովհետև կարճ ժամանակ անց նա հեռացավ կյանքից:

Ես օգտագործում եմ ամեն հնարավորություն՝ հիշեցնելու մարդկանց, որ նրանք երբեք չեն կարող փոխարինել նման ժամանակներն իրենց կյանքում: Մարդկանց մեծ մասը չի հասկանում, թե որքան կարևոր են իրենց ծնողները, մինչև այն պահը, երբ նրանք այլևս իրենց հետ չեն: Հուշերն իմ ծնողների մասին՝ միշտ հատուկ տեղ են զբաղեցրել իմ կյանքում:

## ԿԱՆՉԸ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԴՊՐՈՑ

Էլ Պասոյում մենք հաճախում էինք մի եկեղեցի, որը կոչվում էր «Առատ կյանք» Հավատքի կենտրոն: Այդ եկեղեցու հովիվը Չարլզ Նիմենն էր: Ռասելը և ես ի սրտե միացանք այդ եկեղեցուն և սկսեցինք ծառայել՝ ինչպես կարող էինք: Այդ ժամանակ մենք ընկերացանք մի զույգի հետ, որոնք սովորել էին «Ռեմայում»՝ համաշխարհային համբավ ունեցող Աստվածաշնչյան դպրոցում, որը հիմնադրել է Քենեթ Է. Հեգինը: Ինչ-որ մեկը եղբայր Հեգինի ուսումնական լսա-

ժապավեններից տվեց մեզ, և դրանցով շատ օրհնվեցինք, բայց մենք շատ բան չգիտեինք նրա ծառայության մասին:

– Դուք պետք է գաք մեզ հետ «Ռեմայի» սեմինարներից մեկին,– ասաց մեր նոր ընկերներից մեկը:– Այդ հավաքույթները հրաշալի՜ են:

Մեզ երկար համոզելու կարիք չկար: 1985 թվականին մենք մասնակցեցինք «Ռեմայի» Ձմեռային աստվածաշնչյան սեմինարին: Այդ մեկ շաբաթ տևող համաժողովի ավարտին մեզ թվում էր, թե մենք մահացել էինք և Երկնքում էինք: Տիրոջ մարգարեական մթնոլորտը խորապես հպվեց մեզ, և այդ հավաքույթներին զորավոր օծություն կար ուսուցման համար: Այդ սեմինարից հետո Ռասելը և ես նույնիսկ կասկածի նշույլ չունեինք, որ Տերը ցանկանում էր, որ մենք սովորեինք «Ռեմայում»: Այնպես որ, մենք հավատքի քայլ արեցինք և դիմում ներկայացրինք հաջորդ ուսումնական տարվա համար:

## ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԵՏԱՁԳՈՒՄ

Երբ «Ռեման» ընդունեց մեր դիմումները, մեր ուրախությանը չափ չկար: Ամեն ինչ կարծես դասավորվում էր մեր օգտին: Այն ընկերությունը, որտեղ Ռասելն աշխատում էր, պատրաստվում էր միաձուլվել «Սանտա Ֆե Երկաթուղի» ընկերության հետ, բայց Առևտրի միջնահանգային հանձնաժողովը մերժեց նրանց միաձուլման առաջարկը: Փորձելով կրկին թույլտվություն ստանալ՝ երկու ընկերություններն սկսեցին կրճատել իրենց աշխատակազմերը: Նրանք առաջարկում էին վաղաժամ կենսաթոշակային փաթեթներ և հատուկ ազատման նպաստներ*: Ռասելը համոզված էր, որ իրեն կկրճատեին: Ամեն ինչ գերազանց էր դասավորվում: Ազատման նպաստը թույլ կտար մեզ կենտրոնանալ միայն ուսման վրա:

Մենք ոգեշնչված էինք, որ հետևելու էինք Աստծո կոչմանը, և պատմեցինք մեր բոլոր ընկերներին մեր ծրագրերի մասին: Նրանք նույնիսկ հրաժեշտի երեկո կազմակերպեցին մեզ համար: Այնուամենայնիվ, մեր ոգևորությունն արագ ի չիք դարձավ, երբ Ռասելը չստացավ այն հնարավորությունը, որին մենք սպասում էինք: Նրա ընկերությունն արդեն

* *Մեկանգամյա նպաստ, որը գործատուն տալիս է աշխատողին՝ աշխատանքից կամավոր ազատվելու դեպքում:*

սկսել էր առաջարկել ազատման նպաստներ, բայց ոչ՝ միջին դասի ղեկավարներին: Այնպես որ, դա չէր վերաբերում Ռասելին:

Մենք հիասթափվեցինք՝ չստանալով սպասված գումարը, և վերջին պահին որոշեցինք հետաձգել «Ռեմա» գնալու մեր ծրագրերը:

Մեր ընկերներից մի քանիսն ասացին, որ մենք պետք է «հավատքի» քայլ անեինք, բայց գիտեինք տարբերությունը «հավատքի, հիմարության և ենթադրության»* միջև: Մենք գիտեինք, որ Աստծո որոշած ժամանակից շուտ առաջ շարժվելը հիմարություն կլիներ: Եվ որոշեցինք մնալ էլ Պասոյում ու շարունակել հավատալ, որ Աստված կնախապատրաստեր մեր ուսման համար: Հիմա ես հասկանում եմ, որ Աստված սովորեցնում էր մեզ համբերությամբ և իմաստությամբ վարվել:

Մեր սպասման ընթացքում մենք շարունակում էինք հաճախել մեր տեղական եկեղեցին, ծառայել եկեղեցում և տալ մեր տասանորդներն ու զոհաբերությունները: Համոզված եմ, որ հենց այդ պատճառով Աստված հետագայում օրհնեց մեզ ավելի, քան կարող էինք խնդրել կամ մտածել:

## ԵՐԿՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԲԱՑՎԵՑԻՆ

Կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ մենք հետաձգեցինք ուսումն Աստվածաշնչյան դպրոցում, ես սկսեցի պարբերաբար աղոթել երկու կանանց հետ, ովքեր մեր եկեղեցուց էին: Մենք ջերմեռանդորեն բարեխոսում էինք Ռասելի համար՝ խնդրելով Աստծուն, որ Ռասելն ազատման նպաստ ստանար իր աշխատավայրից: Մեկ օր մենք ոգեշնչվեցինք, որ աղոթենք համաձայն Ելից գրքի այն հատվածի, երբ Մովսեսը դուրս էր տանում Իսրայելի զավակներին գերությունից, Աստված ասաց նրան, որ ժողովուրդը չպետք է դատարկաձեռն հեռանար Եգիպտոսից, այլ պետք է վերցներ Եգիպտոսի ամբողջ ոսկին և բոլոր թանկարժեք իրերը (տե՛ս Ելից 3.20-22): Մենք հռչակում էինք, որ այդ ընկերությունն ասեր. «Վերցրո՛ւ քո ազատման նպաստը, գնա՛ և ծառայի՛ր քո Աստծուն»: Այն բանից հետո, երբ մենք սկսե-

* *«Հավա՞տք, հիմարությո՞ւն, թե՞ ենթադրություն», Ֆրեդ Փրայսի գրքի վերնագիրը, 1979թ.*

ցինք բարեխոսել, անհավատալի ճեղքում եկավ: Հանկարծ Երկինքը բացվեց, և օրհնությունների անձրևները հեղեղեցին մեր կյանքը:

Մեկ օր՝ 1987 թվականի հունիսին, երբ Ռասելը գործնական հանդիպումից հետո վերադարձավ իր գրասենյակ, նրա քարտուղարուհին ասաց.

– Տնօրենների խորհուրդն արտակարգ նիստ անցկացրեց և որոշեց, որ այժմ միջին դասի ղեկավարները նույնպես կարող են ազատման նպաստ ստանալ:

Այդ նպաստը կազմում էր Ռասելի մեկուկես տարվա աշխատավարձը: Այդ գումարն ավելի քան բավական էր մեզ՝ Աստվածաշնչյան դպրոցում սովորելու համար: Մենք ներքուստ գիտեինք, որ Աստծո ձեռքը գործում էր մեր փոխարեն: Մենք համարձակ քայլ արեցինք և առանց երկմտելու՝ օգտվեցինք այդ հնարավորությունից:

Ռասելը և նրա տնօրենը միակ աշխատակիցներն էին այդ բեռնափոխադրման ընկերության խաղաղօվկիանոսյան հարավ-արևմտյան շրջանում, ովքեր որոշեցին ազատման նպաստ ստանալ: Ավելի ուշ՝ երբ այդ ընկերությունը գնեց իրենց ամենախոշոր մրցակցին, շատերը կորցրին իրենց աշխատանքը: Այնուամենայնիվ, Աստված փրկեց մեզ. մենք նույնիսկ կարողացանք «ոսկով» գնալ Աստվածաշնչյան դպրոց:

Շուտով Երկնքի պատուհանները բացվեցին, և Աստծո մատակարարումը հեղեղեց մեր կյանքը բոլոր կողմերից: Մենք կրկին «Ռեմա» էինք դիմել, և մեր դիմումներն ընդունվել էին: 1987 թվականի հուլիսին, երբ պատրաստվում էինք տեղափոխվել Օկլահոմա նահանգի Տալսա քաղաքը, տեղի ունեցավ ևս մեկ զարմանալի հրաշք: Մեր կրտսեր դուստրը՝ Քրիսթին, ով այդ ժամանակ տասներեք տարեկան էր, գնացել էր ատամնաբույժի մոտ՝ իր ատամներին բրեկետներ տեղադրելու համար: Այդ ատամնաբույժը միլիոնատեր էր. նա տարին մի քանի անգամ Աֆրիկա էր գնում՝ որսորդական արշավների: Երբ նա իմացավ, որ մենք ուսումնասիրում ենք Աստծո Խոսքը, նրան դուր եկավ մեր ընտանիքը: Այդ մարդն ինքն էլ հետաքրքրվում էր սուրբգրային սկզբունքներով, և մեզ առաջարկեց Աստվածաշնչի ուսումնասիրության դասեր սկսել իր տանը: Մենք մերժեցինք այդ առաջարկը, քանի որ արդեն որոշել էինք Աստվածաշնչյան դպրոց

գնալ: Երբ պատմեցինք նրան մեր ծրագրերի մասին, նա անմիջապես հետաքրքրություն ցուցաբերեց՝ ցանկանալով իմանալ ավելին:

Երբ մեր մեկնելու ժամանակն արդեն մոտ էր, այդ մարդն անսպասելիորեն զանգահարեց Ռասելին և ասաց.

– Լսել եմ, որ դուք տեղափոխվում եք: Ուզում եմ ճաշի հրավիրել քեզ՝ նախքան ձեր գնալը:

– Սիրո՛վ,– պատասխանեց Ռասելը:

Ռասելը և այդ ատամնաբույժը հանդիպեցին նույն օրը՝ մի փոքր ուշ, քաղաքի ռեստորաններից մեկում: Նա հարցրեց Ռասելին Աստվածաշնչյան դպրոցում սովորելու մեր ծրագրերի մասին:

– Որքա՞ն կարժենա քո երկու տարվա ուսումը:

Ռասելը պատասխանեց, որ իր ընկերությունն ազատման նպաստ է տվել իրեն, և որ մենք շատ փող ունենք: Եվ դա ճիշտ էր: Երբ Ռասելը և ես սկսեցինք հաշվել մեր բոլոր ծախսերը, հասկացանք, որ ունեինք ավելին, քան բավական էր մեր երկամյա ուսման համար:

– Ես ուզում եմ վճարել երկու տարվա քո ուսման վարձը,– անսպասելիորեն ասաց նա:

Այդ ժամանակ ուսման վճարը տարեկան 1.600 դոլար էր, և միայն Ռասելի ուսման վարձը կազմում էր մոտավորապես 3.500 դոլար:

– Կարիք չկա, որ անես դա,– ընդդիմացավ Ռասելը:– Մենք լավ ֆինանսական վիճակում ենք:

– Ես ուզո՛ւմ եմ անել դա,– համառեց նա:

Ի վերջո, Ռասելն ընդունեց այդ գումարը և դուրս եկավ ռեստորանից՝ ցնծալով Աստծո մատակարարման համար:

Հաջորդ օրը երկու բարեխոս ընկերուհիները, որոնց հետ ես աղոթում էի, ճաշի հրավիրեցին ինձ նույն ռեստորանում: Այնպես ստացվեց, որ այդ ատամնաբույժը տեսավ ինձ այնտեղ: Նա մոտեցավ և սկսեց խոսել ինձ հետ:

– Դու նո՞ւյնպես սովորելու ես Աստվածաշնչյան դպրոցում ամուսնուդ հետ,– հարցրեց նա:

– Այո՛,– պատասխանեցի ես:

– Իսկապե՞ս: Ես չգիտեի այդ մասին:

Մենք կարճ զրուցեցինք բոլորովին այլ բաների մասին, ինչից հետո նա վերադարձավ իր գրասենյակ և զանգահարեց ամուսնուս:

– Ռասե՛լ, ես չգիտեի, որ Բարբարան սովորելու է քեզ հետ: Նրա ուսման վարձը նույնպես պետք է վճարվի, այնպես չէ՞:

– Այո՛,– պատասխանեց Ռասելը:

– Ես հենց հիմա կզանգահարեմ իմ հաշվապահին և կպատվիրեմ դուրս գրել մի քանի չեկ՝ նրա ուսման վճարների համար:

Աստված առատությամբ անում էր ամեն բան՝ ավելի, քան մենք խնդրում էինք կամ մտածում: Մենք զինված էինք հավատքով: Մենք երբեք փող չէինք խնդրել ոչ ոքից և չէինք խոսել որևէ մեկի հետ մեր ֆինանսական վիճակի մասին: Մենք հավատում էինք Աստծուն և երբեք չէինք կասկածում: Մենք պարզապես աղոթում էինք և հավատում Աստծուն, և հրաշքով մատակարարվում էինք: Աստված սովորեցնում էր ինձ, թե ինչպես ամուր կառչել մեր հավատքից և բաց չթողնել:

## ԴԱՐՁՅԱԼ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՆՔԻՑ

Օրհնություններն անդադար գալիս էին: Գրեթե նույն ժամանակ մեր միջնեկ դուստրը՝ Միշելը, ով աշխատում էր «Կոնտինենտալ ավիաուղիներ» ընկերությունում, մեզ համար թռիչք կազմակերպեց դեպի Սան Ֆրանցիսկո, որպեսզի հանդիպեինք մեր հին ընկերներից մի քանիսին՝ մինչև Աստվածաշնչյան դպրոց գնալը: Երբ մեր երկու շաբաթ տևող այցելությունը մոտենում էր ավարտին, Ռասելն առաջարկեց.

– Մինչև գնալը՝ ե՛կ այցելենք Դոկտոր Դոնին:

Դոկտոր Դոնը խիրոպրակտիկ էր: Նա մեր ընտանիքի վաղեմի ընկերն էր և մեզ հետ միասին հաճախում էր «Եկեղեցի՝ ժայռի վրա» համայնքը վաղ 70-ականներից: Երբ Ռասելը զանգահարեց նրան և ասաց, որ մենք քաղաքում ենք, և որ պատրաստվում ենք սովորել «Ռեմայում», նա անմիջապես ցանկացավ տեսնել մեզ:

– Ես միշտ ուզում էի սովորել «Ռեմայում»,– ասաց նա:– Ուզում եմ հյուրասիրել ձեզ այսօր: Եկեք հանդիպենք էլ Տորիտո ռեստորանում՝ Կոնկորդում:

– Հրաշալի՜ է:

Ավելի ուշ, երբ մենք նստած էինք ռեստորանում և պատմում էինք մեր կյանքում Տիրոջ արած գործերի մասին, նա անսպասելիորեն հարցրեց.

– Որքա՞ն արժե ձեր ուսումը:

– Դոն,– ասաց Ռասելը,– մեր ուսումն արդեն վճարված է, իսկ իմ ընկերությունը խոշոր ազատման նպաստ է տվել ինձ: Մենք միջոցներ ունենք ամեն ինչի համար:

– Իսկ Քրիսթի՞ն՝ ձեր դուստրը: Նա պետք է սովորի: Ես որոշել եմ տուն կառուցել գետի մոտ Բենիսիա քաղաքում՝ Կալիֆոռնիայում: Մինչ մենք զրուցում էինք, Սուրբ Հոգուց առաջնորդվեցի, որ հետաձգեմ դա և ամսական 500 դոլար ուղարկեմ ձեզ հաջորդ երկու տարվա ընթացքում: Նա ասաց ինձ, որ եթե ես կառուցեմ Նրա տունը, Նա կկառուցի իմ տունը:

Իմ Ռասելը և ես զարմացած իրար նայեցինք:

Դոկտոր Դոնը ճշտորեն պահեց իր խոստումը: Հաջորդ երկու տարվա ընթացքում, ամեն ամիս մենք չեկեր էինք ստանում նրանից՝ ժամացույցի ճշգրտությամբ: Նա գիտեր, թե ինչպես գործադրեր Աստծո թագավորության սկզբունքները:

Ավելորդ է ասել, որ երբ, ի վերջո գնացինք Աստվածաշնչյան դպրոց, մենք օրհնված էինք և ոգեշնչված ավելի, քան երբևէ: Երկնքի պատուհանները բաց էին, և Աստված շարունակում էր հորդել Իր օրհնությունները մեզ վրա: Երբ մենք Տալսա հասանք, Աստված տվեց մեզ շատ ավելի լավ տուն, քան ունեցել էինք այն տարիների ընթացքում, երբ Ռասելն աշխատում էր բեռնափոխադրման ընկերությունում: Օրհնությունները շարունակ գալիս էին, և թվում էր՝ դրանք չէին ավարտվելու:

## ԺԱՄԱՆԱԿԸ ՑԱՆՔԻ ԵՎ ՀՈՒՆՁՔԻ ՄԻՋԵՎ

Ամեն մի փորձառու հողագործ գիտի, որ հունձքը չի գալիս մեկ օրում: Ցանքի և հունձքի միջև որոշակի ժամանակահատված կա: Ռասելը և ես շատ էինք աղոթում և ցանում 1970-ականների վերջում, բայց մենք տեսանք դրա արդյունքը միայն 1980-ականներին: Աստված գերբնական կարողություն տվեց Ռասելին և ինձ՝ լինելու հովիվներ այն եկեղեցում, որը մինչև օրս հովվում ենք: Ես կշարունակեմ այս զարմանալի պատմությունը հաջորդ գլխում:

# • ԳԼՈՒԽ 8 •

## *Ինչպես Աստված բերեց մեզ մեր Խոստման երկիրը*

Ամռանը ամուսինս խոսք ստացավ Տիրոջից՝ երբ արդեն Աստվածաշնչյան դպրոցում էր սովորում: Այդ ժամանակ մայրս մահացավ, և մենք Օկլահոմայից տեղափոխվեցինք Հյուսթոն՝ նրա հուղարկավորությանը մասնակցելու համար: Ես որոշեցի կարճ ժամանակով մնալ այնտեղ՝ հորս հետ, իսկ Ռասելը վերադարձավ, որպեսզի հոգ տանի մեր տան և երկու շների՝ Թաշայի և Մաֆինի մասին:

Աստվածաշնչյան դպրոցում սովորելու ժամանակ մենք խնդրում էինք Աստծուց՝ ցույց տա, թե ինչ էր Նա ցանկանում, որ անեինք ավարտելուց հետո: Մի առավոտ, երբ Ռասելը ցնցուղ էր ընդունում, իր հոգում լսեց «Սփրինգ Վելի» բառերը: Նա մի փոքր հանկարծակիի եկավ, բայց հասկացավ, որ դա Տիրոջ ձայնն էր: Սկզբում մտածեց, որ Աստված խոսում էր Տեխաս նահանգի Սփրինգ քաղաքի մասին, որովհետև մենք այնտեղ ունեինք ընկերներ, ովքեր աղոթում էին, որ ավարտելուց հետո վերադառնայինք Հյուսթոնի շրջան: Բայց հանկարծ նա կրկին լսեց «Սփրինգ Վելի» բառերը, և այս անգամ դրան հետևեց «Կալիֆոռնիա» բառը:

Ռասելն սկսեց ատլասի մեջ փնտրել «Սփրինգ Վելի» անվանում ունեցող բնակավայր և գտավ այդ անունով բնակավայրեր Կոնեկտի-

կուտ, Վերմոնտ և Միչիգան նահանգներում, բայց նա չէր կարողանում գտնել «Սփրինգ Վելի» Կալիֆոռնիա նահանգում:

Հանկարծ «Սփրինգ Վելի, Կալիֆոռնիա» բառերն ասես դուրս թռան ատլասից. դա արվարձան էր Սան Դիեգոյում:

Ես դեռ Տեխասում էի, երբ Ռասելը զանգահարեց և ասաց այդ մասին:

– Սիրելի՛ս,– ոգեշնչված սկսեց նա,– ես հավատում եմ և գիտեմ, թե Տերը ո՛ւր է ցանկանում առաջնորդել մեզ ավարտելուց հետո:

– Ո՞ւր,– հարցրի ես:

Երբ Ռասելը պատմեց այդ մասին, ես խիստ ոգեշնչվեցի: Ես երբեք չեմ հետևել քամիներին և չեմ ցանկացել անստույգ քայլերի դիմել, բայց նրա խոսքերը լսելուն պես ներսումս շատ դրական զգացողություն առաջացավ: Մենք հավատքով միաբանվեցինք և ասացինք. «Մենք այդպես էլ կանե՛նք»:

## ՄԵՆՔ ԼՐՏԵՍՈՒՄ ԵՆՔ ԵՐԿԻՐԸ

1989 թվականի մարտին՝ ամառային արձակուրդի ժամանակ, Ռասելը և ես որոշեցինք երեք օրով թռչել Սփրինգ Վելի՝ «երկիրը լրտեսելու» համար: Մենք ինքնաթիռ նստեցինք Օկլահոմա նահանգի Տալսա քաղաքում և ուղևորվեցինք դեպի Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքը, իսկ այնտեղից այլ ինքնաթիռով շարունակեցինք ճանապարհը դեպի մեր նպատակավայրը: Ես նկատեցի տպավորիչ տեսք ունեցող մի զույգի, որոնք մեզ հետ ինքնաթիռ նստեցին:

– Մենք պետք է իմանանք, թե ովքեր են նրանք,– ասացի Ռասելին:– Նրանք «ծառայողների տեսք» ունեն:

– Դու ճիշտ ես,– համաձայնեց նա:

Նստելով մեր որոշված տեղերում՝ մենք տեսանք, որ ընդամենը երեք շարք ետ ենք նրանցից:

– Եթե ես լսեմ, որ նրանք խոսում են եկեղեցու կամ կրոնի թեմայի շուրջ,– Ռասելն աննկատ շշնջաց ականջիս,– վեր կկենամ և կմոտենամ նրանց:

Հազիվ էր 15-20 րոպե անցել, երբ լսեցինք, որ տղամարդն ինչ-որ բան ասաց ավետարանչության մասին: Ռասելը և ես նայեցինք իրար՝ հասկանալով, որ դա մեր «կանաչ լույսն» էր: Այդ պահին մի տղա-

մարդ, որը նստած էր այդ տղամարդու կողքին, վեր կացավ և անցավ դեպի ինքնաթիռի ետնամասը: Այնպիսի տպավորություն էր, ասես մի հրեշտակ ձեռքը դրեց նրա ուսին և պատվիրեց դուրս գալ իր տեղից: Ռասելն անմիջապես գնաց դեպի ազատված տեղը և նստեց:

– Ներողությո՛ւն,– քաղաքավարիորեն ընդհատեց Ռասելը,– ես լսեցի, որ դուք ինչ-որ բան էիք խոսում ավետարանչության մասին: Ինչո՞վ եք դուք զբաղվում:

– Դուք լսե՞լ եք Դենվերի «Երջանիկ եկեղեցու» մասին,– այդ մարդը պատասխանեց այնպիսի կյանքով լեցուն ձայնով, որը կարող է ունենալ միայն վերստին ծնված մարդը:

– Իհա՛րկե,– պատասխանեց Ռասելը,– բոլորը գիտեն «Երջանիկ եկեղեցին»: Այն հովվում են Վոլի և Մերիլին Հիքինները, ճի՞շտ է:

– Այո՛: Կինս և ես փառաբանության խմբի ղեկավարներ ենք այդ եկեղեցում: Մենք Սան Դիեգո ենք գնում՝ երաժշտական սիմպոզիումի: Իսկ դո՞ւք ինչու եք գնում Սան Դիեգո,– ասաց այդ մարդը:

– Մենք սովորում ենք «Ռեմա» Աստվածաշնչյան դպրոցում: Հավատում ենք, որ Աստված կանչել է մեզ լինելու եկեղեցու հովիվներ Սան Դիեգոյի տարածքում, և երբ ավարտենք, Տերը կառաջնորդի մեզ, և մենք գնում ենք՝ «երկիրը լրտեսելու»:

– Հետաքրքիր է, որ ասացիք դա,– ասաց այդ մարդը:– Վոլին և Մերիլինը ցանկանում են ևս մեկ հովիվների զույգ ավելացնել իրենց աշխատակազմին: Նրանք փնտրում են մարդկանց, ովքեր հովվական ծառայություն կիրականացնեն, հիվանդանոցներ կայցելեն և խորհրդատվություններ կանցկացնեն: Դուք և ձեր կինը՝ գերազանց թեկնածուներ եք այդ ծառայության համար: Դուք պետք է կապ հաստատեք նրանց հետ: Նրանք կձեռնադրեն ձեզ ծառայության համար, անմիջապես աշխատավարձ կնշանակեն և գեղեցիկ տուն կտրամադրեն: Դուք գերազանց թեկնածուներ եք:

Այս մարդն առաջին անգամ էր տեսնում մեզ, բայց անմիջապես ծառայության մեջ մտնելու առաջարկ արեց՝ այնպիսին, որին կհամաձայներ Աստվածաշնչյան դպրոցի ցանկացած ուսանող՝ առանց երկար մտածելու: Այնուամենայնիվ, մենք լսել էինք Տիրոջ Խոսքը մեզ համար, և Նա ոչինչ չէր ասել մեզ Դենվերում հաստատվելու մասին:

– Հրաշալի առաջարկ է, բայց ես պետք է հնազանդվեմ այն բանին, ինչ արդեն գիտեմ: Սուրբ Հոգին խոսել է կնոջս և ինձ հետ Կալիֆոռնիայի Սփրինգ Վելի քաղաքի մասին: Բացի այդ՝ մեր ունեցած խոսքը պետք է որ Աստծուց լինի, որովհետև երկուսով էլ ցուրտ եղանակ չենք սիրում:

Նրանք ծիծաղեցին:

– Շատ լավ, բայց եթե մտափոխվեք,– ասաց նա՝ փոխանցելով Ռասելին իր այցեքարտը,– ավարտելուց հետո զանգահարե՛ք ինձ: Դուք իդեալական եք այդ ծառայության համար:

– Այդ առաջարկը շատ գայթակղեցնող էր, բայց մենք պետք է հետևեինք այն բանին, ինչ Տերը դրել էր մեր սրտում: Այնուամենայնիվ, մենք նույնիսկ գաղափար չունեինք, որ հետագայում այդ հանդիպումը մեծ դեր կխաղար մեր կոչման մեջ մուտք գործելու համար:

## ՈՉ ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ՍՓՐԻՆԳ ՎԵԼԻՈՒՄ

Երբ մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց Սան Դիեգոյում, մենք գնացինք Սփրինգ Վելի և պարզեցինք, որ այնտեղ չկային ո՛չ աղբյուրներ, ո՛չ էլ հովիտ*: Այնտեղի կլիման չոր էր՝ թե՛ հոգևորապես, թե՛ բնականորեն: Այն շատ նման էր Տեխասի կլիմային: Առաջին մի քանի օրերը մենք պարզապես շրջում էինք և աղոթում: Մենք գնացինք քաղաքապետարան, փոստային գրասենյակ և առևտրի կենտրոններ՝ հույս ունենալով, որ Տերը կխոսեր մեզ հետ կամ կուղարկեր ինչ-որ մեկին, ով կասեր. «Այսպե՛ս է ասում Տերը՝ դուք այն մարդիկ եք, որոնց Ես ընտրել եմ այս վայրի փրկության համար»: Բայց երկու ու կես օր աղոթելուց և զբոսնելուց հետո ոչինչ տեղի չունեցավ: Մեր եռօրյա էքսկուրսիան ավարտին էր մոտենում, և մեր հավատքը հետզհետե թուլանում էր:

– Ինչպե՞ս է կատարվելու Քո Խոսքը, Տե՛ր,– հուսահատորեն աղոթում էինք մենք:

Որոշ ժամանակ անց մենք հայտնվեցինք մեր մարդկային մտքի ազդեցության ներքո: «Ռեմայի» ուսուցիչներից ոմանք ասում էին. «Մենք չենք ցանկանում, որ ավարտելուց հետո դուք անարգան-

---

* «Սփրինգ Վելի» անգլ.՝ «Աղբյուրների հովիտ»

քի պատճառ դառնաք Տիրոջ կամ այս դպրոցի համար: Մի՛ նստեք և սպասեք, որ Տերը ծառայություն տա ձեզ: Կա՛մ վերադարձեք ձեր եկեղեցիները և ծառայեք, կա՛մ աշխատանք գտեք»:

Հիշելով դա՝ Ռասելը նայեց ինձ և ասաց.

– Մենք արդեն գիտենք, որ ավարտելուց հետո կանչված ենք այստեղ: Այնպես որ, ես կփորձեմ աշխատանք գտնել: Միգուցե ինձ հաջողվի անշարժ գույքի գործակալ դառնալ: Այդ դեպքում, մենք շատ ազատ ժամանակ կունենանք: Մենք կարող ենք բացել մեր տան դռները և Աստվածաշնչի ուսումնասիրության դասեր սկսել: Շատ եկեղեցիներ հենց այդպես են ծնունդ առել: Մենք կհավաքվենք տանը այնքան ժամանակ, մինչև մոտավորապես 15 մարդ ունենանք, իսկ հետո կտեղափոխվենք ինչ-որ սրահ: Իսկ երբ մարդկանց քանակն ավելանա, հյուրանոցային դահլիճ կվարձենք:

– Լա՛վ միտք է,– պատասխանեցի ես:

Մեր մարդկային միտքն այդ կերպով փորձում էր պատկերացնել ամեն ինչ: Այդուհանդերձ, Սուրբ Հոգին օգտագործեց նույնիսկ այդ իրավիճակը: Մեր ճանապարհորդության վերջին օրը՝ երեկոյան, երբ անցնում էինք Սփրինգ Վելիի գլխավոր պողոտայով, նկատեցինք մի գեղեցիկ երկհարկանի շենք՝ կարմիր կղմինդրներից պատրաստված իսպանական ոճի տանիքով: Շենքի վերնամասում գտնվող ցուցանակին գրված էր. «21-րդ դարի անշարժ գույք»: Դա շատ մեծ շինություն էր: Երբ անցնում էինք դրա կողքով, Ռասելը ներքին մղում զգաց:

– Գիտե՞ս, կարծում եմ՝ մենք վաղը պետք է գնանք այնտեղ՝ մինչև քաղաքից գնալը,– ասաց նա:– Ես զգում եմ, որ այնտեղ ինչ-որ բան կա:

«Ես տեսել եմ ձեզ հեռուստացույցով»

Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 09:00-ին, մենք գնացինք այնտեղ՝ գեղեցիկ, ներկայացուցչական հագուստով, որպեսզի հանդիպենք այդ ընկերության տնօրենին:

– Այսօր նա իր կնոջ հետ քաղաքում չէ,– ասաց աշխատակիցներից մեկը:– Նրանք աշխատում են Եղբայր Էնդրյու անունով մի մարդու հետ, Աստվածաշնչեր են տարածում Չինաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում: Նրանք Եղբայր Էնդրյուի ծառայողական թիմի խորհրդի անդամներ են:

Այդ ընկերության ղեկավարները քրիստոնյա՜ էին: Որքա՞ն էր հավանական, որ մենք, բոլորովին պատահաբար, գնայինք մի ձեռնարկություն, որը պատկանում էր քրիստոնյաների: Հասկանալով, որ այդտեղ գալն Աստծուց որոշված էր՝ մեր հավատքը մի փոքր ավելացավ:

– Ես փոխնախագահն եմ՝ վաճառքների գծով,– շարունակեց նա:– Ինչո՞վ կարող եմ օգնել ձեզ:

– Մենք ցանկանում ենք հանդիպել ընկերության ղեկավարի հետ, որպեսզի իմանանք, թե հնարավո՞ր է անշարժ գույքի գործակալի արտոնագիր ձեռք բերել և աշխատել ձեզ մոտ,– ասաց Ռասելը:

– Ձեզնից գոնե մեկը պետք է սովորական ժամերի աշխատանք ունենա՝ 08:00-17:00,– սկսեց բացատրել մեկ այլ աշխատակցուհի:– Ձեզնից որոշ ժամանակ կպահանջվի՝ արտոնագիր ստանալու և հաճախորդներ ձեռք բերելու համար...

Այդ կինը խոսեց մեզ հետ մոտավորապես քսան րոպե, և որքան ավելի էր խոսում, այնքան ավելի էինք մենք հուսահատվում: Երբ նա ավարտեց, մեր «հավատքի պաշարը» գրեթե դատարկվել էր:

Երբ իջնում էինք գլխավոր աստիճաններից, որպեսզի դուրս գայինք երկհարկանի գեղեցիկ շենքից, մենք հանդիպեցինք այդ ընկերության վաճառքի մենեջերներից մեկին: Նա կանգ առավ, նայեց ուղիղ ամուսնուս աչքերին և ասաց.

– Ես ճանաչո՛ւմ եմ ձեզ: Ես տեսել եմ ձեզ հեռուստացույցով:

– Դուք չէիք կարող տեսնել ինձ հեռուստացույցով,– պատասխանեց Ռասելը:

– Ինչո՞վ եք դուք զբաղվում:

– Կինս և ես սովորում ենք Աստվածաշնչյան դպրոցում՝ Տալսայում:

Առանց զգուշացնելու՝ նա բռնեց Ռասելի օձիքից և երկուսին տարավ իր գրասենյակը:

– Հիմա ես գիտեմ, թե ինչու եկա այստեղ,– խանդավառությամբ ասաց նա:– Դուք գիտե՞ք հովիվ Բոբ Թիլթոնին:

– Այո՛, մենք բնիկ տեխասցիներ ենք, և այնտեղ բոլորը գիտեն Բոբ Թիլթոնին:

– Այժմ նրա ծառայության գլխամասային գրասենյակը գտնվում է այս քաղաքում: Ես հեռախոսազանգերին պատասխանող խորհրդատու եմ

նրա ծառայության մեջ: Սովորաբար, իմ ազատ օրերին ես պատասխանում եմ հեռախոսազանգերին նրա ծառայության գրասենյակում, բայց այսօր եթերում հաղորդման կրկնություն էր, և ես պետք չէի այնտեղ: Քիչ առաջ զգացի, որ Սուրբ Հոգին առաջնորդում է ինձ վերադառնալ աշխատանքի: Հիմա ես գիտեմ, որ դա ձեզ հանդիպելու համար էր:

Մեր հավատքը կրկին մի փոքր ավելացավ:

Մենք պատմեցինք նրան մեր տեսիլքը և ասացինք, որ Աստծուց կանչ ունենք, և հավատում ենք, որ ավարտելուց հետո տեղափոխվելու ենք այնտեղ:

– Դուք պետք է ծանոթանաք հովիվ Փոլի հետ, նրա գրասենյակը վերևի հարկում է: Նա նվիրված քրիստոնյա է և աշխատում է Եղբայր Էնդրյուի հետ: Խնդիրն այն է, որ նա և կինը՝ Քերոնը, հիմա քաղաքում չեն:

– Մեզ արդեն ասացին այդ մասին,– ասաց Ռասելը:

– Նա շատ ուրախ կլինի, երբ լսի ձեր տեսիլքի մասին,– շարունակեց նա:– Նա աղոթում էր մի խումբ մարդկանց հետ, որպեսզի Հոգու առաջնորդությամբ ձեզ պես ծառայողներ գան այստեղ և օգնեն այս տարածքում: Կան շատ կրոնական մարդիկ, ովքեր գալիս են այստեղ քաղաքական նկատառումներով՝ փորձելով համբավ ձեռք բերել: Դուք պետք է կապ հաստատեք նրա հետ, երբ նա վերադառնա:

– Կարծում եմ՝ մենք կանենք դա,– պատասխանեց Ռասելը:

## ՄԵՐ ՀԱՎԱՏՔԸ ՏԱՏԱՆՎՈՒՄ Է ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Երբ վերադարձանք Տալսա՝ մեր վերջին ուսումնական կիսամյակն ավարտելու համար կապ պահպանեցինք Փոլի և նրա կնոջ՝ Քերոնի հետ: Փոլն ասաց, որ մեր այցելության ժամանակ նա և կինը ճանապարհորդում էին Կալիֆոռնիա, Արիզոնա և Նևադա նահանգներով՝ պատմելով Եղբայր Էնդրյուի տեսիլքը: Երբ մենք ասացինք, որ երազում ենք տեղափոխվել Սփրինգ Վելի և հովվել եկեղեցում, նա կարծես անկեղծորեն հետաքրքրվեց:

– Եթե այստեղ գաք,– ասաց նա,– ես չեմ կարող աշխատանք խոստանալ ձեզ, բայց կծանոթացնեմ որոշ մարդկանց հետ այս տարածքում:

Փոլի առաջարկն օգտակար էր, բայց այնքան էլ մխիթարական չէր, քանի որ մեր ստացված ազատման նպաստի գումարը վերջանում էր:

1989 թվականի մայիսին ավարտելով՝ մենք գիտեինք, որ պետք է Սփրինգ Վելի գնանք, բայց չգիտեինք՝ ինչպես կազմակերպել դա: Մեզ գումար էր անհրաժեշտ տեղափոխվելու համար: Մեզ անհրաժեշտ էր աշխատանք կամ ինչ-որ տեսակի ֆինանսական աջակցություն: Բացի այդ՝ մեր կրտսեր դուստրը՝ Քրիսթին, հանդիպում էր մի երիտասարդի հետ Տալսայում և չէր ուզում գնալ այդտեղից: Իրավիճակը շատ բարդ էր, քանի որ նա 16 տարեկան էր, և մենք չէինք կարող գնալ առանց նրա: Գիտեինք, որ հարաբերություններն այդ երիտասարդի հետ՝ պետք չէին Քրիսթիին նրա կյանքի այդ փուլում, բայց չէինք կարողանում համոզել նրան: Ի վերջո, երբ մեկնեցինք, նա հարկադրված էր գալ մեզ հետ: Այդ պահին դա նրան դուր չէր գալիս, բայց այսօր նա շնորհակալ է մեզնից:

Այդ ժամանակ էր, որ հայրս զանգահարեց մեզ և հարցրեց, թե արդյոք կցանկանայի՞նք վերադառնալ Տեխաս և տուն կառուցել իր ունեցած հողատարածքներից մեկում: Դա գայթակղիչ առաջարկ էր, բայց մենք գիտեինք, որ գալու էր մի պահ, երբ հնազանդվելով Աստծուն՝ տեղափոխվելու էինք Սփրինգ Վելի: Հաշվի առնելով մեր ֆինանսական վիճակը՝ որոշեցինք ընդունել հորս առաջարկը, աշխատանք գտնել, եկամուտ ստեղծել, իսկ հետո տեղափոխվել Սփրինգ Վելի: «Գոնե ավելի մոտ կլինենք Սփրինգ Վելիին»,– մտածեցինք մենք:

Երբ եկանք Տեխաս, Ռասելը աշխատանքային ինքնանկարագիր կազմեց և սկսեց աշխատանք փնտրել: Ամեն օր հայրս հարցնում էր ինձ. «Նա արդեն աշխատանք գտե՞լ է»: Ես գիտեի՝ նա հույս ուներ, որ մենք կմոռանայինք այդ «կրոնական բաները» և բարձր աշխատավարձով աշխատանք կգտնեինք՝ ինչպես նախկինում: Ես շատ էի սիրում հորս և գնահատում էի այն ամենը, ինչ ծնողներս արել էին մեզ համար, բայց այդ ժամանակ ասես հաշտարարի դերում լինեի. մշտապես փորձում էի խաղաղություն պահպանել նրա և Ռասելի միջև:

Ես գիտեի, որ ամուսինս հուսալքված էր: Սրտիս խորքում ես նույնպես այդ վիճակում էի: Մենք գիտեինք, որ պետք է Սփրինգ

Վելիում լինեինք, բայց չունեինք բավականաչափ գումար՝ այնտեղ հասնելու համար: Ռասելը տուն էր գալիս աշխատանք փնտրելուց և երեսնիվայր պառկում էր ննջասենյակի հատակին՝ աղաղակելով Տիրոջը: Նա ասում էր. «Ես գիտեմ, որ լսել եմ Քո ձայնը, Տե՛ր, բայց չգիտեմ, թե ինչպե՛ս կարող ենք գնալ այնտեղ»:

## ԱՅԼԵՎՍ ՉԵ՛Մ ԿԱՐՈՂ ԴԻՄԱՆԱԼ

Մի քանի շաբաթ անց Ռասելն ի վերջո գտավ մի ընկերություն էլ Պասոյում, որին մարկետինգային տնօրեն էր հարկավոր: Նա մասնակցեց երկու հարցազրույցի, և նրան խնդրեցին գալ ևս մեկ հարցազրույցի: Երրորդ հարցազրույցի օրը Ռասելն ստիպված էր հետաձգել հանդիպումը մի անսպասելի հանգամանքի պատճառով: Երբ նա տուն եկավ և ընթրիքի ժամանակ պատմեց մեզ, թե ինչ տեղի ունեցավ, հայրս սխալ հասկացավ նրան: Նա մտածեց, որ Ռասելը մերժել էր այդ աշխատանքային առաջարկը: Նա այնքա՛ն բարկացավ, որ գրեթե ցատկեց ճաշասեղանի վրայով՝ նրան խեղդելու համար:

– Նույնիսկ հավատալ չեմ կարողանում քո հիմարության վրա,– ամբողջ ձայնով բղավեց հայրս:

Նայելով հորս դեմքին՝ Ռասելը հասկացավ, որ այդպես այլևս չէր կարող շարունակվել. մենք պետք է, որքան հնարավոր է, արագ հասնենք Սփրինգ Վելի:

Այդ երեկո զանգահարեցինք էլ Պասոյի մեր ընկերներից մեկին՝ Օդրի Վելիին: Այդ կինն իսկական աղոթքի պատերազմող է:

– Օդրի՛, մենք արդեն վեց շաբաթ է՝ այստեղ ենք, և անհույս վիճակում ենք: Մենք պետք է Սփրինգ Վելիում լինենք, բայց այնտեղ ոչ ոքի չենք ճանաչում:

– Խնդիր չկա, ես կօգնեմ ձեզ,– պատասխանեց նա:

Տասը րոպե չանցած՝ հեռախոսը զանգեց: Ռասելը պատասխանեց զանգին: Լսափողից լսվեց Օդրիի ձայնը.

– Դուք հիշո՞ւմ եք Դայանին՝ էլ Պասոյից,– հարցրեց նա:

– Այո՛,– պատասխանեց Ռասելը:

– Նրա քույրն իր ամուսնու հետ ապրում է Կալիֆոռնիայի Լեմոն Գրովում: Այն փոքրիկ քաղաք է Սփրինգ Վելիի կողքին: Նրանք հինգսենյականոց տուն ունեն, որը տարվա մեջ ինն ամիս վարձով են տալիս արտասահմանցի ուսանողների: Ես զանգահարեցի, և նրանք ասացին, որ այս ամռանը կարող ենք այնտեղ մնալ, եթե ուզում ենք:

– Փա՜ռք Աստծուն, դա արտակա՜րգ է,– բացականչեց Ռասելը:

Երկուսով էլ գիտեինք, որ Աստված ճանապարհ էր պատրաստում մեզ համար:

## «ԴՈՒ ՁՈՒԿ ԵՍ ԲՌՆՈՒՄ ՆԱՎԱԿԻ ՍԽԱԼ ԿՈՂՄՈՒՄ»

1989 թվականի օգոստոսի 8-ին Ռասելը մեր Հոնդայի մեջ տեղավորեց այն ամենը, ինչ կարողացավ, և ճանապարհվեց Սփրինգ Վելի՝ ընդամենը հազար դոլար գումարով: Նա որոշեց եկամտի աղբյուր ստեղծել Սփրինգ Վելիում, որպեսզի ապահովեր մեր կյանքն այնտեղ: Քրիսթին և ես մնացինք իմ հոր տանը: Երկու օրում Ռասելը հասավ Սան Դիեգո՝ մեծ հավատքով: Նա մտադրվել էր, որքան հնարավոր է, շուտ աշխատանք գտնել: Նա այցելում էր բոլոր աշխատանքային գործակալությունները, որոնք գտնում էր «դեղին էջերում»:

– Դուք արժեքավոր աշխատող եք,– ասում էին նրան աշխատանքի որոնման գործակալները:– Դուք հրաշալի հմտություններ ունեք, բայց անհրաժեշտ է առնվազն 19 օր, որպեսզի մենք կարողանանք աշխատանք գտնել ձեզ համար:

– Ես վեց օր էլ չեմ կարող սպասել,– ասում էր Ռասելը:

Հաջորդ երեք շաբաթվա ընթացքում Ռասելը կանոնավոր աշխատանք էր փնտրում, բայց փակուղու էր հանդիպում ամեն շրջադարձին: Մեր հավատքն սկսեց տատանվել: Այդ պայքարը շարունակվում էր ամեն օր: Ամեն ժամ իրավիճակն ավելի հուսահատ էր դառնում: Հայրս ուզում էր, որ Քրիսթիին տանեի Տեխասի դպրոցներից մեկը, բայց ես վստահ էի, որ Ռասելն ինչ-որ բան էր գտնելու Կալիֆոռնիայում. պարզապես պետք էր սպասել: Մենք ճնշում էինք զգում, քանի

որ սեպտեմբերն արագ մոտենում էր, և չէինք ուզում, որ Քրիսթին ետ մնար դպրոցի դասերից: Ամենավատն այն էր, որ մեր միջոցներն սպառվում էին: Ռասելը պետք է շատ արագ աշխատանք գտներ, այլապես մեր ընտանիքն անհույս վիճակում էր հայտնվելու:

Ռասելը փորձում էր բոլոր հնարավոր տարբերակները: Նա նույնիսկ դիմեց բեռնափոխադրման ընկերությունների, բայց թվում էր՝ որքան ավելի էր ջանում աշխատանք գտնել, այնքան ամեն ինչ ավելի էր բարդանում:

Այդ ընթացքում Ռասելը մի քանի անգամ ճաշել էր Փոլ Յանգի հետ, ով աշխատում էր Եղբայր էնդրյուի ծառայության մեջ: Աշխատանքի ապարդյուն որոնումներից երեք շաբաթ անց Փոլը ճաշի հրավիրեց Ռասելին և ասաց, որ երբ նրա կինը՝ Քերոնը, աղոթել է, Տերը խոսք է տվել նրան մեր իրավիճակի վերաբերյալ՝ Հովհաննես 21.6-ը. *«Նա էլ ասաց նրանց. «Ուռկանը նավի աջ կողմը գցե՛ք և կգտնեք»: Նրանք էլ գցեցին, և էլ չէին կարողանում քաշել՝ ձկների շատության պատճառով»:*

Քերոնն ասել էր Փոլին. «Ասա՛ Ռասելին, որ նա ձուկ է բռնում նավակի սխալ կողմում: Ասա՛ նրան, որ իր ցանցը գցի նավակի ճիշտ կողմը»:

Ռասելը նույնիսկ գաղափար չուներ, թե ինչպես մեկնաբաներ այդ խոսքը:

– Գիտես, Ռասե՛լ,– լուրջ տոնով ասաց Փոլը, երբ ավարտում էին նախաճաշը:– պետք է ենթադրես, որ հնարավոր է՝ դու ճշգրիտ չես լսել Աստծուց:

– Այո՛, կարծում եմ՝ դու ճիշտ ես,– պատասխանեց Ռասելը:

– Հաջորդ երկուշաբթի ես նախաճաշ եմ կազմակերպել մի զույգի՝ Փեթ և Շերոն Մահոնիների հետ, որոնք արդեն հինգ տարուց ավելի է՝ փոքր եկեղեցի են հովվում այստեղ: Նրանք Վոլի և Մերիլին Հիքիի եկեղեցուց են, որը Դենվերում է:

– Ես գիտեմ Վոլի և Մերիլին Հիքիների մասին,– ասաց Ռասելը:

– Մեզ միանալու է ևս երկու հովվական զույգ այս տարածքից: Երկուշաբթի առավոտյան ես կգամ մեքենայով, և մենք կհանդիպենք նրանց եկեղեցում: Կարծում եմ՝ երբ հանդիպես այդ հովիվներին, դու

ավելի լավ կհասկանաս այստեղի իրավիճակը: Մենք ընդամենը միասին կաղոթենք և կխոսենք այն մասին, որ հնարավոր է՝ դու խոսք չես ստացել Տիրոջից:

– Լա՛վ,– վարանելով ասաց Ռասելը:

Երեք օր անց՝ այդ նախաճաշի ժամանակ, Ռասելը հասկացավ, թե որքան ճշգրիտ էր Քերոնի մարգարեական խոսքը:

## ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Երկուշաբթի առավոտյան Փոլը և Քերոնը Ռասելին մեքենայով տարան Փեթ և Շերոն Մահոնիների եկեղեցի, որտեղ պետք է գային բոլոր հյուրերը՝ նախաճաշի գնալու համար: Մահոնիների եկեղեցին արդյունաբերական տարածքում էր և բոլորովին եկեղեցու նման չէր: Այդտեղ կային նստարաններ, բեմ, մի քանի բարձրախոս և վերջ: Ամբիոնի վերևում գտնվող ցուցանակին գրված էր՝ «Ցանք և հունձք» ընտանեկան եկեղեցի:

Փեթ և Շերոն Մահոնիները չափազանց ջերմ էին. Ռասելն անմիջապես ընկերացավ նրանց հետ: Մինչև մյուս զույգերի գալը, նրանք ցույց տվեցին Ռասելին իրենց շենքը: Մյուս զույգերից մեկը Թոմ և Լինդա Ռայլիներն էին, ովքեր Ջիմ Ջիրգլի «Կենդանի ջրերի ուսմունք» կոչվող ծառայության հաշվապահներն էին:

Երբ բոլորը եկան, Փեթը և Շերոնն առաջարկեցին Ռասելին ռեստորան գնալ իրենց մեքենայով: Ճանապարհը տասից տասնհինգ րոպե էր, և այդ ընթացքում նրանք հասցրին բավականին զրուցել:

– Ինչպե՞ս հայտնվեցիր այս քաղաքում, Ռասե՛լ,– հարցրեց Փեթը՝ պողոտա դուրս գալով:

Ռասելը պատմեց այն մասին, թե ինչպես Աստված գերբնականորեն առաջնորդեց մեզ դեպի Սփրինգ Վելի: Թվում էր՝ Փեթը և Շերոնն անսովոր կերպով հետաքրքրված էին Ռասելի պատմության բոլոր մանրամասներով: Երբ Ռասելն ավարտեց իր պատմությունը, նրանք ասացին, որ աշխատել էին Վոլի և Մերիլին Հիքիների ծառայության կազմում:

– Գիտեք, հետաքրքիր է, որ դուք հիշատակեցիք Վոլիին և Մերիլինին,– քաղաքավարիորեն ընդհատեց Ռասելը:– Այս տարվա

մարտին մենք միամուսնական զույգի հանդիպեցինք, երբ ինքնաթիռով այստեղ էինք թռչում: Նրանք Վոլի և Մերիլին Հիքիների եկեղեցու փառաբանության խմբի ղեկավարներն էին: Նրանք աշխատանք առաջարկեցին մեզ՝ ասելով, որ Վոլին և Մերիլինը փնտրում են մարդկանց, ովքեր հովվական ծառայություն կիրականացնեն, հիվանդանոցներ կայցելեն և խորհրդատվություններ կանցկացնեն: Մենք մերժեցինք այդ առաջարկը, քանի որ զգում էինք, որ Տերը կանչում էր մեզ այստեղ:

Հանկարծ Շերոնն սկսեց լաց լինել և արագորեն թերթել իր Աստվածաշնչի էջերը:

Ռասելը մի փոքր անհարմար զգաց իրեն՝ նման այն իրավիճակին, երբ ինչ-որ մեկն անեկդոտ է պատմում, և ոչ ոք չի ծիծաղում:

– Ի՞նչ պատահեց: Դու լա՞վ ես զգում քեզ,– հարցրեց Ռասելը՝ մի փոքր շփոթված Շերոնի տարօրինակ արձագանքից:

– Ամեն ինչ լավ է,– ասաց նրա ամուսինը:– Մենք կբացատրենք դա մի փոքր ուշ՝ երբ ռեստորան հասնենք:

Ոչ ոք հենց այնպես ոչինչ չի տալիս

Երբ բոլորը էլիի ռեստորանում էին՝ Սան Դիեգոյում, Ռասելը մի փոքր լարվածություն էր զգում: Նա այնպիսի զգացողություն ուներ, ասես ինքը դատական քննության էր ենթարկվելու: Երբ բոլորը պատվիրեցին իրենց նախաճաշը, Փեթը դիմեց հավաքվածներին:

– Նրանք, ովքեր ճանաչում են ինձ, գիտեն, որ ես չեմ սիրում երկար-բարակ խոսել. այնպես որ, անմիջապես կանցնեմ բուն նյութին: Մեկ տարի առաջ՝ այս ամսին,– ասաց նա,– մեր եկեղեցի եկան երկու վստահելի մարգարեներ: Նրանք եկան երկու տարբեր առիթներով և գրեթե նույնական մարգարեական խոսք ասացին՝ որ Աստված ավարտել է մեր ծառայության այս փուլը, և որ Նա տալու է մեզ օգնականի պաշտոն մի խոշոր ծառայության մեջ: Նրանք նույնպես ասացին, որ մեզ համար դա առաջխաղացում է լինելու: Տերը հայտնեց, որ Նա ուղարկելու է անծանոթ մարդու, ով կստանձնի այն գործը, որը մենք սկսել ենք, և հաջորդ մակարդակի կտանի այն: Ոչ ոք դեռ չգիտի, բայց վերջերս Վոլի և Մերիլին Հիքիները զանգահարել են մեզ և առաջարկել միևնույն ծառայությունը, որը ինքնաթիռում քեզ

առաջարկել էր այն զույգը: Դա էր պատճառը, որ կինս լաց եղավ, երբ մեքենայի մեջ պատմում էիր քո վկայությունը:

Հանկարծ Ռասելի մտքում ամբողջական պատկեր կազմվեց:

– Երեկ երեկոյան ես աղոթում էի,– շարունակեց Փեթը,– որովհետև ուզում էի իմանալ՝ Տերը ցանկանում էր, որ փակեի՞ եկեղեցին, թե՞ փոխանցեի այն մեկ այլ մարդու: Տերն ասաց, որ բացեի Եզրաս 5.8-ը, որում գրված է, որ Աստծո գործն արագորեն կընթանա և կհաջողվի: Դրանից հետո Տերն ասաց. «Դու կփոխանցես եկեղեցին այն անծանոթին, ում կհանդիպես վաղը»: Եվ այդ անծանոթը դո՛ւ ես,– ասաց Փեթը՝ մատնացույց անելով Ռասելին:

Ռասելը ցնցված էր: նա չէր հավատում իր լսածին:

– Ոչ ոք հենց այնպես ոչինչ չի տալիս,– առարկեց Ռասելը:

– Ո՛չ, սա Աստծո՛ գործն է,– պատասխանեց Փեթը մեծ վստահությամբ:

Հենց այդ պահին Շերոնը հատվածներ մեջբերեց Ամովսի և Հռութի գրքերից՝ ցույց տալով, թե ինչու էր նա կարծում, որ Տերն առաջնորդում էր իրենց, որ հանձնեին իրենց եկեղեցին մեզ: Փեթի և Շերոնի խոսելու ընթացքում Ռասելը տեսավ բոլոր ներկաների զարմացած հայացքները: Մահոնիները ոչ ոքի ոչինչ չէին պատմել այն մասին, ինչ Տերը խոսել էր իրենց հետ: Փոլ և Քերոն Յանգերը քիչ էր մնում՝ ընկնեին իրենց աթոռներից, երբ լսեցին դա:

Դեպքերը զարգանում էին այնպիսի արագությամբ, որ հանկարծ Ռասելն անվստահություն զգաց:

– Ես ուզում եմ, որ բոլորը ճիշտ հասկանան ինձ,– ասաց նա,– որովհետև մենք արժանահավատ մարդիկ ենք: Մենք քարոզում ենք այն, ինչին հավատում ենք: Մենք չենք անում կամ ասում որևէ բան՝ մարդկանց հրապուրելու համար, իսկ հետո սպասում, որ բոլորը հավատան մեզ: Այս առաջարկը մեկ «բայց» ունի. ձեր եկեղեցին Սփրինգ Վելիում չէ, իսկ Տերը խոսել է մեզ հետ Սփրինգ Վելիի մասին:

– Ճիշտ է, այն Սփրինգ Վելիում չէ,– համաձայնեց Փեթը,– բայց ձեր կապը Փոլի և Քերոնի հետ էր, ովքեր ապրում և աշխատում են Սփրինգ Վելիում: Փոլը կապ ստեղծեց ձեր և մեր միջև, և դուք գտաք ձեր կոչումը: Դուք այն մարդիկ եք, ովքեր պետք է հաջորդ մակարդակի տանեն մեր եկեղեցին:

– Չգիտեմ,– պատասխանեց Ռասելը՝ փորձելով դանդաղեցնել այն, ինչ տեղի էր ունենում:

– Սա նման է Եղիայի և Եղիսեի պատմությանը,– շարունակեց Փեթը:

– Բայց Բարբարան և ես չենք ստացել այդ տեսիլքը:

– Ճիշտ է, բայց տեսիլքը կարող է փոխանցվել,– ասաց Փեթը:– Եղիան փոխանցեց իր պատմուճանը կամ, կարելի է ասել, «իր տեսիլքը» Եղիսեին, և Եղիսեն կատարեց Եղիայի արած բոլոր գերբնական գործերը: Իրականում, նրա հրաշքները շատ ավելի մեծ և վստահելի էին Եղիայի գործած հրաշքներից:

Ռասելն զգաց Աստծո ներկայությունը, բայց նա դեռ լիովին համոզված չէր:

– Ես կաղոթեմ,– ասաց Ռասելը:– Իսկ հետո կզանգահարեմ մեր հովվին:

– Ո՞վ է քո հովիվը,– հարցրեց Փեթը:

– Չարլզ Նիմենը էլ Պասոյում՝ Տեխասում:

– Ես լսել եմ նրա մասին,– պատասխանեց Փեթը:– Ես ինքս եմ ուզում զանգահարել նրան՝ ճշտելու համար ձեր ինքնությունը և խոսքերը:

– Խնդիր չկա:

## ԿԱՐԵՎՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ

Մինչև օրվա ավարտը Ռասելն զբոսնեց «Միշն Բեյ» լողափի փողոցներով՝ աղոթելով այդ մասին: Նա իսկապես ցանկանում էր համոզված լինել, որ մենք հետևում էինք Տիրոջ ծրագրին: Որքան ավելի էր նա աղոթում, այնքան ավելի էր համակվում դրական զգացողությամբ, բայց միևնույն է՝ նա ուզում էր համոզված լինել, որ ճիշտ որոշում էր կայացնելու:

Այդ երեկո՝ մոտավորապես ժամը 20:00-ին, Ռասելը որոշեց զանգահարել հովիվ Չարլզի տուն՝ նրա անձնական համարով: Հովիվ Չարլզը շատ խորաթափանց էր հոգևոր հարցերում: Ռասելը գիտեր, որ եթե այդ իրավիճակի մեջ ինչ-որ բան ճիշտ չլիներ, հովիվ Չարլզը կհասկանար դա և կասեր մեզ ճշմարտությունը:

– Հովիվ Չարլզ, ես ուզում եմ մի հարց տալ ձեզ, որովհետև ինձ խիստ անհրաժեշտ է ձեր խորհուրդը,– սկսեց Ռասելը:– Այսօր ես հանդիպեցի մի ամուսնական զույգի, ովքեր մոտավորապես 130 մարդուց բաղկացած համայնքի հովիվներ են: Նրանք ցանկանում են փոխանցել իրենց եկեղեցին Բարբարային և ինձ: Չգիտեմ, թե ինչպես վարվել:

– Չգիտեմ, Ռասե՛լ: Ստուգի՛ր նրանց հաշվապահական մատյանները,– ասաց նա,– և համոզվի՛ր, որ նրանք պարտքեր չունեն:

Ռասելը չէր մտածել այդ մասին: Հաջորդ առավոտյան նա գնաց՝ ստուգելու նրանց հաշվապահական մատյանները: Նա խրախուսվեց՝ պարզելով, որ եկեղեցու բանկային հաշվին բավականին գումար կար, և որ նրանք չունեին ոչ մի ֆինանսական պարտավորություն՝ բացի մի պատճենահանման սարքից: Ամեն ինչ պատշաճ վիճակում էր. *այդ հովիվներն անչափ վստահելի մարդիկ էին:*

Եվ մի փոքր ժամանակ աղոթելուց հետո Ռասելը զանգահարեց հովիվ Փեթին և ասաց.

– Այո՛, ես հավատում եմ, որ սա Աստծուց է: Մենք կստանձնենք եկեղեցու հովվությունը:

Փեթի և նրա կնոջ ուրախությանը չափ չկար:

## ԴՈՒ, ԵՐԵՎԻ, ԿԱՏԱԿՈՒՄ ԵՍ

Երբ ես հեռախոսազանգ լսեցի այդ երեկո, մինչև խոսափողը վերցնելը գիտեի, որ լավ լուր էի ստանալու: Ռասելի ձայնից կարող էի ասել, որ նա պարզապես եռում էր Տիրոջ ուրախությամբ:

– Սիրելի՛ս, մենք հենց նոր եկեղեցի ժառանգեցինք,– ասաց նա:

– Դու կատակո՞ւմ ես,– հարցրի ես:

Ռասելը շատ կատակասեր էր, և ես չգիտեի՝ արդյո՞ք նա լուրջ էր խոսում:

(Երբ Քրիսթին դեռ շատ փոքր էր, Ռասելն ինչ-որ ծիծաղելի բան էր ասում, և աղջիկս նայում էր ինձ՝ ասելով. «Հայրիկը քաշում է տո՞տքս»: Նա դեռ չէր կարողանում ասել «ոտք» բառը: Ես ասում էի. «Այո՛, հայրիկը քաշում է ոտքդ», այսինքն՝ «Հայրիկը կրկին կատակում է քեզ հետ»):

– Ես լուրջ եմ ասում,– ասաց Ռասելը,– Փեթ և Շերոն Մահոնիներն ուզում են, որ դու գաս այստեղ՝ Եկեղեցու Խորհրդին հանդիպելու համար: Նրանք ծրագրում են Խորհրդի արտակարգ նիստ անցկացնել: Հավաքի՛ր իրերդ և որքան կարող ես՝ շուտ այստեղ հասիր:

Նրա խոսքերն ապշեցրին ինձ:

## ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՔՎԵԱՐԿՈՒՄ Է ՄԵՐ ՕԳՏԻՆ

1989 թվականի սեպտեմբերի 6-ին եկեղեցու խորհուրդը նշանակեց մեզ «Ցանք և հունձք» ընտանեկան եկեղեցու նոր հովիվներ, և շնորհիվ հովիվ Վոլի Հիքիի այցելության՝ եկեղեցական համայնքն ուրախությամբ ընդունեց առաջնորդական փոփոխությունը: Մենք կորցրինք ընդամենը մի քանի ընտանիք այդ ընթացքում, բայց կարճ ժամանակ անց արդեն կայուն աճ ունեինք:

Այսօր Աստված կատարում է այն խոստումը, որը տվել էր մեզ: Մենք ոգեշնչված ենք, որ Նա կանչել է մեզ՝ ծառայելու Իրեն որպես «Ցանք և հունձք» եկեղեցու հովիվներ Սան Դիեգոյում: Մենք ուրախ ենք, որ Աստված օգտագործում է մեզ՝ մարդկանց կյանքերը փոխելու համար: Մենք ի սրտե խրախուսում ենք մարդկանց՝ օգտագործել այն ներուժը, որն Աստված տվել է իրենց, և այս կյանքում անել այն ամենը, ինչ իրենք կարող են: Մեր եկեղեցին նույնպես ակտիվ միսիոներական աշխատանք է կատարում, որն ազդեցություն ունի և՛ մեր երկրում, և՛ այլ երկրներում:

## ՄԻ՛ ՀԱՆՁՆՎԵՔ

Ես ուզում եմ խրախուսել ձեզ, որ ձեր կյանքում հասնեք ազատության ավելի բարձր մակարդակի: Արե՛ք այն, ինչ կարող եք: Մի՛ բավարարվեք միջակ կյանքով: Դուք չպետք է մնաք փոսում, որովհետև Աստված ունի ավելի լավ ճանապարհ՝ ավելի բարձր ճանապարհ: Եթե դուք չեք ճանաչում Հիսուսին, ես խրախուսում եմ ձեզ, որ խնդրեք Նրան գալ ձեր սրտի մեջ այսօր: Նա կօգնի ձեզ դառնալ

այնպիսին, ինչպիսին ստեղծել է ձեզ: Ձեր կյանքն ունի նպատակ և կոչում, և դուք պատահականորեն չեք հայտնվել այս երկրի վրա: Եվ այն, որ դուք կարդում եք այս գիրքը, նույնպես պատահական չէ:

Կայացրե՛ք այդ որոշումը հենց հիմա: Փոխե՛ք ձեր կյանքը՝ շրջվելով ձեր ճանապարհից և այլ ճանապարհ ընտրելով: Քայլե՛ք հաղթական ճանապարհով: Քայլե՛ք հաջողության, ոչ թե պարտության ճանապարհով: Քանդե՛ք կործանարար հարաբերությունների շղթաները ձեր վրայից: Ստացե՛ք Աստծո օգնությունը: Աստված սիրո՛ւմ է ձեզ, և դուք յուրահատո՛ւկ եք: Հավատացե՛ք, որ սա ճշմարտություն է: Դո՛ւրս եկեք ձեր փոսից: Հենց հիմա դրեք ձեր ձեռքն այս գրքի վրա և թույլ տվեք աղոթել ձեզ համար:

## ԱՂՈԹՔ

*«Հա՛յր, Հիսուսի անունով, ես ազատություն եմ հռչակում այս գիրքը կարդացող բոլոր մարդկանց կյանքերում: Ես հավատում եմ, որ Քո աստվածային ազատագրումը կգա նրանց կյանքերում: Հա՛յր, Քո Հոգով հայտնի՛ր այն բնագավառները, որտեղ նրանք պետք է փոխվեն: Խրախուսի՛ր նրանց: Զորացրո՛ւ նրանց Քո զորությամբ: Հայտնի՛ր նրանց Քո ծրագիրն իրենց կյանքի համար: Ես հավատում եմ, որ նրանք Քո վերջին ժամանակվա զինվորներն են, որոնց դու կռում ես Քո ձեռքով, որպեսզի կատարեն Քո ծրագիրն այս երկրի վրա: Ես հավատում եմ նրանց ազատագրման, խաղաղության, բարգավաճման և լիության համար՝ Քրիստոս Հիսուսում: Հիսուսի անունով, ամե՛ն»:*

Այսօր ձեր Անկախության օրն է: Դուք ստեղծված եք, որպեսզի վառ լույս լինեք այս սերնդի համար: Որոշո՛ւմ կայացրեք դուրս գալ փոսից այսօր, և թող որ ձեր լույսը շողա Աստծո և Նրա զորությանը ծարավ աշխարհի համար:

# ԴՈՒՔ ՉԵՔ ՍՏԵՂԾՎԵԼ՝ ՓՈՍԻ ՄԵՋ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իր առաջին գրքում Բարբարա Պլիլարը պատմում է այն սարսափելի «փոսի» մասին, որում նա հայտնվել էր մահացու հիվանդության պատճառով: Նա նույնպես ծանոթացնում է մեզ երկու աստվածաշնչյան առաջնորդների հերոսական ընթացքին: Ուսումնասիրելով Դավթի և Հովսեփի կյանքը՝ կտեսնեք այն «ժամանակակից» փոսերը և նեղությունները, որոնցում մենք կարող ենք հայտնվել, և կիմանաք, թե ինչպես դուրս գալ դրանցից: Նա ցույց է տալիս, որ մեր փոսերը կարող են առաջանալ մեր մեղավորությամբ, կամ կարող են հոգևոր էտման ընթացք լինել, որի նպատակը՝ մեզ աստվածային կոչման մեջ տանելն է:

Այս գրքում Բարբարան սովորեցնում է տարբերել փոսը Աստծո ծրագրից: Նա խոսում է դրանցից ամեն մեկի «ախտանշանների» մասին, որոնց թվում են *«ծնազնդի էֆեկտը»*, *խստացված սիրտը*, *օծման ընթացքը*, *ճանապարհը՝ դեպի փոսը*, *աստվածային բարեհաճությունը*, *հնազանդության ուժը*, *Աստծո Ուսումնական զորամասը* և շատ ավելին:

Դուք ստեղծված եք, որպեսզի լինեք վերջին ժամանակվա հավատացյալ՝ Աստծո զինվորը, ով պետք է ցույց տա աշխարհին Հիսուս Քրիստոսի սերը: Այնպես որ, եթե դուք փոսի մեջ եք, եթե ձեզ թվում է, թե դուք փոսի մեջ եք, կամ՝ եթե դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, ով փոսի մեջ է, այս գրքում գտնվող հոգևոր հակաթույնը կբարձրացնի և կհաստատի ձեզ ժայռի վրա, և կվառի այն լույսը, որը կգրավի ձեզ շրջապատող մարդկանց դեպի Աստված: Վե՛ր ելեք դեպի բարձունքները, որտեղ ձեր տեսողությունը կբացվի, և դուք կիրականացնեք այն կոչումը, որն Աստված տվել է ձեզ:



Եթե ցանկանում եք հրավիրել հովիվներ Ռասելին կամ Բարբարային ձեր եկեղեցի, կապ հաստատեք նրանց հետ հետևյալ հասցեով.

Seedtime & Harvest Ministries
P.O. Box 270635
San Diego, California, 92198-2635

Բարբարա Պլիլարն իր ամուսնու հետ հովվական ծառայության մեջ է Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքի «Ցանք և հունձք» եկեղեցում: Նա ավարտել է «Ռեմա» Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը և դասավանդել է Ռոբերտս Լիարդոնի ծառայությանը պատկանող «Հոգևոր կյանք» Աստվածաշնչյան համալսարանում, որը Կալիֆոռնիա նահանգի Էրվին քաղաքում է:



Հովիվ Բարբարան կրակով լցված է Տիրոջ համար՝ սկսած 1979 թվականից՝ այն պահից, երբ Աստծո բժշկարար զորությունը հպվեց նրան: Նա հզոր հավատք ունեցող կին է, ով հրաժարվում է փոխզիջման ենթարկել Աստծո Խոսքի ճշմարտությունը: Բարբարայի նպատակն է՝ փոխանցել Աստծո Խոսքի ճշմարտությունը իր տեղական եկեղեցուն և ազգերին:



Բարբարան հայտնի է որպես Աստծո Խոսքի ազդեցիկ ծառայող: Նրա խիզախ ծառայության միջոցով շատերն են ազատագրվել կապանքներից, ընկճվածությունից, աղքատությունից, հիվանդությունից և ամեն տեսակի դիվային ազդեցություններից: Նրա քարոզները քանդում են հոգևոր ամրությունները և մարդկային ավանդույթները, որոնք անարդյունավետ են դարձնում Աստծո Խոսքը:

Բարբարան հաճախ է ծառայում կանանց համաժողովներին թե՛ իր տեղական համայնքում, թե՛ ամբողջ ԱՄՆ-ում: Նա և ամուսինը ծառայել են մի քանի խոշոր ավետարանչական հավաքույթների ժամանակ: Նրանք ծառայում են մի շարք երկրներում, որոնց թվում են Հնդկաստանը, Չինաստանը, Ռուսաստանը, նաև Եվրոպական և Սկանդինավյան այլ երկրներում:



Հովիվ Ռասել Պլիլարն Աստծո Խոսքի հոյակապ ուսուցիչ է: Ռասելի ուղերձները՝ ուղղված իր տեղական եկեղեցուն և ամբողջ աշխարհին, բարենորոգում, հույս և վերականգնում են բերում Քրիստոսի մարմնին, նաև կյանքեր են փոխում:

Մարդկանց կյանքերը փոխելու ցանկությունը դրդել է Հովիվ Ռասելին՝ իր եկեղեցական համայնքից



ավելի հեռուն գնալ՝ դեպի ազգերը, որտեղ Աստված բացել է դռներ, որոնք ոչ մի մարդ չի կարող փակել: Նա ծառայում է Չինաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Նոր Զելանդիայում, նաև՝ մի շարք Եվրոպական և Սկանդինավյան երկրներում:



Ռասելն ավարտել է «Ռեմա» Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը և դասավանդել է Ռոբերտս Լիարդոնի ծառայությանը պատկանող «Հոգևոր կյանք» Աստվածաշնչյան համալսարանում, որը Կալիֆոռնիա նահանգի Էրվին քաղաքում է:

Դուք կարող եք կապ հաստատել նրա հետ հետևյալ միջոցներով.

**Ռասել Պլիլար**
C/O Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635,
San Diego, CA 92198-2635
Հեռախոս՝ (858) 576-1622
Ֆաքս՝ (858) 576-7389

**Ինտերնետային կայք.** www.seedtime.org
**Էլ. հասցե.** rplilar@seedtime.org



# ԻՆՉՊԵ՞Ս ԴՈՒՐՍ ԳԱԼ ՓՈՍԻՑ

## ԴՈՒՔ ԵՐԲԵՎԷ ԱՅՍՊԵՍ ԶԳԱՑԵ՞Լ ԵՔ ՁԵԶ

***Դուք ստեղծված չեք փոսի մեջ ապրելու համար:***

Իր առաջին գրքում Բարբարա Պլիլարը ծանոթացնում է երկու աստվածաշնչյան առաջնորդների հերոսական ընթացքին: Ուսումնասիրելով Դավթի և Հովսեփի կյանքը՝ դուք կտեսնեք այն «ժամանակակից» փոսերը և նեղությունները, որոնցում մենք կարող ենք հայտնվել, և կիմանաք, թե ինչպես դուրս գալ դրանցից: Նա ցույց է տալիս, որ մեր փոսերը կարող են առաջանալ մեր մեղավորությամբ, կամ կարող են հոգևոր էտման ընթացք լինել, որի նպատակը՝ մեզ աստվածային կոչման մեջ տանելն է:



**ՓՈՍ ԿԱՄ ԾՐԱԳԻՐ** *...դուք փոսի մեջ եք երկու պատճառով... կա՛մ ուշադրություն չեք դարձրել աստվածապաշտ մարդկանց խորհուրդներին և այն զանազանությանը, որը եղել է ձեր հոգում, կա՛մ Տիրոջ Խոսքը ձևավորում և հասունացնում է ձեզ:*



**ՕԾՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ** *...Դավիթն օծվեց որպես թագավոր, բայց գոյություն ուներ ընթացք, որը նա պետք է անցներ: Շատ հաճախ մենք փորձում ենք արագացնել որոշ բաներ մեր կյանքում, որոնց համար Աստված հստակ ժամանակ է սահմանել:*



**ՁԵՐ ԳՈՐԾՆ ԱՆՏԵՍԵԼՈՒ ԿԱՄ ՀԵՇՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ** *... Շատերն այդպես էլ ոչնչի չեն հասնում, որովհետև նրանք միշտ սպասում են, իսկ կանգնած ջրերը կեղտ են հավաքում:*

Դուք ստեղծված եք, որպեսզի լինեք վերջին ժամանակվա հավատացյալ՝ Աստծո զինվորը, ով պետք է ցույց տա աշխարհին Հիսուս Քրիստոսի սերը: Այնպես որ, եթե դուք փոսի մեջ եք, եթե ձեզ թվում է, թե դուք փոսի մեջ եք, կամ եթե դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, ով փոսի մեջ է, այս գրքի «հոգևոր հակաթույնը» կբարձրացնի և կհաստատի ձեզ ժայռի վրա և կվառի այն լույսը, որը ձեզ շրջապատող մարդկանց կգրավի դեպի Աստված: Վե՛ր ելեք դեպի բարձունքները, որտեղ ձեր տեսողությունը կբացվի, և իրականացրե՛ք այն կոչումը, որն Աստված տվել է ձեզ:

«Դուք օրհնված կլինեք՝ կարդալով այս թանկ անձնավորության, կնոջ և ծառայողի գիրքը: Ինչպես Բարբարան, դուք նույնպես կհասկանաք, որ որքան էլ խորը լինի նեղությունների փոսը, Աստծո խորություններն ավելին են»:

– Նենսի Դյուֆրեյն

«... մենք կարող ենք սովորել Բարբարայի մերձիմահ վիճակից և հաղթանակի հասնելու համար կարող ենք կիրառել միևնույն սկզբունքները, որոնք նա կիրառեց»:

– Վիլյամ Վան Քրաուչ



Բարբարա Պլիլարն իր ամուսնու հետ հովվական ծառայության մեջ է Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքի «Ցանք և հունձք» եկեղեցում: Նա ավարտել է «Ռեմա» Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը և դասավանդել է Ռոբերտս Լիարդոնի ծառայությանը պատկանող «Հոգևոր կյանք» Աստվածաշնչյան համալսարանում, որը Կալիֆոռնիա նահանգի Էրվին քաղաքում է:

Հովիվ Բարբարան կրակով լցված է Տիրոջ համար՝ սկսած 1979 թվականից՝ այն պահից, երբ Աստծո բժշկարար զորությունը հպվեց նրան: Նա հայտնի է որպես Աստծո Խոսքի ազդեցիկ քարոզիչ և ուսուցիչ:

Բարբարան հաճախ է ծառայում կանանց համաժողովներին թե՛ իր տեղական համայնքում, թե՛ ամբողջ ԱՄՆ-ում: Նա և ամուսինը ծառայել են մի քանի խոշոր ավետարանչական հավաքույթների ժամանակ: Նրանք ծառայում են մի շարք երկրներում, որոնց թվում են Հնդկաստանը, Չինաստանը, Ռուսաստանը, նաև Եվրոպական և Սկանդինավյան այլ երկրներում:

insight PUBLISHING GROUP